

Լ.Ղ.ՇԻՐԻՆՅԱՆ

**ԳԱՆՁԱՆԱԿ
ՀԱՅ ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ
ՄՏՔԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ**

**ՊԻԱԿ 1
ԷԶԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ 2018

32/47.325)

Զ - 64

հղ.

Լ.Ղ.ՇԻՐԻՆՅԱՆ

5920

**ԳԱՆՁԱՆԱԿ
ՀԱՅ ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ**

ՊՐԱԿ 1

ԷԶԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ



ԵՐԵՎԱՆ 2018

*Տպագրության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ փոփոխության,
տոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ:*

Կազմեց և խմբագրեց՝
Լ.Ղ. Շիրինյան, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խմբագիր՝ S.S. Քոչարյան, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գրախոսներ՝ Հ.Հ. Սուքիասյան, քաղաքական
գիտությունների թեկնածու, դոցենտ
Է.Հ. Օրդուխանյան, քաղաքական
գիտությունների թեկնածու, դոցենտ

**ԳԱՆՁԱՆԱԿԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 100 ԱՄՅԱ
ՀՈՐԵԼՅԱՆԻՆ**

Գանձանակ հայ քաղաքագիտական մտքի և Հայաստանի քաղաքական պատմության/ Կազմեց և խմբագրեց Լ.Ղ.Շիրինյան.- Եր.: Լիմուշ, 2018, ՊՐԱԿ 1: Էջեր Հայաստանի քաղաքական պատմության.- 148 էջ:

Գանձանակը հայ քաղաքական մտքի և Հայաստանի քաղաքական պատմությանը նվիրված օրիգինալ աշխատանքների ժողովածու է, որոնք տրված են խմբագրի հեղինակային մեկնաբանությամբ: Դրանք հիմնականում անհայտ են ինչպես հայ գիտական հանրակցությանը, այնպես էլ ընթերցող լայն շրջանակներին: Ընդամենը, նրանք չեն կորցրել իրենց արդիականությունը մինչև օրս: Տեքստերը ամբողջական են և առանց կրճատակի միջամտության:

Գանձանակը նախատեսված է քաղաքագետների, իրավագետների, պատմաբանների, ռազմավարության իրատապ հարցերով հետաքրքրվողների, մտածող երիտասարդության, ինչպես նաև ընթերցող հանրության համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|-----|
| ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ | 4 |
| ՈԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ. ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՏՈՒԹՅԱՆ | 20 |
| ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՐՊԵՏ ՍՐԲԱՁԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ. Ռուբենի տեսլականը (1906) | 29 |
| ՀԱՎԱՍՏԱՐԱԿՇՈՒԹՅԱՆ «ԱՆՓՈՓՈՒՅ ՕՐԵՆՔԻ» ԳՈՐԾԱՌՈՒԹՅԸ | 35 |
| ՏԱՐՏԱՆԵԼԻ ԱՌԱՍՊԵԼԸ ԿԱՄ ՈՎՁՄԱՎԱՐԱԿԱՆ PR-Ի ԹՈՒՐՔԱԿԱՆ «ՍԵՎ ԽՈՒՈՂԸ» | 83 |
| ՀԱՅՈՑ ՀԱՐՑԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԸ. ՎԱՐԱՆԴՅԱՆ-ԻՐԱՎԱՊԵՏԸ | 92 |
| ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵԼԵՎԷՋՆԵՐԸ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1912-1918, ՄԱՐՏԻ 3) | 107 |
| ԲԱՅ ՆԱՄԱԿ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՌՈՒՍԻՈՑ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ Պ. ՉԻՉԵՐԻՆԻՆ | 123 |
| ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ (ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ) | 132 |
| ԴՈԿՏՈՐ ԵՐՎԱՆԴ ՖՐԱՆԳՅԱՆ. ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՅՔԻ ՈՐՈՆՄԱՆ ՌԻԴԻՆԵՐՈՒՄ | 135 |

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

«Երբ Սուրբ Գրքը
ճիշտ է մեկնարանվում,
դրախդը Հայասրանում է
գրեմվել... Հայասրանում է
առաջինը ջրհեղեղը նահանջել
և աղավալել նսգել»:
ՋՈՐԶ ԳՈՐՂՈՆ
ՔԱՅՐՈՆ

Սկզբունքային նշանակության գիտական յուրաքանչյուր հարցադրում համապատասխան մեթոդի, տվյալ պարագայում ակտուալիզմի սկզբունքի կիրառմամբ, նոր լույս է սփռում պատմական անցյալի իրադարձությունների և նրա ամբողջական ընկալման վրա: Այդպիսին է հայոց հնագույն պետականության որպես անդրենածին (ավտոխտոն) քաղաքակրթական երևույթի գնահատանքը՝ Աստվածաշնչյան հիպոթեզի, գենետիկական և լեզվաբանական տվյալների օբյեկտիվ ընդհանրացումը՝ նրանց լույսի տակ՝ գիտականամերձ հայտնի նենգափոխումների արժուրումը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ Եղեմական այգի, Հայկական լեռնաշխարհ, ավտոխտոն, գենետիկական հատկանիշ, (հայ) պետականություն, հելլենիզմ, (հայ) քաղաքակրթություն:

«Աստված մարդկությանը և մեզ՝ հայերիս մի որոշակի պատված ուներ, – գրում է սոցիալ փիլիսոփա Գևորգ Խրիստյանը, – երբ Եղեմական այգին տնկեց Հայկական լեռնաշխարհում՝ Եփրատ, Տիգրիս և Արարք գետերի ակունքներում¹: Աստված շարունակեց այդ իր մտադ-

րությունը, երբ նոր քաղաքակրթությունը սկսեց Արարատյան երկրից, երբ Նոյան տապանը խարսխեց Արարատի վրա: Այդ պատգամով էր, որ հնդեվրոպական ցեղերի նախահայրենիքը դարձրեց հայկական լեռնաշխարհի և տարածաշրջանի հնագույն կայսրություններից մեկը՝ Արարատյան թագավորությունը կազմավորեց Հայկական լեռնաշխարհում: Այս խորհրդի մեջ պետք է որոնել պատճառն այն իրողության, որ հայ ազգը շարունակում է իր վեց հազար տարվա պատմությունը, երբ իր հետ կյանք սկսածներից շատերը չգոյացան»²: Այսպիսով, լուծվեց երկու փոխկապակցված հիմնախնդիր. առաջինը՝ ցույց տրվեց քաղաքակրթության ծագման օջախներից մեկը³, սահմանվեց հայոց կենսատարածքը:

Սուրբ Գրքի անթերի և ըստ էության անառարկելի տեքստը⁴ հաստատվում է Նորագույն գիտության վերջին տվյալներով՝ գենետիկայի (ծագումնաբանություն, ժառանգականություն) հարուստ ապացուցողական բազայով: Մարդաբան, կենսաբանական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Լևոն Եպիսկոպոսյանը հիշեցնելով, որ «ինչպես էլ լինի գենետիկական հետազոտությունները ամենաանաչառն են և ճշգրիտը», որ իրենց հետազոտությունները կատարվել են ամերիկացիների, էստոնացիների, ռուսների, իրանացիների, անգլիացիների, լիբանանցիների հետ, հաղորդում է, որ հայերը աշխարհում գենետիկորեն լավ ռաումասպիրված ժողովուրդների եռյակում են և պատասխանելով այն հարցին՝ «հայերը ներգաղթյալներ (վերաբնակիչներ) են այլ տարածաշրջաններից («являются ли армяне мигрантами из других регионов»), գրում է. «մեր տվյալներով, հայերը Հայկական լեռնաշխարհի անդրենածին (ավտոխտոն) ժողովուրդն են» («По

¹ Խրիստյան Գ., շարտատանը տարածաշրջանի ցածակիր, «Մասիս», փետրվար 1999:

² «... Հայաստանը նույնպես կարող է որակվել որպես մարդկային մշակույթի օրրաններից մեկը... ոչ որ չի կարող ժխտել Նոյան տապանի մասին նրա խորհրդանշական կարևորությունը...» Lang, David M., Armenia, Cradle of Civilization, London, 1970, p. 9.

³ Աստուածաշնչույն: Մատեն 2ին և նոր Կուսակարանների, Ս. Էջմիածին, 1994, Գրքը Մեկնող: Եղևի պարտեզը, 8-15:

¹ Lord Byron's Armenian Exercises and Poetry, Venice: in the Island of the St. Lazzaro, 1970, p. 8, 10-12.

² Այդ մասին հանգամանորեն տե՛ս Երիթյան Լ.Ղ., Նոր աշխարհակարգը և շարտատանը, Երկրաբանական-քաղաքակրթական ակադեմիա, Եր., 2006, էջ 107; Арцрун А., Армянское нагорье и цивилизация, М., 1999, с. 5-6.

нашим данным, армяне - автохтонный народ Армянского нагорья») (ընդգծումը իմն է. – Լ. Շ.):

Նկատելի է Լ. Եպիսկոպոսյանի ձգտումը՝ հասնել առավելագույն ճշգրտության և սպառիչ պատասխանի արժարժվող հարցերի շրջանակում, և հավանաբար նկատի ունենալով նաև մերօրյա գիտականամերձ նենգափոխիչների (подтасовщики) ինտերնացիոնալ հավաքականությունը, վկայակոչում է միջազգային առաջատար այն գիտական կենտրոնները, որտեղ կատարվել են համապատասխան հետազոտությունները և գրախոսվող պարբերականները, որտեղ տեղի են ունեցել համապատասխան հրապարակումները⁶:

Ավելին, մոլեկուլյար-գենետիկական հատկանիշների միջոցով մենք, շարունակում է Լ. Եպիսկոպոսյանը, վերականգնեցինք հայերի գենետիկական պատմությունը, որը «տեղավորում է» 5000 տարվա ժամանակային հատվածում: Այդ տվյալները վերջերս, հաղորդում է Լ. Եպիսկոպոսյանը, հաստատվեցին հայտնի լեզվաբան Քուենտին Ատկինսոնի (Օքլենդ, Նոր Զելանդիա) կողմից. հայոց լեզվի առանձնացումը ընդհանուր հնդեվրոպական ծաղի բնից կազմում է շուրջ 4,5 հազար տարի: «Իրարից անկախ կատարված գենետիկական և լեզվաբանական հետազոտությունների արդյունքների համընկնումը ապացուցիչ է և սկեպտիկները, և մարտնչող դիվետանտները, – ընդգծում է Լ. Եպիսկոպոսյանը, – հարկադրված են ընդունելու, որ հայերը այդուհանդերձ շուրջ 5000 տարեկան են»⁷:

Մեթոդաբանական նույն մոտեցումը, այն, որ «պատմությունը պետք է հենվի հավաստի տվյալների վրա», լույս է սփռում «արիացիներ» բառի վրա և այն հարցին՝ «ովքեր են արիացիները», պատասխանում է. «Դրանք նրանք են, որոնք հնդեվրոպական լեզուն երկրորդ անգամ Հայկական լեռնաշխարհի տարածք մտցրին, այսինքն նրանք (արիացիները. – Լ. Շ.) եկվորներ են: Նշանակում է, եկվորներ

ենք նաև մենք: Այսինքն, մեզ անվանելով արիացիներ դրանով զգայալ պես կրճատում ենք մեր պատմությունը: Նրան մենք պետք է վեհացնենք մեր հոգու մեջ, իսկ գիտության մեջ պատմությանը պետք է վերականգնել օբյեկտիվորեն»⁸:

Բնական է, որ նոր հարցադրումներ գիտական հզոր պոտենցիալը լույս պետք է սփռի խունացած պատկերացումներ երբևէ հավաստիության շանս չունեցող ճշմարտանման պնդումների, գիտականամերժ խեղաթյուրումների, նենգափոխված տրամաբանական հիմքերով մեխանիկական բխեցումների և նրանց չափորոշչներով ստեղծված դոգմատիկ մտակառույցների վրա: Հարցադրման պահանջների հարկադրանքը պահանջում է հետևապես, նոր թափ հաղորդել հայագիտական հետազոտություններին, մասնավորապես հայոց կենսատարածքում՝ Հայոց փթթոն քաղաքակրթության հազարամյակների պատմական օրրանում ծնված Հայաստանի, որպես պետականության, քաղաքակրթական երևույթի արժևորմանը:

Ուրվագծվող ալգորիթմի⁹ լույսի ներքո նպատակահարմար ենք համարում վերահրատարակել ժամանակին Բոստոնի հոջակավոր «Հայրենիք» ամսագրում Ա. Թ.-ի տպագրած՝ «**Հայ պետականությունը ըստ օտար պատմիչներու**» հոդվածը՝ որպես դարերի խորքը թափանցելու միջոց ուղղված, առաջին հերթին, խորհող մտավորականությանը և կենսական ավյունով լեցուն ուսանող երիտասարդությանը:

⁶ Տե՛ս Արմյանե вместе с евреями оказались в тройке генетически хорошо исследованных народов. – «Новое время», 2013, 30 марта.

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

⁹ Ալգորիթմի քաղաքական տեսանկյունի մասին տե՛ս. Краснов П. И., Алгоритмы политического решения. – Политическая энциклопедия. М. 2000, т.1, с. 39–40.

Եվ այսպես. Լ. Շ.
ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԸՍՏ ՕՏԱՐ ՊԼԱՍՏԻԿՆԵՐՈՒ
Գրեց՝ Ա. Թ.

Դեռ մինչև այսօր կան մարդիկ, որ կթերագնահատեն հայ պետականության տեսակարար կշիռը ընդհանուր պատմության և քաղաքակրթության մեջ:

Հին պատմիչները, սակայն, այլ կարծիքի էին: Որպես հաստատուն բերդ մը, քաղաքակիրթ, կազմակերպված և կարգապահ՝ հին Հայաստանը կերևար Արևելքի հեղինդուկ և վտանգավոր այիքներու մեջն: Սահմանապահ գետի մյուս կողմը օտար քախտախնդիրները կտեսնեին «զինված ձիավորներ, որոնք կարգիլեին գետն անցնել, և ձիավորներն վերև բլուրներու վրա շարքերով կանգնած էին զորքեր, որոնք կարգիլեին դուրս գալ Արմենիա... Ասոնք արմեններն էին»: Իսկ երկրի մեջ խաղաղություն էր և բարեկեցություն: Հայաստան եկած օտարները, եթե թշնամիներ չէին, կվայելեին հայկական անսահման հյուրասիրությունը: «Անոնց ամեն տեղ կգտնեին կերուխում ընելիս և ուրախ... Եվ աս Արմենիան էր»¹⁰:

Այո՞, այդպես էին արմենները, և այդպես էր Արմենիան 400 թվին Քրիստոսեն առաջ: Ամուր սահմաններ, կարգապահ զորք, հարուստ երկիր, զվարթ, աշխատունակ և խաղաղասեր ժողովուրդ:

Տարիներ անցան: Դասական Հունաստանը հեռացավ պատմական բեմեն, բայց տվավ իր վերջին մեծ զավակը՝ Աղեքսանդր Մակեդոնացուն, որ տապալեց 334-331 թվերուն Ք. ա. Պարսկաստանի հզորագույն պետությունը և նվաճեց ողջ Արևելքը՝ հեյլեն մշակույթը տարածելով իր նվաճած երկիրներու մեջ: Հույն ժողովրդավար սկզբունքները, մարդկայնական փիլիսոփայությունը և կրոնը, նուրբ և կենդանի արվեստը քայլվեցան հին արևելյան բռնապետական

սկզբունքներու, անհատի բարոյական իրավունքները ժխտող դավանանքի, ծանր և ճնշիչ արվեստին հետ: Այս երկու մեծ ուժերու հանդիպումեն առաջացավ նոր, հեյլենիստական քաղաքակրթությունը, ուր Արևելքի ճնշիչ ձևերը մեղմացան և գունավորվեցին հեյլեն մշակույթի մարդկայնական գաղափարներով: Այդ նոր քաղաքակրթությանը վիճակված էր իր դրոշմը դնել գալից հռոմեական քաղաքակրթության և քրիստոնեության վրա:

Աղեքսանդր Մակեդոնացու գործունեությունը ունեցավ այդպիսով երկու հետևանք-մեկը՝ ռազմական, որ կարճատև եղավ, և մյուսը՝ քաղաքակրթական, որ խոր և հարատև էր:

Ի՞նչ դիրք բռնեց այս նոր երևույթներուն հանդեպ Հայաստանը: Պատմիչներու վկայությամբ, 331 թվի (Ք. ա.) Գավգամելայի մեծ ճակատամարտին Նինվեի ավերակներուն մոտ, ուր Պարսկաստանը կրեց իր վերջին ճակատագրական պարտությունը, Աղեքսանդրի դեմ պարսիկներու կողքին կռվին մասնակցած էր նաև հայկական զորքը՝ 40.000 հետևակ և 7.000 ձիավոր¹¹: Այն ժամանակվա համար սա պատկառելի ուժ մըն էր:

Հայկական զորքը բաժանված էր երկու մասի. մեկը՝ Մեծ Հայքի, մյուսը՝ Փոքր Հայքի: Հայ զորավարներն էին Օրոնտեսը (երվանդ) և Միթրատատեսը: Այս փաստը բավական է ցույց տալու համար, թե ի՞նչ կարևոր ռազմական դեր կխաղար Հայաստանը Աղեքսանդր Մակեդոնացու օրերուն:

Հայկական զորքը պարտվեցավ պարսիկներու հետ միասին: Սակայն, շնորհիվ այն բանին, որ Աղեքսանդր Մակեդոնացու ճանապարհը Հայաստանի վրայով չէր ընկած, Հայաստան պահեց իր անկախությունը: Աղեքսանդր Մակեդոնացին ստիպվեցավ հատուկ զորաբաժիններ ուղարկել Հայաստան՝ զայն նվաճելու համար¹²: Բայց այս անգամ ևս հայ ազատասիրությունը հաղթող հանդիսացավ: Արդյո՞ք Աղեքսանդր Մակեդոնացին հաջողեցավ նվաճել Հայաստանը: Պատ-

¹⁰ Xenophon, Anabasis, IV, 3, 5. Պատմիչներու վկայությունները կուտան Պատմության թարգմանությանը:

¹¹ Curtius Rufus, III, 2.

¹² Strabo, XI, 14; Arrian, III, 16; Curtius Rufus, VI, 3.

մական տվյալները հակասական են: Աղեքսանդր Մակեդոնացին իր ճառի մեջ կհայտարարեր, որ ինքը նվաճած է Հայաստանը, ինչպես նաև Կապադոկիան և Պափլագոնիան¹³: Աղեքսանդր Մակեդոնացու կայսրության բաժանման ժամանակ, 323 թվին, Հայաստանը բաժին ինկավ մակեդոնացի զորավար Նեոպտոլեմոսին: Բայց անոր մահվրեն հետո, 321 թվին, Հայաստանը արդեն չի հիշատակվի մակեդոնական սատրապություններու ցուցակի մեջ, իսկ 316 թվին Ք. ա. Հայաստանը դարձյալ կկառավարվի քնիկ Օրոնտեսի (Երվանդ) ձեռքով, որը արդեն հանդգնած էր մեծամարտի ելլել 331 թվին Աղեքսանդր Մակեդոնացու դեմ: Ինչպես կերևի, այդ աննկուն զինվորը հաջողած էր, հակառակ Պարսկաստանի խորտակման, պահել Հայաստանի անկախությունը:

Այնուհետև 301 թվին, քաղաքական անընդհատ այեկոծություններու ընթացքին, Հայաստանը դարձյալ կենթարկվի հելլենիստական Սելևկյան կայսրության: Բայց, ինչպես կնկատե մանանդյանը, Սելևկյան «գերիշխանությունն այս լեռնային և դժվարամատչելի երկրի մեջ, ընդհանրապես ավելի անվանական էր, քան իրավական: Ճանաչելով Սելևկյան թագավորներուն իբրև գերագույն պետ՝ Մեծ Ասպըր, ըստ երևույթի՝ նաև Ծովիքը, պահպաներ էին իրենց ներքին ինքնուրույնությունը և կկառավարվին քնիկ իշխաններու ձեռքով, որոնք սկզբնաղբյուրներու մեջ կանվանվեն երբեմն թագավորներ»:

Ֆրանսացի ակադեմական Ռ. Գրուսսեն կգրե Հայաստանի այդ դիմադրական ուժի մասին.

«Հայաստանը գլխավորող պարսկահայկական վարչական տարրի այդ հարատևությունը հետաքրքրական փաստ է: Այդ երկրի համար տեղական ինքնուրույնության առաջին գրավականն էր այդ: Անկասկած, նաև Մակեդոնյան կայսրության վերջնական բաժանման ժամանակ 301 թվին հայկական սատրապությունը մտավ Սելևկոսի բաժնի մեջ: Ասկայն, Հայաստանը փաստորեն առաջին մակեդոնյան

նահանգը եղավ, որ ազատվեց Աղեքսանդրի հաջորդներու իրական իշխանութենեն»¹⁴:

Այս բոլորեն կհետևենք, որ Հայաստանը զերծ մնաց հելլենիստական ռազմական-քաղաքական տիրապետումեն:

Արդյո՞ք Հայաստանը զերծ մնաց հելլենիզմի մշակութային ազդեցութենեն: Անշուշտ, ոչ: Բայց դժվար է այսօր որոշել այդ ազդեցության չափը: Հայաստանի հնագույն հիմքի վրա, որն ինքն արդեն լրիվ արևելյան չէր, ծծված ըլլալով հիթիթական, ուրարտական և փոյուգական հյութերով, սկսվեցավ շերտավորվել հելլենիզմը: Հույն գրականությունը, փիլիսոփայությունը, արվեստը մուտք գործեցին Հայաստան: Ըմբոստանալով հելլենիզմի քաղաքական տիրապետության դեմ՝ Հայաստանը սկսեց յուրացնել հելլենիզմի լավագույն կողմը՝ մշակույթը: Բայց արևելքեն կշարունակեր ներգործել Պարսկաստանը: Եվ տարբեր կողմեն եկող այս հոսանքները կկերպարանափոխվեին զորեղ հայ անհատականության միջոցով՝ նոր թռիչք տալու համար հայ քաղաքակրթությանը:

Հայաստանը շրջապատող մյուս երկիրները չունեցան այդ կուտ անհատականությունը: Ենթարկվելով հելլենիզմի ռազմական տիրապետությանը, ստեղծագործող ծիրքերեն զուրկ, անոնք դարձան ամուլ քաղաքական խաղերու թատերաբեմ և անոնց մեջ ծաղկած մշակույթը կորավ անհետ:

Երբ Աղեքսանդրի կտոր-կտոր եղած կայսրության ժառանգորդները կշարունակեին պայքարը իրարու դեմ, Հայաստանը մնաց խաղաղ ապաստարան մը, ուր քաղաքական տարագիրները օգնություն կգտնեին՝ իրենց երկրի անկախությունը վերականգնելու համար:

Այսպես, կպատմե Դիոդորը.

«Երբ Արիարաթն այստեղ հաղթվեցավ (մակեդոնացիներեն) և ընկավ ճակատամարտի մեջ, Կապադոկիան, թե՛ ինքը և թե՛ սահմանակից երկիրները անցան մակեդոնական իշխանության տակ:

¹³ Curtius Rufus, VI, 3.

¹⁴ Մանանդյան, Քննական տեսության համաձայն հայ ժողովրդի պատմության մեջ, 93, 102: Grousset, Histoire de l'Arménie, էջ 79:

Իսկ... նախկին թագավորի որդին, հուսահատության հասնելով այս անցքերու պատճառով, փախավ քչերու հետ Արմենիա: Քանի մը ժամանակ հետո... ան, վերցնելով զորք արմեններու թագավոր Արդոստեսեն, մակեդոնացիները անհապաղ դուրս վտարեց երկրեն և տեր դարձավ իր հայրենի իշխանության»¹⁵:

Ասիկա տեղի էր ունեցած մոտավորապես 270–260 թվին Ք. ա.: Ալեկոժվոլը քաղաքական ծովի մեջ Հայաստանը առաջվան պես կբարձրանար՝ հաստատուն, խաղաղ, ուրիշներուն որպես փարոս ներկայացող:

Պոնտոսի թագավոր Միհրդատը իրավունք պիտի ունենար հպարտորեն ըսելու հետո, Ա. դարուն Ք. ա., իր և իրեն բարեկամ պետություններու մասին. «որ ան ինքը այնպիսի երկիրներու թագավոր է, որոնք ոչ միայն հավասար են հռոմեական պետությանը, այլև կարող են դեմ հանդիման կանգնել նույնպես և Մակեդոնականին: Իր հպատակ ժողովրդներն և ոչ մեկը կրած չէ օտար իշխանություն. անոնք միշտ հնազանդվեր են տեղական միայն իրենց թագավորներուն: Եթե կուզեն, թող ընտության առնեն Կապպադոկիան կամ Պամփլագոնիան, Պոնտոսը կամ Բյուքանիան, նմանապես և Մեծ Հայքը կամ Փոքր Հայքը: Այդ ժողովրդներն և ոչ մեկին ձեռք չէին տված ոչ ինքը Աղեքսանդրը, որ նվաճեր էր ամբողջ Ասիան, ոչ ալ ուն մեկը անոր հաջորդներն կամ հետնորդներն»¹⁶:

Ավա՛ր, Միհրդատը չէր գիտեր, որ իր թված պետություններն միայն Մեծ և Փոքր Հայքերը պիտի ապրեին դեռ դարեր: Հայաստանը շրջապատված ըլլալով իրմե ավելի հետամնաց ժողովրդներով, սկսեց իր ազդեցությունը տարածել անոց վրա. – «Կպատմեն, որ Արմենիան եղեր է առաջ փոքր և մեծացեր է Արտաշեսի և Ջարեհի ձեռքով, որոնք նախապես Անտիոքոս Մեծի¹⁷ զորավարներն էին և անոր անկումն հետո թագավորեցին... Ասոնք ընդարձակեցին իրենց երկիրներու

սահմանները և գրավեցին շրջակա ժողովուրդները»...

Ստրաբոնը կթվե այդ շրջանները, որոնք կազմեցին պատմական Հայաստանի հայտնի նահանգները, և կավելցեն. «Այնպես որ բոլորը միալեզու եղան»¹⁸:

Ասոնք չափազանց կարևոր տողեր են: Ստրաբոնը ցույց կուտա, որ Գ.–Ք. դ. Ք. ա. Հայաստանը դարձած էր խոշոր պետություն և, որ զլխավորն է, այդ պետության բոլոր շրջանները «միալեզու» եղած էին: Այսինքն՝ հայ լեզուն, ուրեմն և հայ մշակույթը այնքան զորեղ էին, որ կարողացած էին գերիշխել ընդարձակ երկրամասերու և տարրեր գեղերու վրա: Ռ. Գրուսսեն կնկատե. «Այդ առաջին անգամն էր, որ հայ ժողովուրդը, մինչ այդ ետնարկված մեղա–պարսկական գերիշխանության, իսկ հետո գոնե տեսականորեն, հունական գերիշխանության, հաստատեց իր կատարյալ անկախությունը»¹⁹:

Հայաստանի հաղթանակը հետևանքը չէր այն կարճատև և ավերիչ ռազմական արշավանքներուն, որոնք սովորական էին հին Արևելքի համար: Հայ քաղաքակրթության և հայ պետականության մնայուն հաղթանակն էր այդ, բարձրագույն հաղթանակը, որուն կարող է ձգտել բարձրագույն կարողություններ ունեցող ժողովուրդը:

Ստրաբոնը կավելցեն նաև մեկ ուրիշ կարևոր դիտողություն Փոքր Հայքի և Ծոփքի մասին.

«Փոքր Հայքը բավական պտղաբեր երկիր է: Այստեղ ևս, ինչպես և Ծոփքի մեջ, երկիրը միշտ կկառավարեին սեփական իշխանները, որոնք կամ բարեկամ ու դաշնակից էին մյուս արմեններուն և կամ իրենց գործերը կվարեին առանձին և անկախ:

«Փոքր Հայքն իրեն կիպատակեցներ խալդայները և տիբարենները, այնպես որ անոր իշխանությունը կտարածվեր մինչև Տրապիզոն և Փառնակիա»²⁰:

Այս տողերն պարզ կերևի, որ Փոքր Հայքը և Ծոփքը կազմա-

¹⁵ Diodori Bibliotheca Historica, XXXI, 19, p 4–5.

¹⁶ Justini, Epitoma Historiarum Philippicarum Pompeii Trogi, XXXVIII, 7.

¹⁷ 223–187 թ. Ք. ա.:

¹⁸ Strabo, XI, 14.

¹⁹ Grousset, Hist., p 81.

²⁰ Strabo, XII, 3.

կերպված էին որպես ինքնուրույն պետություններ և միաժամանակ պետական համագործակցություն էին հաստատած մյուս «արմեններուն» հետ, որպես մեկ միասնական հայ քաղաքակրթության քաղաքիչ մասերը:

Ստորաբնի խոսքերը կուրվագծեն մեր առջև, կարծես, նախնական դաշնակցային (ֆեոդերաթիվ) պետության մը պատկերը, ինչքան ալ անհամապատասխան ըլլան այդ հին հայկական կազմակերպությունները մեր այսօրվա պետական հասկացողություններուն:

Տարբերությունը նախ և առաջ այն էր, որ, չնայած քաղաքակրթության նույնության, այդ երեք հայ պետությունները չունեցան ընդհանուր և միասնական ղեկավարություն: Պետական համագործակցությունը և համերաշխությունը միայն ժամանակավոր բնույթ կկրեր: Երեք պետություններու շահերը հաճախ չէին համընկներ: Հայաստանը նոր էր դուրս եկած տոհմատիրական կարգերեն և, կազմակերպվելով որպես պետություն, չէր իրականացրեր այդ պետության միասնականությունը:

Բայց ինքը միասնականության գաղափարը արդեն գոյություն ուներ: Միայն աննպաստ քաղաքական պայմանները արգելք կըլլային անոր կենսագործման: Այդ կհաստատուի նաև Հ. Մանանդյանի հետաքրքիր և խոր վերլուծումով:

Մանանդյանը սկիզբը շատ խիստ կմոտեն խնդրին և կճշտե համապետականության գոյությունը այդ ժամանակվա Հայաստանի մեջ, իսկ հետո կընդունե անոր գոյությունը որպես գաղափար: Հետևիքը Մանանդյանի ըսածներուն.

«Հայաստանում և Կապադոկիայի հյուսիս-արևելքում կազմվել էին... երեք հզոր թագավորությունների առաջացումը քաղաքական տեսակետից մի նոր դարազույս է կազմում հայ ժողովրդի պատմական անցյալում»:

Սակայն, Մանանդյանը կնկատե, որ այդ երեք թագավորությունները չունեցան միասնական պետականություն: «Հայաստան երկիրները պետական կազմավորումն ու քաղաքական հզորացումն ուներ մի

շատ թույլ կազմ: Նրանք հենց սկզբից չկազմակերպվեցին իրեն պետական միախար մի ամբողջություն, այլ բաժանվեցին արևմտյան, հարավ-արևմտյան և հյուսիս-արևելյան ինքնիշխան մասերի, որոնք հաճախ իրար դեմ կռիվներ էին մղում: Այս երեք թագավորություններից յուրաքանչյուրն ուներ իր սեփական կենտրոն-մայրաքաղաքը, իր տեղական ավանդությունները և իր տնտեսական ու քաղաքական առանձին շահերը: Եվ միանգամայն հասկանալի է, իհարկե, որ արմենների ցրվածությունն ու այս բաժանումը արգելք էին հանդիսանալու նրանց ընդհանուր ու համերաշխ գործակցության»:

Բայց, չնայած այս խիստ տողերուն, Մանանդյանը կընդունե միասնական հայ պետության գաղափարի գոյությունը, երբ կգրե.

«Արմենական երկիրների միացման կարևորությունը, հավանորեն, գիտակցվել է առավելագույնս նրանք քաղաքական վերելքի շրջանում: Հայտնի է, որ Արտաշես Ա.-ը, որը... անչափ ընդարձակել էր Մեծ Հայքը, ուզեր էր նվաճել հարևան Ծոփքը: Սակայն, Մեծ Հայքի զորեղացումը և արմենական երկիրների միացումը ցանկալի ու հանդուրժելի չէին Կապադոկիայի ու Պոնտոսի համար»¹¹:

Եվ Հայաստանը շրջապատող օտար ժողովուրդներու քաղաքական խաղերը խոչընդոտ հանդիսացան այս անգամ, ինչպես և շատ ուրիշ անգամներ, Հայաստանի միավորմանը: Ոչ քաղաքական կազմակերպման ընդունակությունը և ոչ ալ միասնականության գաղափարը կպակսեին հայերուն: Ավելի նպաստավոր քաղաքական պայմաններու մեջ հայ միասնական քաղաքակրթությունը պիտի ունենար և միասնական պետականություն:

Տարիներ անցան: 94 թվին Ք. ա. հայկական պետությունը ժառանգեց Տիգրան Ք.: Անոր անվան հետ կապված է Հայաստանի անխախտ թագ նոր վերելքը: Օգտվելով նախկին հելլենիստական շերտավորումների՝ Տիգրանը հաջողեցավ ավելի ամրորեն ու հարստառուն կապել Հայաստանը արևմտյան-հելլենիստական քաղաքակր-

¹¹ Մանանդյան, «Քնն. պատմ.», էջ 118-120:

թոյթանը: Թեև Տիգրանի ստեղծած ընդարձակ կայսրութիւնը կործանվեց, բայց հելլենիզմով բեղմնավորված հայ մշակույթը մնաց: Այնուհետև այդ մշակույթն ալ վերամշակվեց հայկական մշտնջենական դարբնոցի մեջ և անկե դուրս եկավ մարդկութեան առաջին քրիստոնեական արվեստը: Չկային այլևս Պոնտոսը, Կապպադովկիան, Պափլագոնիան: Պարսկաստանը, պահ մը, տատանվելով Արևմուտքէն եկած հելլենիզմի և քարացած Արևելքի միջև, վերջնականապէս մնաց Արևելքին: Այլորհաս, կարճատև և չքնաղ քրիստոնեական ծաղկումն հետո, նորէն անհայտացավ: Միայն Հայաստանը մնաց որպէս պետութիւն և քաղաքակրթութիւն:

Դարեր անցան: Եվ 1000 թվին, երբ Արևմուտքը սարսափահար կսպասեր աշխարհի կործանմանը, Հայաստանը, միշտ հենված հելլենիզմի վրա և միշտ վերամշակելով արևելյան մշակույթներու լավագույն կողմերը, արդէն բացած էր նոր էջ մը ևս՝ ավատական-միջնադարյան արվեստը: Երկիրը բաժան-բաժան էր եղած ներքին կոիվներու հետևանքով: Հայ նախարարները, ինչպէս և Եվրոպայի ֆեոդալները, հաճախ միայն իրենց անձնական շահերը կհետապնդէին: Արտաքին թշնամին կոչչնացնէր ամեն ինչ: Բայց թշնամին կարողացավ միայն ֆիզիքական ոչնչացում իրագործել: Ան պարտվեցավ հայկական հոգեկան արժեքներու առջև: Չնայած իրենց երկպառակութիւններու, հայ իշխանութիւնները կարողացան հերոսաբար պահպանել հայ միասնական քաղաքակրթութիւնը:

Եվ, որ ամենէն կարևորն է, հայ քաղաքակրթութիւնը մնաց միշտ արևմտյան իր ոգով: Հայ քաղաքակրթութեան մեջ մենք չենք գտներ Արևելքին յուրահատուկ կրավորական վերաբերմունքը դեպի աշխարհը և ոչ ալ մարդու դատողութիւնը ճգմելու չափազանց զորավոր ձգտումը: Հայը միշտ մնաց իր արվեստի մեջ զգաստ, դատող, գործունյա, մարդկային: Այդ իմաստով Հայաստանը եղավ հելլենիզմի միակ հավատարիմ զավակը, որը հունական մարդկայեանման քաղաքակրթութիւնը հասցրեց մինչև Միջնադար: Ըիշտ է, թե ուրիշ քրիստոնեա ազգեր, սնվելով նոյն հելլենիստական արմատներէն,

կերտեցին մեծ քաղաքակրթութիւններ: Բայց հայ քաղաքակրթութիւնը եղավ հարատև, հակառակ քաղաքական անկախութեան կործանումներու:

Ինչ տարօրինակ պատմական հակասութիւն: Հայաստանը միակը Արևելքի մեջ ժամանակին ընդդիմացավ Աղեքսանդր Մակեդոնացու ռազմական արշավանքին: Բայց Հայաստանը միակը եղավ ևս, որ խորապէս, խաղաղորեն և տևական կերպով յուրացրեց Աղեքսանդր Մակեդոնացու հետ Արևելք եկած Արևմտյան մշակույթը:

Հայ պետականութեան, հայ քաղաքակրթութեան զգացմունքը վերապրեց դարավոր այնպիսի պայմաններու մեջէն, որոնք մահացու պիտի ըլլային և եղան մահացու՝ ավելի թույլ ազգերու համար:

ՈՒՆԵՑԵԼ ԵՆ ԱՐԴՅՈՒՔ ՀԱՅԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԿԱՄ «ՀԱՅԻ ՀԱՎԱՏԱՄՔԸ ԿԱՄ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆԸ»

XIX դարի երկրորդ կեսերին հայ ժողովրդի տարբեր հատվածներ թանակոխեցին իրենց էվոյուցիայի տարբեր հանգրվաններ: Եւոյն ժամանակաշրջանում իրատապ դարձավ արևմտահայության կյանքի բարվոքման և, հեռանկարի մեջ, ազատագրման հարցը: Այս շրջանում էր, որ հայկական հարցը արձարծվեց բախտորոշ երկու պայմանագրերում՝ 1878-ի Սան Ստեֆանոյի նախապայմանագրի 16-րդ հոդվածում և եւոյն թվականի Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածում: Ինչպես առաջինի, այնպես էլ երկրորդի պարագայում՝ հայությանը սպասում էր խորը հիասթափություն: Տվյալ պայմանագրերը չիրականացրեցին հայության անգամ նվազագոյն սպասելիքները:

Սակայն ստեղծված իրողությունը չէր նշանակում, թե հայության ավանգարդը դադարեցրեց ազատագրության ուղիների որոնման օջանքերը: Ամենևին, ո՛չ: Հայ քաղաքական ընտրանին և միտքը հայոց ուստաններից մեկում Վանում, ծնեց 1885 թվականին ԱՐՄԵՆԱԿԱՆ կուսակցությունը, որը, եղավ ՇՐՋԱՐԱՐՁԱՅԻՆ կետ Հայաստանի քաղաքական պատմության մեջ²² :

Ասվածի համատեքստում առանձնանում է իրապարակախոս և բանաստեղծ Ռափայել Պատկանյանը (1830-1892), ով, Ե. Շահազիզի հաղորդմամբ, 19-րդ դարի «50-ական թվականներից նպատակարարվել էր գրել Հայ ժողովրդի համար գաղափարական ուղենիշ հանդիսացող երկ»²³: Հայաստանի քաղաքական ազատագրության և երկրում հաստատվելիք կարգերի երկ. դժվար է ասել, թե ինչու Ռ. Պատկանյանը նախատեսված երկը չգրեց, սակայն առաջադրեց

մեր օրերի հասկացողությամբ հայեցակարգ, Հայաստանի ստեղծման ծրագիր-առաջադրանք, որն էլ եղավ «Վարդապետարան Հայաստանի ազատության (1889թ.) կատախեզը [*կարախեզիս*՝ որևէ ուղղության՝ ուսմունքի հիմնական սկզբունքների շարադրանք]:

Հայտնի է, որ «Վարդապետարանի» տպագրությունը իրականացրել է Մկրտիչ Փոթթուզյանի հիմնադրած «Հայոց հայրենասիրական միությունը» (1885թ.)՝ ք. Մարտեի, Ֆրանսիա) և ըստ էության այն դառնում է տվյալ միության ծրագիրը, քանիզ «Ռափայել պատկանյանի երկը արտացոլում էր արմենականների գաղափարաբանությունը»²⁴:

[Վերջում նշենք, որ պատմագրության մեջ կարծիք կա, որ «Վարդապետարանը» գրել է Ռափայել Պատկանյանը, հայ ազատագրական պայքարի «գլխավոր ուսիլիդա» Մկրտիչ Փոթթուզյանի խնդրանքով²⁵:

²²Այդ մասին հանգամանորեն տե՛ս *Արմենական կուսակցություն -130*: Գիտաժողովի կոլեքթիւ, Եր., 2017, էջ 10-20:

²³Տե՛ս *Օճակյան Ա.* Ռափայել Պատկանյանի իրապարակախոսությունը, Եր., 1981, էջ 185:

²⁴ Եւոյն տեղում, էջ 186:

²⁵ Տե՛ս *Համբարյան Ա.Ա.*, Հայ հասարակական քաղաքական միտքը Արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Եր., 1990, էջ 73:

**ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎԱՆՈՒԹՅԱՆ**

1889 Թ. ք. Մարտել

Ամո՞թ, հավիտենակա՞ն ամոթ հայերին:

Կիսազգազան սևամորթ ստրուկը հիմնեց յուր անկախ Լիբերիա պետությունը, ու դարերով հալածված ջիուղը փողի ուժով իրեն սեփականություն դարձուց Պաղեստինի երկու հինգերորդ մասը, իսկ անոգ հայերը իրենց հարազատ դրավատ Հայաստանի մեջ մեկ թիզ անկախ խորշ չունին...

Հարց. Ո՞վ պիտի ազատե Հայաստանը օտարների ձեռքեն:

Պատ. Ինքը հայ ազգը պիտի ազատե Հայաստանը օտարների ձեռքեն:

Հ. Ի՞նչ հնարքներով:

Պ. Հնարքները զանազան են, նայելով հանգամանքներին - երբեմն սեփական զենքով, երբեմն փողով ու երբեմն օտարի օգնությամբ:

Հ. Մի՞թե կարող է Հայաստանը երևիցե հայերի սեփականությունը դառնալ:

Պ. Այո՛, կարող է. և անշուշտ կդառնա նա հայերի սեփականություն, եթե բոլոր հայերը՝ այր ու կին, հարուստ ու արքատ, տեր ու պատանի այնպես բաղձան ու ձգտին Հայաստանի ազատության, ինչպես քաղցածը ձգտում է հացին ու ձարավածը՝ ջրին:

Հ. Ո՞ր երկիրը կոչվում է Հայաստան:

Պ. Հայաստան կոչվում է այն երկիրը, որն շրջապատում է Սևան, Վան և Ուրմիա ծովակները, իսկ ամենը միասին՝ Մասիս լեռները:

Հ. Ո՞վ է հայի թշնամին ու ո՞վ է նորա բարեկամը:

Պ. Հայի թշնամին նա է, որ աշխատում է հայերին հեռացնել Հա-

յաստանեն ու սուտ արհավիրքներով վիատեցնում է նոցա այդ ազգաշնե գործու: Իսկ նորա բարեկամը նա է, որ դյուրացնում է նոցա կամ իրենց աշխարհը վերադառնալու, կամ հորդորում է յուր աշխարհի մեջ հաստատուն մնալու:

Հ. Ո՞վ է իսկական հայը:

Պ. Իսկական հայը նա է, որ անկեղծ կըրձա ու կնպաստե Հայաստանի անկախության: Մնացյալները արմյաշկաներ են, այսինքն՝ ոչ միայն անպիտան հայեր, այլև անպիտան մարդիկ:

Հ. Ո՞ր աշխարհի մեջ հայը կարող է երջանիկ լինել:

Պ. Հայը երջանիկ լինել կարող է միայն Հայաստանի մեջ, վասընզի նա ամեն տեղ հալածված ու արհամարհված պանդուխտ է, և միայն Հայաստանի մեջ նա պատվավոր մարդ է մարդկության աչքում:

Հ. Հայերը Հայաստանեն դուրս որի՞ն են նմանու:

Պ. Հայերը Հայաստանեն դուրս նմանում են օտարի տուն վարձողին, որն աշխատում է զարդարել այն տան պատերը, որից վաղ կամ ուշ դուրս պիտի ձգե նորան օրինավոր տանտերը:

Հ. Ի՞նչ վիճակի կհանդիպին հայերը, եթե Հայաստանը չազատեն:

Պ. Եթե հայերը Հայաստանը չազատեն, նոքա շատ շուտ (գուցե հիսուն տարիեն) քնացիկ կլինին աշխարհի երեսեն:

Հ. Մի՞թե հարստությունը չօգնիլ հայերին պահպանվելու օտարության մեջ:

Պ. Օտարության մեջ աղքատությունը անշուշտ կմաշե հայերին, քայց ավելի շուտ կմաշե հարստությունը:

Հ. Ի՞նչ զանազանություն կա հպատակի և ստրուկի մեջ: Հայերը օտար պետությունների հպատակ են, թե՞ ստրուկ:

Պ. Հպատակ նշանակում է յուր ազգային կառավարության ու նորա օրենքներին կամավոր հնազանդող: ստրուկ նշանակում է օտար պետության և նորա օրենքներին ակամա, բռնի և կամ հիմարաբար հնազանդող: Հայերը ամեն օտար պետությունների ստրուկ են, քանզի նոցա օրենքների հորինելուն անմասն են եղել, և ամեն տեղ հայի դավանած կրոնը ընկճված է և նորա ազգային ծեսերը հալածված ու ար-

համարված են:

Հ. Առանց վտանգի իՆչ ազգասիրական գործեր կարող է կատարել ամեն մի հայ մարդ:

Պ. Յուր անձը վտանգի չենթարկելով ամեն հայ մարդ կարող է և պարտավոր է այս գործերը կատարելու:

1) Հայաստանի մեջ ունենալ (այս ամենազվախալորն է) մեծ կամ փոքր հողային կալված.

2) հայ ոգով դաստիարակել զավակացը:

3) սովորեցնել նոցա զենքի գործածությունը:

4) չամուսնանալ օտարի հետ:

Հ. Որո՞նք են հայկական առաքինությունները:

Պ. Ամենազվախալոր հայկական առաքինությունն է.

1) տնով-տեղով գաղթել դեպի Հայաստան.

2) յուր բոլոր ուժը թափել՝ հորդորել յուր ծանոթ հայերին չվել Հայաստան.

3) համոզել և օգնել ամեն մի հայի Հայաստանի մեջ սեփական անշարժ կալվածք և հող գնելու:

4) ջանալ Հայաստանի մեջ արվեստական և հողագործական դպրոցներ հիմնելու:

Հ. Որո՞նք են հայկական մոլորությունները:

Պ. Ամենազվախալոր ու ազգակործան հայկական մոլորությունն է աշխարհաբաղաբացիությունն, 2) պանդխտություն, 3) անձնական շահի համար պեսպես խարդախություններ, որով կտրուվում է հայ ազգի անունը, 4) շահասիրական ազգասիրություն (կեղծի ազգասիրություն), 5) հայ մեծավորների դեմ ըմբոստություն (դավաճանություն, մատնություն) ու 6) օտարի հետ ամուսնություն:

Հ. ԻՆչ խոսքեր հայոց լեզվեն դուրս պիտի ձգել:

Պ. Հայոց լեզվեն առմիշտ պետք է դուրս ձգել վիատեցուցիչ, հուսահատական, ազգի վարկը ստորացնող, խորամանկություն (աչքակապություն) սերմանող խոսքերը, առածները, խրատները և խորհուրդները՝ Հայը թակե Վարդանին, թուրքը թակե Վարդանին, Որտեղ հայ, այնտեղ վայ, Էլի հայություն արիր (այսինքն՝ դարձյալ ամենա-

վատթար գործ գործեցիր), Հայի տունը քանդողը մեր սևագլուխներն են, Հաստ ու բարակ է մեկ գին, վա՛յ է բարակ մանողին, Հայերը անմիաբան են:

Հ. Առավուտ ու գիշեր իՆչ աղօթք պիտի անե հայը:

Պ. Հայը ընեն զարթնելիս, կամ ըուն մտնելիս, միայն այս աղօթքը պիտի կարդա՝ Ո՛վ բարեգութն Աստված, օգնե ինձ Հայաստանը ազատելու: Դորանից ավել ոչ մի ուրիշ աղօթք հարկավոր չէ հային:

Հ. Հայ պատանիների համալսարան մտնելը կնպաստե՞ հայկական նպատակներին:

Պ. Այժմ հայ պատանիների համալսարան մտնելը՝ վերաբերմամբ հայոց նպատակներին՝ այն նշանակությունը ունի, ինչ նշանակություն որ կունենար ավագակե հենց վրադ հարծակված թուպին կամենայի որ սուրի ու զենքի գործարաններ շինելու: Այս մասին հայերը առ սակավը հարյուր տարի ուշացել են:

Մյուս կողմանե 40-50-ամյա փորձը ցույց տվավ, որ համալսարանների տված արդյունքը հայ պատանիներին դոքա էին՝ 1) դյուրին միջոց ապրուստ ճարելու ու ասպարեզ շինելու և 2) անզգայի կերպով ստեղծելու յուր ազգեն ու հոգով օտարանալու նորա շահերեն: Իսկ եթե կան մի քանի իսկապես արժանավոր հայ համալսարանականներ, պետք է կարծել, որ նոքա առանց համալսարան մտնելու ևս ազգի պիտանի անդամները կլինեին, ինչպես որ կան ազգի մեջ շատ նշանավոր մարդիկ, որոնք երբեք համալսարան եղած չեն: Պետք է ի նկատի ունենալ և այն հանգամանքը, որ այժմվա համալսարանները և նույնիսկ գիտությունը դարձել են րոնակալների ձեռքումը ազգեր ստրկացնելու հզոր գործիչ:

Հ. Գալոց ազատված Հայաստանի մեջ ազնվականություն, ժառանգական տիտղոսներ, մեծամեծ հողային կալվածատիրություն պիտի լինի՞ն, թե ո՛չ:

Պ. Այո, պիտի լինին ժառանգական տիտղոսներ, մեծամեծ հողային կալվածատիրություն պիտի ստանան նոքա՝ կամ նոցա ժառանգները, որոնք առաջինը կբարձրացնեն սուրը Հայաստանի ազատության համար ու կամ կզրկվին կլանքներեն արյան դաշտի մեջ: Այս-

պիսիք (ու միայն այսպիսիք) կկազմեն Հայաստանի բարձրագույն ու ամենահարուստ (հողային կալվածներով) դասակարգը:

Շ. Ո՞րն է հայի նշանաբանը:

Պ. Հայի նշանաբանը այս երեք բառն է՝ ազատություն կամ մահ:

Հ. Հայաստանը կարժե՞ այդքան մեծամեծ զոհերի:

Պ. Այո, Հայաստանը կարծե ամենամեծ զոհերի, վանսզի նորա մեջ կեցող կյանքի տևողությունը միջին թվով է 75 տարի, Հայաստանի հողը մշակողին տալիս է մեկ ցանաձ սերմնահատի փոխարեն 45-60 սերմնահատ: Հայաստանի մեջ վազած աղբյուրների կեսը հանքային՝ բժշկարար ջրեր ունին. Հայաստանի դիրքը միջաշխարհային է, այսինքն Ասիայի ու Եվրոպայի սահմանագլուխներում. Հայաստանի ժողովուրդն եթե չլինի ազգերի մեջ ամենահզորը, գեթ նա կլինի ամենահարուստը ու ամենաբախտավորը: Հայաստանը հարուստ է և՛ կենդանիներով, և՛ բույսերով, և՛ հանքերով:

Հ. Ի՞նչ պատճառով Հայոց անկախությունը չորս անգամ կորավ:

Պ. Հայերի անկախության չորս անգամ կորչելու պատճառները մի և նույնն էին. նախ՝ Հայաստանի հողը պատկանում էր 3-400 մեծամեծների (նախարարների) և ոչ թե յուր միլիոնավոր ժողովուրդին, և երկրորդ՝ հայերի խելքը չի կտրեց ազգային դրական օրենքներ հորինելու: Հայոց ազգը չունեւր ո՛չ սեփական հող և ո՛չ օրենք: Նորա դրացի տերություններին շատ դուրին էր ընկճել մի ազգ, որ զրկված էր և՛ իրավունքե, և՛ սեփականությունե, իսկ հայ ազգի համար օտարների լուծը ոչինչով ավելի ծանր ու դառն չէր, քան թե համազգի նախարարների լուծը:

Շ. Ո՞րը ավելի արյան և փողի զոհ է պահանջում հայերից՝ թշնամու հետ պատերա՛զմը, թե՞ այժմվա խաղաղ ստրկական վիճակը:

Պ. Այն ստոր, արտասովելի, անգոսնելի վիճակը, ուր կան այժմ հայերը, ավելի արյան և փողի (նյութական) զոհ է պահանջում հայերից, քան թե դեմ առ դեմ պատերազմը սինլքոր թաթարների, քուրդերի ու չերքեզների հետ. տարին ու տարեմական հազարավոր հայեր են մորթվում և միլիոնների փող և ապրանք են կողոպտվում, հափշտակվում, գողացվում, փչացվում անպաշտպան, փոքրոգի՝ հայերից:

Հ. Ո՞վ պիտի բարձրացնե ազատության դրոշակը և սուրը:

Պ. Դրոշակը պիտի բարձրացնե հայ վարդապետը, իսկ սուրը բուրդը հայ պատանկությունը, երիտասարդությունը և տղամարդիկ, 16 տարեկանից բռնաձ մինչև 45 տարեկանը:

Հ. Ի՞նչ փողով ձեռք պիտի բերվին զենք, պարեն, զգեստ ու այլ ուազմամթերք:

Պ. Կանխիկ վաճառված Հայաստանի մեջի բուրդը անշարժ կալվածքի գն փողով, այն կալվածքի, որ այժմ ապօրինի կերպով տիրապետել են բարբարոս օտարազգիք: Իսկ ով կիրաժարվի կանխիկ վճարելու Հայաստանի գինը, նա ամոխշտ զրկված կլինի Հայաստանցի-հայ (այսինքն՝ ազատ հայ) կոչումե:

Հ. Ո՞վ պիտի ընտրվի Հայաստանի կառավարիչը:

Պ. Հայաստանի կառավարիչը կընտրվի նա, որին զինավորյալ հայ զունդը կճանաչե ամենախոտեմը, ամենաքաջը ու ամենաազնիվը:

Հ. Ի՞նչ է նշանակում հաղթիլ և ի՞նչ հաղթելիլ:

Պ. Հաղթիլ նշանակում է թշնամի առջև անվախ գնալ և միննելե չարսափիլ. հաղթելիլ նշանակում է պատերազմի դաշտումը սրտի մեջ երկուտը տաձել: Անվախը (քաջը) վախկոտին միշտ կհաղթե:

Հ. Հայի ազգային հատկանիշները որո՞նք պիտի լինին:

Պ. Հայի ազգային հատկանիշները պիտի լինին հայոց լեզուն և Հայաստանը ազատված տեսնելու փափազը:

Հ. Ո՞րն է հայ ազգի կրոնը:

Պ. Հայի ազգային կրոնն է հաստատուն հավատը, որ Հայաստանը պիտի ազատվի օտարի լծե: Ով այս բանին հավատում է, նա է ուղղափառ հայադավանը:

Հ. Ապա ի՞նչ են նշանակում՝ լուսավորչադավան, պապական կամ կաթոլիկ ու յուզեթական կոչումները:

Պ. Դրոշ մարդկային կրքերի և կոշտ տգիտության ստեղծած ու այժմ հնացած գաղափարներ են, որոնք մեծապես վնասեցին ու այժմ ևս վնասում են հայ ազգին:

Հ. Ճշմարի՞տ է, որ ասում են, թե ազգ ստրկութենե ազատելու համար մեծամեծ վտանգների պիտի ենթարկվե ու ասագին փող պիտի վատնե:

Պ. Այո, շատ ճիշտ է: Եթե ազատորջ երկու-երեք հոգի լինին, վտանգը շատ մեծ է ու կորուստը անխուսափելի, գոհերն էլ մարդկային ուժեն վեր, բայց եթե ամբողջ ազգը մասնակցե՛ք՝ այն ժամանակ և՛ վտանգը, և՛ գոհողությունը այն աստիճան կթեթևանան, որ ամեն մի անհատին գրեթե անզգայի կերևին:

Հ. Ո՛վ պիտի միավորե հայերին այդ մեծ գործի համար:

Պ. Ընդհանուր վտանգը մոտալուտ կորստին: Դորա համար ամեն մի հայի վրա սուրբ պարտք կա միմյանց պատմելու, հասկացնելու, որ եթե նոքա վաղորդ չազատեն Հայաստանը՝ օտար ազգերը քնաչիչ կանեն հայոց լեզուն և հայկական եկեղեցին, ու այնուհետև հայը ինքն ըստ ինքյան կանհետանա աշխարհիս երեսն. այն ժամանակ ամեն գերդաստանի հայ կմանա, որ լավ է նորա մի որդին ծառայե իր ազգին, քան թե յուր ամբողջ ընտանիքը ոչնչանա: ու լավ է յուր հարստության մի փոքրիկ մասը ընծայվի յուր ազգի օգտին, քան թե յուր բոլոր գանձը օտարի սեփականությունը դառնա:

Հ. Ի՞նչ են նշանակում այն գեղեցիկ արտոնությունները, որ ժամանակից ժամանակ առատ ձեռքով շնորհում են օտար պետությունները հայոց ազգին:

Պ. Այն արտոնությունները, որ օտար պետությունները շնորհում են հայերին, նման են թակարդի մեջ դրած այն համով կերին, որով երեխայք բռնում են միամիտ թռչուններին: Այդպիսի արտոնություններով ամայացավ Հայաստանը յուր բնիկ ժողովրդեն ու պարզամիտ հայերը հասան այս օրվա ցավայի թշվառ վիճակին:

Հ. Հայերի ուղքի ելնելը (բռնության դեմ) իրավացի՞ գործ է, թե ապօրինի:

Պ. Հայերի ուղքի ելնելը Հայաստանի ազատության համար իրավացի գործ է թե՛ քրիստոնեական և թե՛ քաղաքական օրինաց կողմեն, ու աշխարհիս երեսի ամեն լուսավորյալ ու ազնիվ մարդոց գովասանքը կշարժե:

Հ. Ուրեմն հայերը իրավունք ունին՝ զենքի զորությունով ազատել իրենց հայրենիքը:

Պ. Հայերը Հայաստանը զենքի զորությունով ազատելու համար

ոչ միայն ունեն իրավունք, այլև ամեն մի հայի վրա սուրբ պարտք կա այդ սխրալի գործը կատարելու, ինչպես որ ամեն հարազատ որդի լիակատար իրավունք ունի յուր հոր ու նախնիների ժառանգությունը ստանալու: և մեծ հանցանք է յուր որդվոց ու հետնորդների առջև, եթե նա այդ ժառանգությունեն հրաժարվի. կամ՝ ակամա, կամ՝ հիմարությամբ ու կամ փոքրոգիությամբ:

Հ. Ո՛ր կերթան հոգիները այն մարդոց, որոնք կմեռնին ճակատի մեջ:

Պ. Ավետարանի խոսքերի հիմանց վրա ճակատի (ազգային պատերազմի) մեջ մեռնողի հոգին, ի շարս սրբոց, անշուշտ կերթա երկնից արքայություն, վասնզի այդպիսին կյանքեն զրկվել է ի սեր և ի պաշտպանություն յուր ներյալ մեծավորներին. նորա անունը կլինի նահատակ ու նորա հիշատակը սուրբ եկեղեցին կտոնե մինչև աշխարհի կատարածը (վերջը.- Լ.Շ.):

Հ. Հրացանի ամեն՞ զնդակը դիպչում է ու ամեն՞ խոցվածը մեռնում է:

Պ. Վիճակագրական ամենաճիշտ հաշիվներեն երևում է, որ հրացանի տասը հազար զնդակեն մինն է դիպչում մարդուս և 38 խոցվածներեն մինն է միայն մեռնում:

Հ. Պատերազմի դաշտում խոցված հոգեվարը չի՞ տանջվում:

Պ. Ամենափորձառու բժիշկները հաստատում են, որ կակուղ անկողնի մեջ մեռնելը հազարապատիկ ավելի դժվար է, քան թե պատերազմի դաշտում, իսկ զենքի պատճառած մահը մահերի մեջ ամենաթեթևն է:

Հ. Հնար կա՞ պատերազմի դաշտում մահից ազատվելու:

Պ. Այո՛, կա, ու մի հատիկ հնար է այդ: Եթե չես ուզում, որ թշնամին քեզ սպանե, դու ինքը շտապե նորան սպանելու: Ուր վտանգը շատ մեծ է ու անխուսափելի՝ համարձակ վազե նորա առջև, և վստահ եղի, որ վտանգը ինքը կփախչի քեզանից: Այս փորձված երևույթ է: Թշնամիի առջև փախչելը երկու վատ հետևանք ունի. մեկ՝ որ փախչողը անպատճառ կսպանվի և երկրորդ՝ դա ակներև կորստի կմատեն յուր հավատարիմ զինակից ընկերին:

Հ. Հայերը ե՛րբ ուղբի պիտի բարձրանան:

Պ. Երբ որ մեծամեծ ազգերի մեջ սկսվի կենաց ու մահվան պատերազմը:

Հ. Իսկ մինչև այն ժամանակ ի՞նչ պիտի անեն հայերը:

Պ. Այս Վարդապետարանը իմաստասիրեն ու նորա բովանդակությունը սրբությամբ կատարեն:

Հ. Հայի կավվածական հարստությունը օտար աշխարհի մեջ ի՞նչ է:

Պ. Հայի կավվածական հարստությունը օտար աշխարհի մեջ ստրկի աներևույթ, բայց ամենապինդ շղթան է, որով կաշկանդված են նորա ձեռքերը և ուղբերը:

Հ. Ի՞նչ են այն պատվանունները, տիտղոսները, աստիճանները, պատվանշանները ու վկայաթղթերը, որ ունեն հայերը օտար պետությանց մեջ:

Պ. Այն պատվանունները, տիտղոսները, աստիճանները, պատվանշանները ու վկայաթղթերը, որ ստացել են հայերը օտար պետություններե, ստրկության գլխազիրներ են՝ ի տրիտուր իրենց կորցրած ազատության հայրենիքեն ուրացության:

Հ. Ե՛րբ օտարազգիք կդադարին, ինչպես որ այժմ, արհամարհիլ, ատիլ ու հալածիլ հայերին և ե՛րբ կսկսեն, հակառակ դրուս, հարգիլ նոցա:

Պ. Երբ հայերը ազատեն իրենց օտարի լծեն, բայց այդ չեղած նոցա մինչև իրենց քնացինջ լինելը, կման արհամարհված, ատված, անվանարկ, հալածված ու զարշելի արարածներ օտարի աչքում, ավելի ստոր, քան թե ջիւղները, ցիգանները, փարիաները:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՐՊԵՍ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Ռուբենի տեսլականը (1906)

Թերևս անթիվ են Հայաստանի աշխարհագրության ու մշակույթին, հայոց քաղաքակրթությանը, նրա ժողովրդին տրված գնահատականները: Հայտնի են հոչակավոր աշխարհագետների՝ Ավգուստ Հաքստհաուզենի, Հենրի Լինչի և այլոց Հայաստանի բազմա-հատոր նկարագրությունները, և անշուշտ «Արարտայան դաշտի առավոտը» ոսկեղենիկ պատադիկը Րաֆֆու «Սամվել» վեպից:

Այդուհանդերձ, Հայաստանի այն պատկերը, որը գտնում ենք Ռուբենի (Մինաս Տեր Մինասյան) մոտ որպես տեսլական, որպես ֆիզիկա-աշխարհագրական և մշակութային-քաղաքակրթական նույնականություն (տեքստը տրվում է ստորև) Անկրկնելի է, Անմեկնելի և Սրբազան: Այն գերազանցում է յուրաքանչյուր երևակայություն...

Այս առնչությամբ դժվար է զսպել մարդկային երևակայությունը և չզիմել մեծահամբավ պատմաբանին, Նիկողայոս Ադոնցին առ այն, որ «Հայաստանը, ինչպես ամեն մի *պատմամշակութային* (ընդգծումն իմն է՝ Լ. Շ.) երկիր, յուրատեսակ մարմին է. նրանում ավելի ուժեղ բաբախում է հայկական զարկերակը, նրանում ավելի խորը հայկական շունչն է: Իբրև կենդանի մարմին, Հայաստանը չի կարող հրաժարվել ո՛չ իր անցյալից, ո՛չ իր ապագայից: Թող նա վիճարկոր է, արյունաքամ է լինում, բայց նա մեռած չէ» (Ադոնց Ն. Գ. Երկեր, հտ. 2, եր., 2012, էջ 201):

Ընդամին, շարունակենք ընթերցել անվանի պատմաբանին. «Քաղաքական աշխարհում կշիռ ունեցող երկիրը չի կազմված միայն լեռներից, հովիտներից և հոսող ջրերից: Յուրաքանչյուր երկիր, իր ֆիզիկական մակերևույթից զատ, ունի նաև հոգևոր կերպար, որն առանձնացնում է նրան մյուս երկրներից: Ինչը իսկապես նշանակություն ունի՝ կույր բնության մեղայլ նստվածքները չեն, այլ մարդկային հանճարի հավերժ կենդանի ստեղծագործությունները, որոնցով

ծածկված է երկիրը: *Բանական աշխարհանքի այդ կերպվածքներն էլ ստեղծում են երկրի մշակութային ոգին* (ընդգծումն իմն է՝ Լ. Շ.): Ու՛մ է պատկանում այդ ոգին, կամ դադարու՞մ է նա երբևէ պատկանել նրան, ով ստեղծել է այն, ում ստացվածքն է այն: *Հայաստանն իբրև մարդկային աշխարհանքի փորձակայան, եղել է և մնացել է հայկական: Այն վերածվել է մարդու կացարանի հայկական ձեռքերով* (ընդգծումն իմն է՝ Լ. Շ.): Մնացյալ բոլորի համար այն եղել է հյուրատուն: Բոլորն օգտվել են նրա օթևանից, մսխել շոայլորեն նրա մշակութային գանձերը, ոմանք իբրև ժամանակավոր հյուրեր, ուրիշներն իբրև բախտից հայաձված ճամփորդներ, մինչդեռ ոմանք էլ անսանձ կերպով տնօրինել են այն, ավերել ու քանդել: Նրանցից ոչ ոք հոգեվոր ժառանգություն, մշակույթի որևէ հիշողություն չի թողել, թուրքմենի կամ քրդի ձեռքը ոչ մի այլուս չի դրել երկրի շինարարական արվեստի գանձարանում: Ճարտարապետության վաղեմի կոթողները՝ պալատները, ամրոցները, եկեղեցիներն ու վանքերը վեհապանձորեն բազմած լեռնագահերին մշակութային զգեստավորմամբ, այժմ փոշուն հավասարեցված, բայց նրանց մեջ դեռ ապրում է ոգին, նրա ավերակների մեջ դեռ դեգերում են անցյալի սովերները «...» Նույն-իսկ ոգու շինարարության ավերակները՝ մի՞թե դրանք ավելի արժեքավոր չեն երկրի համար, քան քուրդ հովիվների խաշները: Եվ եթե լավագույն հայկական եկեղեցիները համարյա բոլոր քաղաքներում, լինի դա Հայաստանում, թե նրանից դուրս, վերածվել են մզկիթների, մի՞թե դրանով նրանք դադարել են հայկական լինելուց» (Նույն տեղում, էջ 200-201):

Նույնն էր դրությունը երեկ, 1918 թվականին, երբ մեծահամբավ պատմաբանը գրում էր երկարորեն ցիտված տողերը, և նույնն էր դրությունը այսօր, Հայաստանի հայազրկումից 100 տարի անց: Այդ կիսատարտի յուրաքանչյուր ՀԱՅԱՍՏԱՆԱԴԱՐՁ, նույնիսկ մի քանի օր արբելով ԷՐԳՐՈՒՄ, վերապրելով ՍՐԲԱՋԱՆ ՀԱՅՐԵՆԻԻԲԸ:

Ուստի, բոլոր հիմքերն ունե՞ր մի այլ երևելի հայ մտավորական՝ Գառնիկ Գյուլապանն, ասելու.

**Հայաստանի
իրավաբերը թուրքն է,
փաստական տերը՝
քուրդը, Հայրենիք
ունեցողը՝ հայը:
Լ.Շ.**

«Ձիերը քրտնած՝ կփոշուային, կվազեին, իսկ իմ միտքս այժմ կվազեր հետ, դեպի Վանա բերդը, Ակոփի, ուր Միերն էր նստած: «...» Մթութայան մեջ արշավող ձիերու սմբակներուն տրոփյունը կզրզներ երևակայությունս և աքքիս առջև կուզար Հայաստանի քարտեքը: Հոն կտեսնեի, որ Վասպուրական աշխարհը մեկ ամբողջություն չէ, այլ երկու իրարու կցված երկիրներ է բաղկացած: Անոնք բարձված են Վանա ծովին վրա «...» Մեկը անոնցմե Վանա աշխարհն է, մյուսը Ոշտունյաց աշխարհն է «...» Այս բաժանումը երկրցի՝ արիեստական չէր, այլ բնական էր, նոր չէր, այլ հին էր որքան մարդկության պատմությունը:

Կմտածեի՝ Վանա շրջանը ինկած է իբր կզդի մը Վանա և Ուրմիո լիճերուն միջև, այն պարփակված է ջրերով և այնպիսի լեռներով, որոնք կզգիացուցած են զայն իր շրջապատեն: Անոր բոլոր գետերը, աղբյուրները կիսին դեպի Վանա ծովը: Վանը մազե կամուրջով մը կապված է (Ուտանի վրայով, Մանաճիրի քարերու վրայով) Վռշիկներու երկրին՝ Լեռնապարհն հետ: Այլ ճամբա ան չունի, բացի ծովեն: Այդ մազե կամուրջով ան շունչ և հաղորդակցություն ունի դեպի արևմուտք ինկած հայկական շրջաններու հետ: Դեպի հյուսիս ինկած րուն Հայաստանի հետ ան կապ չունի, կտրված է թե՛ Արարատյան դաշտեն, թե՛ Բարձր Հայքեն: Թանդուրե՞ք, Ալադա՞ր պիտի լինին կապ Հայաստանի հետ: Այդ անհնարին է: Տարին վեց ամիս այդ լեռները կխցանեն Վանա աշխարհը, իրենց ծյունով ու բուքով անանցանելի են, իսկ տարվա մյուս վեց ամիս ան մառչել են միայն տուկուն ջրիներուն, որոնք կածաններով կտանին Բազրևանդ, առանց,

ասկայն ծանր բեռներու: Հոն ճանապարհ չկա: Մեկ խոսքով՝ Վան-Տոսպը Հայաստանի մեջն է, բայց անկե բաժնված է բնութայամբ «...»

Երբ այս դրությունը կպատկերանար ինձ, հուսահատորեն կմտածեի՝ Վան-Տոսպը առանձին երկիր մըն է: Ան ինքնաբավ է: Անոր հարագատ չեն հայկական մյուս նահանգները: Անոր համար 132 է, որ Էջմիածնա դիմաց Ախթամարի կաթողիկոսություն է ստեղծվեր: Անոր համար է, որ Արշակունյաց, Բագրատունյաց, Անիի, Արտաշատի, Դվինի, Վաղարշապատի կողքին ստեղծվեր է Վանի Արծրունյաց հարստությունը...

«...» Այսուհանդերձ, Հայաստանը ինձի կպատկերանար իբրև հսկա վանք մը, որուն գմբեթը Արարատյան երկիրն է, իր Մասիսներով: Բայց գմբեթը առանց պատերու չէր կրնար ըլլալ և այդ պատերը կերևային աչքիս հայկական՝ Վանանդը, Շիրակը, Բագրևանդը և այլ ու այլ մեր շրջանները: Ու այն ատեն վանքը գմբեթով և պատերով կներկայանար աչքիս առջև:

Բայց վանքը առանց խորանի անիմաստ շենք մըն է, կմտածեի, և Տարոնի աշխարհը և միջին Հայաստանը կերևակայեի այդ խորանը, ուր Բագրատունիք, Մամիկոնյան սպարապետները վանքին տված էին իմաստ և հոգեկան ուժ Սահակի և Մեսրոպի նման:

Բայց երբ վանք մը գմբեթով, սրբատաշ պատերով, հոյակապ խորանով՝ դռներ, պատուհաններ չունենա, մարդկության համար կդառնա գերեզմանոց և Աստուծո համար՝ խավար քավարան: Եվ կգտնեի, որ բարձրաբերձ ճեղմակ լեռներու անցքերը այն պատուհաններն են, ուրկե երկնքի յուրը կմտնե վանքը հալածելու համար խավարը, իսկ էրզրումը, Բիթլիսը անոր մեծ դռներն են, որոնցմով մարդկությունը կմտնե այդ հրաշալի վանքը թե՛ արդթելու, թե՛ փոխանցելու իր ունեցածը և թե ստեղծագործելու համար:

Եվ այդ ժամանակ բողոքի ձայն մը բարձրացավ իմ մեջ, և ես մտածեցի. - Առանց խարիսխի նավը անկայուն կլինի, առանց ամուր հիմքերու վանքի ոչ գմբեթը կլինի, ոչ պատերը կբարձրացվին, ոչ խորանը կշինվի, ոչ դուռ, ոչ պատուհան կբացվի: Առանց հիմքերու՝ այդ

բոլորը բամին պիտի փլցնե: Ու մտածեցի, որ Վան-Տոսպը որքան ալ ինքնամիտի լինի, որքան ալ հակաթոններով իր մեջ ամփոփվի, որքան ալ անտարբեր լինի ընդհանուր մեր կյանքին, այնուամենայնիվ այդ թերությունն համարվածները անոր առավելություններն են, քանի որ ան խարիսխն է, անկունային չորս հիմքերեն մեկն է հայոց աշխարհի, առանց որուն վանքը կանգուն չի մնար: ...Որքա՛ն հաստատուն և հոյակապ է Հայաստան վանքը, երբ ան ամբողջացված է:

Որքա՛ն բնությունը ճարտարապետականորեն կառուցած է անոր չորս հիմքերեն մեկը Վան-Տոսպը: Զագոռը անմատչելի, իբր պարիսպ, փակած է Վան-Տոսպը արևելքի առջև, բայց իր բարձր գագաթներեն Ալազանը պատուհան մըն է բացած իր կողերին, որ կածաններով կտանի Աբաղայի դաշտեն Հեր և Զարևանդ, դեպի Պարսկահայք, դեպի Ատրպատական: Իսկ Առաուլը դուռ մըն է բացած, որ կտանի դեպի Ուրմիո լճի ավազանը, դեպի հին Մաննայի աշխարհը, ուրկե Իսրայելի ժողովուրդը իր փրկությունը և ազատությունը կակնկալեր Բաբելոնի և Նինվեի քոնակալութենեն ազատվելու համար:

Ձայն մը իմ մեջ կըսեր, «ճիշտ ատոր մեջն է Վան-Տոսպի թուլությունը և վնասակարությունը: Կտրված Հայաստանեն՝ ան եղած է և պիտի լինի անջատական: Պատուհան և դուռ ունի դեպի արևելք, - ուրեմն անոր մշակութային և քաղաքական հակումը պիտի լինի ոչ թե հայկական և արևմտյան, այլ արևելյան պարսկական, ասորական: Անոր համար է, որ այդ երկիրը հարուստ է եղեր Մերուժաններով, Վահաններով, Մանաճիհրներով: Բնավ մի զոջար, որ վերջնականորեն կթողոս այս երկիրը, անկե Հայաստան տաճարին ոչ օգուտ է եղեր և ոչ ալ պիտի լինի»:

Այդ դիվային ձայնին ուրիշ ձայն մը իմ մեջ կպատասխաներ. «Ի՜նչ հիմար, հիմար բաներ կմտածես: Այդպես, երկի, մտածեց այն ապուշ Սենեքերիմը, Արծրունիներու վերջին թագավորը, որ թեև իրեն բարեպաշտ և լավ հայ կհամարեր, բայց ոչ Վասակ Մյունիի, ոչ Մերուժանի ուղքի փոշին չարժեր: Այս մարդիկը զուցե դավաճան էին ժամանակի բարոյական, կրոնական հասկացողությամբ, զուցե ան-

ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅԱՆ «ԱՆՓՈՓՈՒՑ ՕՐԵՆՔԻ» ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ

Ֆրանսիայի վագրը՝ ժորժ Կլեմանսոն²⁶, Վերսալի համաժողովում անմնացորդ կրքոտությամբ պաշտպանելով Ֆրանսիայի շահերը, հակադրվելով ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի խաղաղության համապարփակ ծրագրին և իրն աշխարհի վերակառուցման նրա տիտանական ջանքերին, հայտարարում էր, որ ինքը վստահում է Ֆրանսիայի անվտանգության մինչ այդ (Կարդինալ Ռիշելյեից (1585-1642) սկսած - Լ. Շ.) գոյություն ունեցող անվտանգության համակարգին, որը հիմնված է 1) երկրի որոշակի ռազմական ներուժի, 2) ուժերի հավասարակշռության և 3) մյուս երկրների հետ դաշնակցային հարաբերությունների վրա:

Ժ. Կլեմանսոյից թերևս 100 տարի անց էլ դժվար է նոր բան ավելացնել ասվածին, եթե չնկատվի, որ, այդուհանդերձ, ինչպես առանձին պետությունների (երկրների), ժողովուրդների, այնպես էլ համաշխարհային համապարփակ համակարգի (որ տվյալ պարագայում նույնն է), թե աշխարհակարգի էվոլյուցիայի տեսանկյունից երեք գործոնների ներդաշնակ «խաղը» մնում է անփոփոխ, մի վերապահումով, այն է՝ ուժերի հավասարակշռության «անփոփոխ օրենքի» (Ռաֆայել դե Նոգալես) առանցքային դերակատարությամբ: Ընդամենը՝ այդ օրենքը «պահանջում է և միշտ պետք է պահանջի նրա բանական նորմերի անխափան կատարում» ոչ միայն կենդանի մատերիայի հանդեպ, այլև նրանում, ինչը վերաբերում է էթնիկական միավորների դրության կայունությանը, որոնց անվանում են, ըստ Նոգալեսի, «քաղաքակիրթ ազգեր»²⁷:

Ավելին, համաշխարհային զարգացումը կամ, տվյալ պարագայում ճիշտ կլինի ասելը, աշխարհակարգը պտտվում է առաջին հեր-

²⁶ Ժ. Կլեմանսոյի՝ Հայկական հարցի և Հայաստանի հանդեպ վերաբերմունքի մասին տե՛ս Կարդյանյան Մ.Ս. Ֆրանսիայի վագրը, «Հայրենիք», 1930, № 3:

²⁷ Ногаляс Рафаэлъ де Мендес. Четыре года под полулунием. Пер.с исп., М., 2006, с. 345.

գույթ էին և վարդապետ, տիրացու ծովը կթափեին Ասանճիհրի նման, բայց այդ բոլորը անոնք կընեին այն գիտակցությամբ, որ Հայաստանի ամբողջականությունը պետք է պահպանել ամեն գնով, և Հայաստանը, ինչ նկարագիր այ ունենա, պետք է պատկանի հայության, որովհետև հայությունը առանց Հայաստանի գոյազուրկ կլինի: Անոնք մեղանչած չէին Հայության և Հայաստանի դեմ: Գուցե սուրբներ էին Պետրոս Գետադարձները, Վեստ Սարգիսները հյուսիսի մեջ, իսկ Սեներեբիմները հարավի մեջ: Անոնք այնքան սրբակյաց էին, որ չէին ուզեր շփվիլ անկրոն մոնղոլին, անհավատ պարսիկին, հերձվածող ասորիին հետ. այնքան անարատ էին, որ կուզեին շփվիլ օրթոդոքս Բյուզանդիոնին հետ, ուր հայածին կայսրներ կնստեին, ուր խաչն էր տիրապետողը: Այդ խաչի սիրույն էր, որ անոնք իրենց կուսությունը պահեցին և այնքան սրբացան, որ գետերը իրենց արթթյունով կանգնեցուցին և, ի վերջո, իրենց ժողովուրդը լքեցին, իրենց երկիրը ծախեցին և, իբր վարձատրություն՝ ադին Բյուզանդիոնի ոսկին և զավառները: Անոնք էին րուն դավաճանները, Հուդայեն ծնածները...»

(*Ռուբէն*, Հայ յեղափոխականի մը յիշատակները: Հտ. Բ. Լոս Անջելոս, 1952, էջ 394-400)

թին և գլխավորապես հավասարակշռության «անփոփոխ օրենքի» առանցքի շուրջ այն ըմբռնողությամբ, ինչպես այն հասկանում էր XVIII դարասկզբի ֆրանսիացի աստվածաբան, գրող, հոգևորական Ֆրանսուա Ֆենետլն (1651-1715)։ Ուժերի հավասարակշռությունը որպես կրկնվող և փոփոխվող, բայց ոչ ամենևին բացառիկ և մշտական տարր։

Աշխարհակարգի զարգացման տրամաբանությանը «քաջամեծություն» Հենրի Ա. Քիսինջերը, անկասկած, իրավունք ուներ գրելու. «XVII դարում՝ Կարդինալ Ռիշելիեյի օրոք, Ֆրանսիան դրեց միջազգային հարաբերությունների հանդեպ ժամանակակից մոտեցման սկիզբը, որի հիմքում ընկած էր ազգ-պետությունը և որը պատճառաբանված էր ազգային շահով որպես նրա վերջնական նպատակ։ XVIII դարում Մեծ Բրիտանիան մշակեց ուժերի հաշվեկշռի պատկերացումը, որը եվրոպական դիվանագիտության մեջ գերիշխեց երկու հարյուր տարվա ընթացքում։ XIX դարում Մետերնիխի Ավստրիան վերակառուցեց «Եվրոպական համանվագը», իսկ Գերմանիան Բիսմարկի շրջանում դեմոնստրի ենթարկեց նրան՝ եվրոպական դիվանագիտությունը վերածելով ուժային քաղաքականությունների սառնարյուն խաղի»²⁸։

«Յուրաքանչյուր հարյուրամյակում, - գրում է Հ. Քիսինջերը, ցույց տալով հավասարակշռության և փոփոխելիության տեկտոնական շարժի տրամաբանությունը, - կարծես հետևելով բնական ինչ-որ օրենքի, հայտնվում է որևէ երկիր՝ օժտված հզորությամբ, կամքով, ինչպես նաև մտավոր ու բարոյական ազդակներով, որոնք անհրաժեշտ են միջազգային հարաբերությունները համապատասխանեցնելու սեփական արժեքներին»²⁹։

Ինտրիգան, ակնհայտ է, տեղավորված է հավասարակշռության «անփոփոխ օրենքի» ընդերքում և «բնական ինչ-որ օրենքը» հենց

²⁸ Տե՛ս Բաթալոն Յ., *Մировое развитие и мировой порядок: анализ современных американских концепций*. М., 2005, с. 58.

²⁹ Киссинджер Г., *Дипломатия.*, Пер. с англ. М., 1997, с. 9.

նույն հավասարակշռության օրենքն է։ Եվ այս մասին աշխարհում երբևէ թե առաջինը գիտի Հարվարդում 1957-ին մագիստրական չգերազանցված ուսումնասիրություն գրած Հենրի Ա. Քիսինջերը³⁰։

Այդուհանդերձ, սա չի ասում (իբրև թե) Հ. Քիսինջերը, «կանոնական» կատարելությամբ շարադրում է գերմանացի իրավագետ Լասո Ֆրենսիս Լոուրենս Օպենհեյմը, երբ անդրադառնում է հավասարակշռության «անփոփոխ օրենքին» և նրա առանցքի շուրջ առաջնած հաշվեկշռի գործառույթին։ Լ. Օպենհեյմը պարզաբանում է. «Ազգերի օրենքը (կարդա՝ միջազգային իրավունքը՝ Լ. Շ.) կարող է զրոյություն ունենալ, եթե միայն Ազգերի Շտամիքի (կարդա՝ միջազգային հանրույթի՝ Լ. Շ.) անդամների միջև գոյություն ունի հավասարակշռություն, ուժերի հաշվեկշիռ [բալանս]։ Եթե Տերությունները չեն կարողանում զսպել մեկը մյուսին, օրենքի յուրաքանչյուր կանոն չի ունենալու ուժ, քանի որ գերիզոր Պետությունը քնականաբար փորձելու է գործել սեփական հայեցողությամբ և խախտել օրենքը։ Քանի որ վրս և երբեք չի կարող լինել կենտրոնական քաղաքական իշխանություն՝ վեր կանգնած Ինքնիշխան Պետություններից, որը կարողանա օպիսիականել [ճշգրտությամբ կատարել՝ «содержать» Լ. Շ.] Ազգերի օրենքը։ Ուժերի հաշվեկշիռը պետք է խոչընդոտի այն բանին, որ Ազգերի քնականիցի որևէ անդամ դառնա ամենակարող»³¹։ Այնուհետև Լ. Օպենհեյմը կանոնը ձևակերպելուց հետո, պարզաբանում է. «Վերլույթիցս XIV և Նապոլեոն I շրջանի պատմությունը ցույց է տալիս այդ սկզբունքի ողջամտությունը (թե որքան է այն ողջամիտ փոքր պետությունների և պետականազուրկ ժողովուրդների համար, այլ հարց է՝ Լ. Շ.) [...] 1648 թվականի Վեստֆալյան խաղաղության պայ-

³⁰ H. Kissinger H., *World Restored. Metternich, Castlereagh and the Problems of Peace, 1813-1822* (1957).

³¹ H. J. Трофименко Г., К проблеме восстановления Баланса сил на мировой арене. Вестник МГУ, Серия 18, Социология и политология. 2001, № 4, с. 40, 2. Oppenheim L. *International Law. A Treatise*, Vol. I Peace, L. № Y; Bombay, 1905, p. 73-74, 185-186, 3. Kissinger B. *Legal Positivism as Normative Politics* : International Society, Balance of Power and Laso Oppenheim's Positive International Law. *International Law / ed. by Malcolm Evans, Patrick Capps*, 2009, Vol. 1, pp. 59-94:

թին և գլխավորապես հավասարակշռության «անփոփոխ օրենքի» առանցքի շուրջ այն ըմբռնողությամբ, ինչպես այն հասկանում էր XVIII դարասկզբի ֆրանսիացի աստվածաբան, գրող, հոգևորական Ֆրանսուա Ֆենելոն (1651-1715)։ Ուժերի հավասարակշռությունը որպես կրկնվող և փոփոխվող, բայց ոչ անենկին բացառիկ և մշտական տարր։

Աշխարհակարգի զարգացման տրամաբանությանը «քաջածանրթ» Հենրի Ա. Քիսինջերը, անկասկած, իրավունք ուներ գրելու. «XVII դարում՝ Կարդինալ Ռիշելիեյի օրոք, Ֆրանսիան դրեց միջազգային հարաբերությունների հանդեպ ժամանակակից մոտեցման սկիզբը, որի հիմքում ընկած էր ազգ-պետությունը և որը պատճառաբանված էր ազգային շահով որպես նրա վերջնական նպատակ։ XVIII դարում Մեծ Բրիտանիան մշակեց ուժերի հաշվեկշիռի պատկերացումը, որը եվրոպական դիվանագիտության մեջ գերիշխեց երկու հարյուր տարվա ընթացքում։ XIX դարում Մետերնիխի Ավստրիան վերակառուցեց «Եվրոպական համանվագը», իսկ Գերմանիան Բիսմարկի շրջանում դեմոնտաժի ենթարկեց նրան՝ եվրոպական դիվանագիտությունը վերածելով ուժային քաղաքականությունների սառնարյուն խաղի»²⁶։

«Յուրաքանչյուր հարյուրամյակում, - գրում է Հ. Քիսինջերը, ցույց տալով հավասարակշռության և փոփոխելիության տեկտոնական շարժի տրամաբանությունը, - կարծես հետևելով բնական ինչ-որ օրենքի, հայտնվում է որևէ երկիր՝ օժտված հզորությամբ, կամքով, ինչպես նաև մտավոր ու բարոյական ազդակներով, որոնք անհրաժեշտ են միջազգային հարաբերությունները համապատասխանեցնելու սեփական արժեքներին»²⁷։

Ինտրիգան, ակնհայտ է, տեղավորված է հավասարակշռության «անփոփոխ օրենքի» ընդերքում և «բնական ինչ-որ օրենքը» հեց

նույն հավասարակշռության օրենքն է։ Եվ այս մասին աշխարհում երկի թե առաջինը գիտի Հարվարդում 1957-ին մագիստրական չգերազանցված ուսումնասիրություն գրած Հենրի Ա. Քիսինջերը²⁸։

Այդուհանդերձ, սա չի ստում (իբրև թե) Հ. Քիսինջերը, «կանոնական» կատարելությամբ շարադրում է գերմանացի իրավագետ Լասա Ֆրենսիս Լոուրենս Օպենհեյմը, երբ անդրադառնում է հավասարակշռության «անփոփոխ օրենքին» և նրա առանցքի շուրջ առաջացած հաշվեկշիռի գործառույթին։ Լ. Օպենհեյմը պարզաբանում է. «Ազգերի օրենքը (կարդա՝ միջազգային իրավունքը՝ Լ. Շ.) կարող է գոյություն ունենալ, եթե միայն Ազգերի Ընտանիքի (կարդա՝ միջազգային հանրույթի՝ Լ. Շ.) անդամների միջև գոյություն ունի հավասարակշռություն, ուժերի հաշվեկշիռ [բայանս]։ Եթե Տերությունները չեն կարողանում զսպել մեկը մյուսին, օրենքի յուրաքանչյուր կանոն չի ունենալու ուժ, քանի որ գերիզոր Պետությունը բնականաբար փորձելու է գործել սեփական հայեցողությամբ և խախտել օրենքը։ Քանի որ չկա և երբեք չի կարող լինել կենտրոնական քաղաքական իշխանություն՝ վեր կանգնած Ինքնիշխան Պետություններից, որը կարողանար պահպանել [ճշգրտությամբ կատարել՝ сообразовать՝ Լ. Շ.] Ազգերի օրենքը։ Ուժերի հաշվեկշիռը պետք է խոչընդոտի այն բանին, որ Ազգերի ընտանիքի որևէ անդամ դառնա ամենակարող»²⁹։ Այնուհետև Լ. Օպենհեյմը կանոնը ձևակերպելուց հետո, պարզաբանում է. «Լյուդովիկոս XIV և Նապոլեոն I շրջանի պատմությունը ցույց է տալիս այդ սկզբունքի ողջամտությունը (թե որքան է այն ողջամտի փոքր պետությունների և պետականազուրկ ժողովուրդների համար, այլ հարց է՝ Լ. Շ.) [...] 1648 թվականի Վեստֆալյան խաղաղության պայ-

²⁶ Sh'u Kissinger H., World Restored. Metternich, Castlereagh and the Problems of Peace, 1812-1822 (1957).

²⁷ Sh'u I., Трофименко Г., К проблеме восстановления баланса сил на мировой арене. Вестник МГУ, Серия 18, Социология и политология. 2001, № 4, с. 40, 2. Oppenheim L. International Law. A Treatise. Vol. I Peace. L: № Y: Bombay, 1905, p. 73-74, 185-186, 3. Kingsbury B. Legal Positivism as Normative Politics; International Society, Balance of Power and Lassa Oppenheim's Positive International Law, International Law / ed. by Malcolm Evans, Patrick Capps. 2009, Vol. 1, pp. 59-94:

²⁸ Sh'u Баталов Э., Мировое развитие и мировой порядок: анализ современных американских концепций. М., 2005, с. 58.

²⁹ Киссинджер Г., Дипломатия., Пер. с англ. М., 1997, с. 9.

անազրից սկսած՝ ուժերի հաշվեկշռի սկզբունքը Եվրոպայի պատ-
ության մեջ խաղացել է իշխող դեր»³²: Հնդսմին՝ Լ. Օպենհեյմն ավե-
ր է կոնկրետանում. «Ինչպես իրենք՝ Եվրոպացիները, այնպես էլ
տվյալ թեմայով գրողների մեծ մասը համաձայն են այն բանում, որ
ուժերի հաշվեկշիռը պահպանելու նպատակով ինտերվենցիան (ներ-
ստում, միջամտություն՝ Լ. Շ.) թույլատրելի է (ստորագծումն իմն է՝
Լ. Շ.)»³³:

Իսկ այն հարցը՝ կենսական Հայաստանի և հայրության համար,
են թուրքերը՝ իրն իսլամ, կարող են Եվրոպական հավասարակշռու-
յան մեկ տարրը լինել և տեղ գտնել Եվրոպան կազմող ազգերի ընկե-
ության մեջ, առաջին արձագանքը գտավ և դրականորեն լուծվեց
Յրանսիական միապետության կողմից: Ֆրանսուա I (1515-1547թթ.)
հարմար նկատեց համաձայնության դաշինք կնքել Քանուսի Սուլթան
Ռոլեյմանի (1520- 1538թթ.) հետ: «Եվրոպական հավասարակշռության
աղաքականությունը, - գրում է Ռընե Փինտը,- վերջնականապես գե-
ակշռեց խաչակրության գաղափարին վրա...»³⁴:

Սա աշխարհի պատմաքաղաքական հեղաբեկումների այն
րջանն է, ինչը անվանվում է ուժերի հավասարակշռության Եվրոպա-
ան համանվագ: Այն «ծնվել է XVII դարում աշխարհակարգի հայե-
նակարգի ունիվերսալության միջնադարյան հույսերի վերջնական
րախի արդյունքում, որը Հռոմեական կայսրության ավանդույթների
և կաթոլիկ եկեղեցու ձուլվածքն էր: Աշխարհը պատկերացվում էր
րպես երկնքի հայելային արտացոլումը: Այնպես ինչպես երկնքում
առավարում է մի Աստված, մի կայսր էլ պետք է կառավարի աշ-
արհիկ աշխարհում, իսկ պապն էլ՝ ունիվերսալ եկեղեցուն»³⁵:

Եթե ժ. Կլեմանտյի ձևակերպած սկզբունքներից առաջինը,
վում է, ինքնին հասկանալի է, ապա երրորդը կենսական է պետու-

թյունների առաջացման առաջին իսկ պահից: Դեռևս հին հնդիկ
մտածող, բրահման Կաուտիլյան էր (IVIII դ. մ.թ.ա.) մասնավորապես,
ցույց տալիս կողքից, այլ պետությունների հետ դաշինքի որոնման
անհրաժեշտությունը³⁶: Սա «Արտաշատարա»-ի արտաքին քաղա-
քականության վեց մեթոդներից հինգերորդն է:

Վ.Գ. Այն, ինչի մասին գրում են գերմանացի իրավաբան Լ. Օպեն-
հեյմը, ամերիկացի քաղաքական մտածող և քաղտնխնդրող Հ. Քիսին-
ջերը, ինչ-որ փորձում էր իրականություն դարձնել Ֆրանսիացի ժ. Կլե-
մանտն, իմաստավորել է իր հեղափոխական անցյալով և Հայաստա-
նին անմնացորդ նվիրվածությամբ հայտնի Առաջին Հանրապե-
տության երևելի ռազմաքաղաքական գործիչ և ինքնատիպ քաղաքա-
կան մտածող, Արամի (Սարգիս Հովհաննիսյան) մերձավոր զինակից
Ռուբենը (Մինաս Տեր- Մինասյան)՝ մերժելով քաղաքական հարափո-
փոխ աշխարհում քաղաքական կողմնորոշումները, որտեղ դերակա-
տար պետություններն առաջնորդվում են բացառապես 1) մշտական
(կայուն) շահերով և փոփոխական (անկայուն) դաշինքների ու կռալի-
ցիաների ստեղծումով, 2) «հզորությամբ, կամքով, ինչպես նաև մտա-
վոր ու քարոյական ազդակներով օժտված» առաջատարների հայտ-
նության սպասումով: Մնացածը բնագրում:

Նույն տեղում:

Նույն տեղում:

Տե՛ս Կլեմ- (Փարիզ), 1936 թե (մայիս-հունիս), էջ 58:

Կլեմանտյե Գ., *Дипломатия*, с. 45:

³⁶ Տե՛ս «Аρχαίαστρα, или Наука о политике». Антология мировой политической мысли, В 5-и томах. Том I, М, 1997, с. 135.

**ՌՈՒԲԵՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՄԱՇՐՋՈՒՄՆԵՐՈՒ ԱՐԵՏԸ
ՓՈՔՐԱՄԱՆՈՒԹՅԱՆՑ ՀԱՄԱՐ**

ԹՐՔԱԿԱՆ ԴԻՄԱՇՐՋՈՒՄ (ՕՐԻԱՆԹԱՍԻՈՆ)

Ասիանափակելով մեր դիտողությունները միմիայն Թուրքիոյ արևելյան նահանգներու ժողովուրդներու վերաբերմունքին շուրջ՝ կոտեսնեք մոտիկ անցյալի պատմությունն, թե Լազիստանը, Քյուրտիստանը և Հայաստանը փորձած են ամեն կերպ համակերպիլ թուրք գերիշխանության, օժանդակել անոր իբր հավատարիմ բաղաքացի, չհանգարել անոր ծրագիրները և Նույնիսկ հրաժարիլ իրենց մարդկային իրավունքներեն, միայն թե իրենց ֆիզիկական գոյությունը չվտանգվեր: Բայց այդ ջանքերը ապարդյուն մնացած են:

Լազիստանը, որ կազմված է լազերով, իսլամացած հույներն և հայերն, ուրացավ կրոնը՝ իսլամությունը ընդունելով: Այդ ժողովուրդները մոռցան իրենց լեզուն՝ պահելով բարբառները մայրենի հարկին տակ, դարձան Ալլաանիո նման գործիք պետության ձեռքը՝ ընդդեմ քրիստոնեության, տվին բազմաթիվ պետական անձեր, որոնք փառքն ու պատիվը կհամարվին Թուրքիոյ, բայց անոր փոխարեն վարձատրվեցան տնտեսական ճնշումով, ժողովուրդներու տեղահանությամբ և ջարդով. այն թուրք հասկացողությամբ, որ ազգային հիշողություններն իսկ կխանգարեն Թուրքիոյ առողջությունը, անտեց արյան տարբեր գնդիկներն իսկ վտանգ են Թուրքիոյ կենսունակության: Թուրքիա դեռ Հիթլերի ձեռելն առաց ցեղապաշտ եղավ «Իթթիհատ»-ի գործի գլուխ գալեն վերջ, մինչև հիմա, փոխարինելով նախկին «պանիսլամիզմը» իր «պանթուրանիզմով»:

Շեռնանքը այս զոհաբերությանց և այս հողի վարձատրությանց, հասկնալի պետք է համարել, որ Լազիստանի ցեղերը պիտի ունենան

միայն մեկ բաղձանք - Թուրքիոյ կործանումը, իրենց անջատումը և գեորդասումը ամեն տիրապետության, բացի Թուրքիայեն:

ՔՅՈՒՐՏԵՐԸ

Լազիստանեն հետո Քյուրտիստանն է եղած, որ գործն կերպով ջանացած է Թուրքիոյ մեծացման և հզորացման համար: Քյուրտերը «համիտիե» գունդեր կազմեցին հոգուտ Թուրքիոյ, չինայեցին իրենց ցեղակից, լեզվակից եգիտ, Ջազա, Ղզլբաշ քյուրտերուն, հալածեցին զանոնք՝ կուրորեն ծառայած ըլլալու համար թուրք «պետական» ցանկության: Անոնք չինայեցին իրենց բախտակից, արյունակից քրիստոնյա հայության և քյուրտն ու իր «համիտիե» գունդերը պատուհաս եղան հայ ազատագրական պայքարին: Քյուրտը հոգուտ Թուրքիոյ իր կուրծքը դեմ տվավ ներխուժող ռուս և այլ բանակներու, ան իր կյանքը չինայեց Թուրքիոյ պահպանման և հզորացման համար: Բայց այս բոլոր անխորհուրդ զոհաբերությունները վարձատրվեցան տարօրինակ ձևով. անոնց ինքնավարությունները վերցվեցան և իշխանական տները մարեցան, անոնց լեզուն արգիվեցավ և դաստիարակությունը քյուրտ լեզվով մահացու հանցանք նկատվեցավ: Հո՞ծ բազմությունները Անատոլիոյ մեջ ցրվեցան, քրտական բնագավառները ամայաջուռ. հայկական ջարդերը լմենալեն վերջ, սկսավ քյուրտերու բնաջնջումը և այսօր քրտական ջարդը կկատարվի, որպեսզի ըսվի թե քյուրտ ազգ չկա և քյուրտը թուրք է:

Բնական է, որ այս ընթացքի հետևանքով, քյուրտի համար այլևս թուրք հովանավորությունը անընդունելի է:

ՀԱՅԵՐԸ

Քյուրտերեն վերջ հայերը եղած են Թուրքիոյ համար գործն հավատարիմ տարրը. անոր մակնունը պետության համար ժամանակին «միլիթերի սաղըկան» էր (հավատարիմ ազգ), իսկ օտարները կանվանեին (Մուլթե) «քրիստոնյա թուրք»: Հայերը թեև կհամադին պահել իրենց լեզուն, կրոնը, բայց խիստ հավատարիմ էին պետու-

թյան. թուրք մամուլի, թատրոնի, ճարտարարվեստի, վաճառակա-
նության տերն էին: Անոնց կղեկավարեին պետական ֆինանսը և կու-
տային պետական ղեկավարներ: Անոնց ձեռքն էր հյուսվածեղենի,
կերպասի, ապրշումի գործը և արևելյան նահանգներու երկրագոր-
ծության զարգացումը: Ան էր բանակի հայթայթիչը, կազմակերպողը,
թեև արգիվված էր անոր զինվորությունը: Ան անջատական չէր, դեմ
էր բոլոր Թուրքիո թշնամիներուն, պայմանով, որ իր գոյության, լեզ-
վին, կրոնքին, ազատության ձեռք չտրվեր:

Այս հավատարմությունը չգնահատվեցավ. անոր լեզվի, կրոնքի
ազատությունը սահմանափակվեցավ. ան նկատվեցավ վնասակար
տարր և պարբերաբար կտորոհածներ կազմակերպվեցան՝ անոր
աճեցողության առաջը առնելու համար, և ի վերջո բնաջնջվեցավ և
իր հայրենիքեն դուրս արտաքսվեցավ: Այս վերաբերմունքը բնական
հետևանք պիտի ունենար, որ հայը դառնար անջատական և կամ իր
փրկության խարխիսները որոնել օտար տիրապետությանց մեջ:

Այսպիսով՝ Թուրքիո բաղկացուցիչ լազ, քյուրտ, հայ ժողովուրդ-
ներու համար թրքական համակրության և անոր հետ գործակ-
ցության բոլոր հավանականությունները վերացած են և դառնորեն
փորձված այդ վարքագիծը նորեն փորձել անհնարին է, քանի չէ հե-
ղաշրջված Թուրքիո մտայնությունը, քանի բռնատիրական ռզին
կտիրապետե անոր մեջ: Այս հուսաբեկումը այդ ժողովուրդները մղած
է մեկ կողմե դեպի օտար ուժերը, իսկ մյուս կողմն ազգային վերա-
գարթնումը:

ՌՈՒՍԱԿԱՆ ԴԻՄԱՆՔՆՈՒՄ

Մենք տեսանք, որ Թուրքիո լազ, քյուրտ, հայ տարրերու համար
այլևս անհնար է և շահ չկա կենակցիլ Թուրքիո հետ, և անոնք իրենց
աչքերը հառած են դուրսի պետությանց աջակցության և կամ իրենց
սեփական ուժին վրա:

Մենք տեսանք, որ դուրսի պետություններեն միայն Ռուսիան է,
որ գործնականորեն և կենսապես շահախնդիր է Թուրքիո վրա իր

թևարկությունը տարածելու, իր պաշտպանողական և աշխարհակա-
լական նպատակներու և իր մրցակից Բրիտանական կայսրության
տապալման համար: Այդ ուժին դեմ Բրիտանական կայսրությունն է
ծառայած և կենսականորեն շահագրգռված է Թուրքիո վիճակով,
որպեսզի ան գոյություն ունենա իբր պատվար Ռուսիո դեմ՝ իր հսկո-
ղության և հովանու տակ:

Եվ վերջապես երրորդ դրությունն այն է, որ Թուրքիան իր ար-
տաքին քաղաքականության առանցքն ունի.- Կամ ըլլալ Անգլիո հետ
և դեմ ըլլալ Ռուսիո և կամ ըլլալ Ռուսիո հետ և դեմ ըլլալ Անգլիո:

Արդ, վերոհիշյալ դրությունները նկատի առնելով պետք է քննել,
թե որքան նպատակահարմար է ռուս կամ անգլիական դիմաշրջում
ունենալ այդ ազգերուն կողմե, և որքան հնարավորություն կա իրենց
իղձերու իրագործման՝ այդ վարքագծով, և ինչ վտանգներ և հավա-
նական հաջողություններ կրնան ունենալ այդ ժողովուրդները:

Հետևյալ դրությունները կարող ենք պատկերացնել.

ԱՌԱՋԻՆ ԿԱՅՈՒԹՅՈՒՆ.- Հայաստան, Քյուրտիստան, Լազիս-
տան միասնաբար ունին ռուսական դիմաշրջում և անոր միջոցով
կուզեն ազատագրվիլ և կամ անոր լուծին տակ կուզեն մտնել: Այդ
պարագային հետևյալ հավանականությունները անտեսելու չէ.

Ենթադրենք, որ միաժամանակ թուրք իշխանությունն ալ ունի
ռուսական դիմաշրջում և իր ապահովությունը կորոնե Ռուսիո հետ
դաշնակցելով, կամ անոր հովանիին տակ մտնելով, կամ անոր հետ
ձուլվելով՝ իր գոյությունը ապահովելու համար:

Այս դիմաշրջումներու զուգադիպումը երևակայական չէ. ան պա-
տահա՞ծ քան է, Ռուսիո թե Թուրքիո միջև, ինչպես 1920- 45 թվերուն
և ներկայիս ալ Մուրթովի պահանջը ուրիշ քան չէ, եթե ոչ «գլուխ
գլխի» լուծել իրենց հաշիվները և վերանորոգել 1945-ին վերջ գտած
ռուս և թուրք դաշինքը:

Երբ այդպես կպատահի, հասկնալի է, որ միայն հիմարները պի-
տի կարծեն, թե Ռուսիան պիտի գերադասե հանուն «արդարության»

նախընտրել թույլ քյուրսերու, հայերու, լազերու հետ ըլլալ և մերժել թուրք բարեկամությունը և աջակցությունը, որը իր հիմնական նպատակն է: Երբ այդ կացությունը ստեղծվի, հասկնալի պետք է համարել, որ Ռուսիան պիտի զինե, կազդուրե 127 ճնշված ազգերու սպասելիքները, եթե խոստումներ իսկ տված ըլլա, ինչպես 1917-ին՝ Լենին-Սթալին դեկրետ՝ տրված հայերուն, ոչինչ համարվեցավ, և իր ու թուրք բարեկամությունը խանգարող այդ ազգերը պիտի նկատվին անվստահելի, և, ո՛վ զիտե, թե Թուրքիան նույն ազատությունը չպիտի ունենա գործադրելու իր ծրագիրը այդ ժողովուրդներու վերաբերմամբ, ինչպես ունեցավ 1914- 1918-ին Գերմանիո թույլտվությամբ և աջակցությամբ. ո՛վ ի վիճակի է հերքելու, որ Ռուսիան, ինչպես 1919-21-ին, ի խրախույս «թուրք-ռուս եղբայրության», ո՛չ միայն թաղեց Սևրի դաշխիքի տրամադրությունները այդ երկիրներու վերաբերմամբ, և Կարսն ու այլ շրջանները նվիրաբերելով «եղբայրական Թուրքիո», այսօր ալ կրնա նոր նվերներով ամրացնել այդ «եղբայրությունը»:

Եթե ըսվի, որ պատմությունը այս անգամ չպիտի կրկնվի, և տրամաբանությունը չէ, որ ամեն անգամ կյանքին ընթացք կուտա, և այդ մտահոգությունները չափազանցված են, այդ պարագային ալ մեկ ուրիշ վտանգ անկասկած պետք է համարել:

Երբ անգլոսաքսոններու համար կենսական նպատակ է դարձած Թուրքիայեն հեռու պահել ռուսական ազդեցությունը, բայց անոր դիմաց, երբ տեսնեն ռուս-թուրք դաշնակցություն, եղբայրություն, անոնք այդ բոլորը պիտի նկատեն թշնամություն մը իրենց դեմ ուղղված. ապա ուրեմն անոնց նպատակը պիտի դառնա ո՛չ թե Թուրքիո ամբողջականության պահպանումը, այլ անոր քայքայումը և նոր ուժով մը փոխարինումը՝ իբր պատնեշ իր և Ռուսիո միջև:

Այս դրությունը պիտի դարձնե Թուրքիան պայքարի, խռովությանց և զուցե պատերազմի ասպարեզ:

Իսկ մյուս կողմե Լազիստան, Քյուրտիստան, Հայաստան, որ նույնպես ունեցած են ռուսական ուղղություն, պիտի նկատվին Ռուսիո հառաջապահը և քնականաբար անոնք իբր թույլ առաջին հեր-

թին քավության նոխազ պիտի դառնան և անոնք պիտի վտանգվին իրենց երկիրներու սահմաններեն դուրսն ալ, առավելապես Մերձավոր Արևելքի մեջ, ուր կապիրն շուրջ կես միլիոն հայություն և երեք միլիոն քրտություն: Իրաքի, Իրանի, Սուրիո քրտությունը թե քաղաքականապես, թե ֆիզիկապես պիտի վտանգվի, իսկ հայությունը պիտի կորսնցնե իր միջազգայնորեն վաստկած դատը և հալածանքի առարկա դառնալու ամեն հավանականությունը պիտի ունենա:

Ահա այն վնասները, որ առաջ պիտի գան Հայաստանի, Քյուրտիստանի, Լազիստանի ռուսական դիմաշրջում ունենալու իբրև հետևանք: Վնաս և վտանգ՝ առանց օգուտի:

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՑՈՒԹՅՈՒՆ.– Ենթադրենք, որ թուրք իշխանությունը անգլոսաքսոններու հետ դաշնակցած է, և կամ անոր հովանիի տակ մտած՝ կուզե ապահովել իր գոյությունը:

Միաժամանակ ենթադրենք, որ Թուրքիո դժգոհ տարրերը՝ Լազիստան, Քյուրտիստան, Հայաստան՝ հակառակ թուրք ուղղության, ունին ռուսական դիմաշրջում և կձգտին իրենց գոյությունը և իրավունքները ապահովել Ռուսիո միջոցով:

Այս ենթադրությունները վերացական չեն և համարյա ներկա իրականության կհամապատասխանեն, բայց այդ չէ կարևորը. կարևորն այն է, թե ինչ անդրադարձումներ և հետևանքներ պիտի ունենան նման վարքագծերը:

1) Պարզ է, որ առաջին հերթին անգլոսաքսոնները, իրենց հետ ունենալով Թուրքիան, պետք է մոռնալ ձևանան անոր անցյալը և անոր միայն սպիտակ կողմերը պիտի ուզեն տեսնել:

2) Թուրքիան ավելի ուժեղ և կարևոր ըլլալով իրենց կայսերական շահերուն համար, գայն ավելի պիտի գերադասեն, քան Լազիստան, Քյուրտիստան, Հայաստան, թեկուզ արդարությունը և իրավունքը այս փոքրիկներու կողմը ըլլա:

3) Թուրք-անգլոսաքսոն բարեկամությունը չպտորելու համար, Հայաստանի, Քյուրտիստանի, Լազիստանի հարցեր չպիտի հարու-

ցաննե, թեև անոնց հանդեպ պաշտոնապես պարտավորություններ ստանձնած էին թե՛ միջազգայնորեն և թե՛ իրենց ժողովուրդի առաջ՝ սահմանավորելով անկախ Հայաստանի և ինքնավար Բյուրտիստանի սահմանները:

4) Վերոհիշյալ եթե ոչ իրավական, գոնե բարոյական պարտավորություններն ազատվելու համար, անզուսաքսոնները պիտի թողնեն այդ հարցերու լուծման մենաշնորհը Ռուսիո, տարածայնելով, որ «հայկական, քրդական և այլ հարցերը կարող են լուծվիլ հզոր Ռուսիո կամբով միայն և այդ հարցերը անոնց ներքին հարցերն են»: Այս միջոցով անոնք շոյած կըլլան ռուսական ինքնասիրությունը և երբ անսխալի և տեր կանգնի այդ միջազգային հարցերուն, Թուրքիան ավելի սերտորեն պիտի փարի իրենց, ինչ որ իրենց նպատակն է: Մյուս կողմն՝ անզուսաքսոն հովանիի տակ եղած Թուրքիան կազատվի միջազգային ճնշումն և կիյնա լոկ ռուսական ճնշումին ներքև, որով հայկական, քրտական հարցերը կդառնան ռուս-թրքական ներքին վեճ:

5) Եթե պատահի, որ հայ, քյուրտ, լազ ժողովուրդները իրենց միջազգայնորեն ճանչցված հարցերը լքեն և համաձայնին Ռուսիո միջոցով միայն իրենց փրկությունը գտնել, և անոր սահմաններուն մեջ մտնել, այն ատեն միջազգային շուկայի մեջ ինքնըստինքյան այդ հարցերը վերացած կըլլան, բոլոր նախորդ համաձայնությունները, Ազգերու լիգայի, Սևրի, Սան-Ռեմոյի և այլն, չեղյալ կդառնան, իսկ մյուս կողմն եվրոպական հանրային կարծիքները կհանգստանան, որովհետև անոնք այդ համոզումը պիտի կայացնեն, թե «այդ ժողովուրդները զուրկ են ինքնորոշման հասունութենն և ընդունակ են լոկ ռուս աշխարհակալության և բուշլիզմի առաջապահը ըլլալու»:

Վերոհիշյալ դրություններն պարզ է, որ ռուսական դիմաշրջում Թուրքիո փոքրամասնությունները (հայ, քյուրտ, լազ) պիտի գրկն ոչ միայն եվրոպական համակրութենն իրենց հանդեպ, այլև անոնց միջազգայնորեն ընդունված դատերը պիտի մերկացնեն և դարձնեն թուրք և ռուս ներքին հարցեր, որոնք կրնան շահը ըլլալ Թուրքիո,

Ռուսիո և Անգլիո, ինչպես վերը մատնանշեցինք, քայց քնավ երբեք հայության, քրտության և լազության համար:

Գուցե փոքր ազգերու ռուսական դիմաշրջումը և իրենց համար ակններև վնասներու հանձնառումը պիտի փոխարինվի Ռուսիո կողմն նպաստավոր փոխվճարումով:

Բնական է, քանի թուրք վարչությունը ունի անգլիական ուղղություն, քանի ան կգերադասե անգլիական հովանիի տակ մտնել, Ռուսիան պիտի որոնե թուրք ընդդիմադիրներու, Թուրքիո ճնշված փոքրամասնությանց՝ լազերու, քյուրտերու, հայերու համակրությունը ունենալ իրեն հետ: Ան այդ բանով երկու տեսակի շահեր կապահովե, առանց մտնելու որևէ պարտավորության տակ: Ան կարող է ներկայանալ հաչա փոքրամասնությանց և ընդդիմադիր թուրքերու՝ իբր ազատարար և ունենալով Թուրքիո ծոցին մեջ շոչափելի ուժ, կարող է զանոնց իբր ճնշման գործիք ծառայեցնել թուրք իշխանության վրա, որպեսզի ան լքե իր անզուսաքսոն ուղղությունը և մտնե իր հովանիին տակ, երկրորդ, եթե այդ չհաջողի և Թուրքիան համառի միշտ մնալ իր դիրքին վրա, պիտի կարողանա այդ ուժերը գործածել Թուրքիո քայքայման համար:

Այս երկու շահերը կանխիկ են Ռուսիո համար, առանց բարոյական, նյութական, արյան տուրք տալու հարկադրանքին տակ իյնալու: Վնասվողը կըլլան Թուրքիան, անոր ընդդիմադիրները և փոքր ազգերը: Որքան այդ վնասը շատ ըլլա՝ իրեն համար ավելի լավ է:

Որքան կրնա երկարիլ այս վնասի տևողությունը՝ դժվար չէ ճշտելը: Թուրքիո ներքին խռովությունները և փոքր ազգերու խլրտումները պիտի հարատևեն, քանի Թուրքիան չէ լքած Անգլիան և Ռուսիո հովանիի տակ չէ ինկած, քանի կշարունակվի անզու-ռուս մրցակցությունը և անոնք իրարու հետ չեն համաձայնած կամ անզու-ռուս պատերազմ չէ եղած և այս գորոյան հանգույցը դանակով չէ կտրված: Այս վերջինը, հակառակ եղած արճովներուն, դժվար թե պատահի. այդ դանակը կգտնվի ոչ թե Ռուսիո ու Անգլիո ձեռքը, այլ միջազգային կամքի ձեռքը, որուն, ուզեն թե չուզեն, պիտի ենթարկ-

վին երկու մրցակից ուժերը:

Մենք ակնարկեցինք, որ Թուրքիոյ փոքրամասնութիւնները, լազ, քյուրտ, հայ, համարյա ունին ներկայիս ռուսական դիմաշրջում: Այսօր այս իրականութիւն պետք է համարել և այդ իրականութիւնը ծնունդ է ոչ այնքան առարկայական տվյալներու, որքան զգացական և երևութական տպավորութիւն: Այդ ազգերու համար վերջնականորեն պարզված է, որ իրենց ազատութիւնը և իրենց իրավունքներուն տեղ ըլլալը հնարավոր է միմիայն Թուրքիոյ փճացումով: Այս համոզումը ելակետ ունենալով՝ կմտածեն. «Ով Թուրքիոյ ամբողջականութեան կողմն է, անոր հետ չեն կրնար ըլլալ, ով Թուրքիոյ ամբողջականութեան դեմն է, անոր հետ պետք է ըլլալ»:

Այսօր երևութապէս անզուսաքսնները Թուրքիոյ ամբողջականութեան կողմն են, իսկ Ռուսիան երևութապէս անոր դեմ է. ուրեմն՝ պետք է ըլլալ Ռուսիոյ հետ և ան է ըլլալու իրենց ազատարարը: Այս պարզունակ մտածողութիւնը ավելի ուժ կառնեն անով, որ անզուսաքսնները՝ մեկ կողմն, և ռուս պրոպագանդը՝ մյուս կողմն, կխրախուսեն այդ մտածելակերպը, յուրաքանչյուրը իր թաքուն հաշիվներով, որ վերը մատնանշեցինք:

Այսօր իրականութիւն է, որ մահմետական Լազիստանը իր աչքերը հառած է դեպի Մոսկովա և Թիֆլիս, հոն որոնելով իր ապավենը, թելկուզ հեռավոր իր ազգակիցներեն Վրաստանի «պրոֆետրները» արծազանք ըլլան իրենց բաղձանքներուն:

Այսօր ցլուրտերը, որ կրոնքով, ընկերային կազմով, ավանդութեամբ անչլոթիւն չեն ունեցած Ռուսիոյ և անոր բոլշևիզմին հետ, աչքերը հառած են դեպի Ռուսիա՝ Թուրքիայեն սկսած մինչև Սուրիա, Իրաք և Իրան: Թեկուզ Ռուսիան ո՛չ մեկ պարտավորութիւն և նոյն-իսկ ցանկութիւն արտահայտած ըլլա փոխադարձելու այդ հավատին և հոյսին:

Այսօր հայութիւնը իր աջ ու ձախ թևերով, զլոխ ունենալով հոգևոր պետերը, պահպանողական հոսանքները, շարժիչ ուժ ունենալով ձախ հոսանքներեն կոմունիստները, ոչ թե կիտա, որ ամե-

նազոր Ռուսիան վճռած է անպայման վերջ տալ հայու տառապանքներուն և ան անպայման պիտի գրավեն Տաճկահայաստանը (կարդա՛ Սրբաբարեանի Հայաստանը՝ Լ.Շ.) և ամբողջ ցիր ու ցան եղած հայութիւնը պիտի գումարե իրենցի հողերուն վրա:

Այս հավատքը, որ ծնունդն է անկարողութեան և հուսահատութեան, այնպիսի թափ մը առած է, որ վարակած է տնտեսապէս, բազմազանապէս և ֆիզիկապէս տառապող զարդութեամբ բազմութիւնները: «Մեր փրկութիւնը միայն Ռուսիան է»: Թերահավատ ըլլալ կամ աւարկել այս կրոնական (ընդգծումը իմն է՝ Լ.Շ.) հավաստիքին՝ համազոր է դավաճանութեան, հերձվածի և որովհետև Ռաշակցութեան զանգվածը թերահավատ է և կուզի դատել, ան արժանի է խարոյկի վրա բարձրանալու:

Ես ալ այդ թերահավատներու շարքին կգտնվիմ և անմիտ կնկատեմ նման կոյր հավատքը: Բայց ինչո՞ւ այս աններդաշնակութիւնը կրոնական խորհրդավոր պահուն, երբ վեհափառներն են ծիսակատարները՝ և սարկավազները՝ կոմունիստներ, պնակ պտտեցողները՝ ռամկավարներ և աղաներ: Սրբապաշտութիւն չէ՞ աններդաշնակութիւնը: Ոչ պետք է ըսել, որովհետև եղածը պարզ ցնորք և մոլորութիւն է, բայց ցնորք և մոլորութիւն մը, որ սուղի պիտի նստի: Շատեն քիչը փրկելու համար պետք է ջանանք փարատել այդ ցնորքը և մոլորութիւնը:

Փարատելու համար այդ ցնորքը և մոլորութիւնը՝ հետևյալ հարցումները պետք է դնել և պատասխանը գտնել:

1.- Ռուսիոյ ներկա փայլը նոյնքան շլացուցիչ է, որքան երեկ նացիզմի փայլը. այդ փայլը որքան տևական է, կարո՞ղ է որևէ մեկը հավաստիքներ տալ: Այդ անորոշութիւն մըն է, որքան երկնքի կայծակը, որ իր ուժի և փայլի մեջ ավելի լավ առաջնորդ չի կրնար ըլլալ մթութեան մեջ, քան մեր ձեռքի աղոտ լապտերը, որ կրնա փրկել ամեն փորձանքներն, խորխորատներն, թեկուզ ան ըլլա աղոտ և անփայլ լոյս:

2.- Հայկական այդ աղոտ լապտերին վրա գրված է. «Ռեպիլ

Միացյալ, Անկախ, Ազատ Հայաստան՝ Դաշնակցություն ճնշված հարևան ազգերու հեփ: Պայքարով կվաստվիս քու իրավունքը: Ան-հատի, դավանանքի, ցեղի ազատություն:

Այս լապտերը հնացած կհամարվի ֆհառաջդիմականներու» կողմն: ան փշրելու արժանի կնկատվի. անոր լապտերակիրները՝ Արամները նախատինքի կենթարկեն և հաղթականորեն կկանչեն. «Դեպի Խորհրդային Միություն, անկախությունը, ազատությունը, իրավունքը արդեն իրագործված է Խորհրդային Միության մեջ և Խորհրդային Միությունը պիտի իրագործեն անկասկած Միացյալ Հայաստանը»:

Անկասկած չէ, այլ կասկածելի է այս նոր նշանաբանը. որովհետև մենք չէ, որ պիտի առնենք, այլ մեզ պիտի տա Խորհրդային Միությունը, և չենք գիտեր այ, թե ինչո՞ւ պիտի տա: Խորհրդային Միությունը իր հնգամյա ծրագիրներու մեջ, իր արտաքին պահանջներու մեջ, չունի առաջադրած «Միացյալ Հայաստանի» ստեղծման հարցը և այդ վերագրումը երևակայական է:

3.- Ենթադրենք, թե երևակայական չէ և իրոք Խորհրդային Միությունը Միացյալ Հայաստան ստեղծելու մտադրություններ ունի: Եթե ունի, հայության և ի մասնավորի գաղութահայության դրական կամ քաջասական վերաբերմունքը արժեք ունի՞ այդ ծրագրի գործադրման համար:

- Շատ չնչին արժեք, որմե Խորհրդային Միության ուժը ո՛չ պիտի ավելնա և ո՛չ այ պակսի: Հակառակ մտածողները գոմեջի եղջյուրին նստող այն ճանճերն են, որոնց կթվի, թե գութան կքաշեն:

4.- Դիմա՞ծ է Խորհրդային Միությունը որևէ պաշտոնական մարմնի, ըլլա աշխարհիկ, ըլլա հոգևորական, որ Միացյալ Հայաստանի ստեղծման համար իր աջակցությունները բերե: Դիմա՞ծ է որևէ հոսանքի, որևէ կուսակցության: Ո՛չ, պետք է ըսել, որովհետև ատոնց ո՛չ կարիքը ունի և ո՛չ այ նման ծրագիր: Ցարդ և ոչ մեկ մարմին չէ հայտարարած, թե Խորհրդային Միությունը նման ցանկություն ունի: Ուրեմն Խորհրդային Միության անունով երդում-պատառ եղողները ձրի և անպատասխանատու փաստաբաններ են և կպաշտպանեն

հարցեր, որոնք չեն առաջադրված:

5.- Եթե Խորհրդային Միությունը նման ծրագիր ունենար, որո՞ւ միջոցով և ինչպե՞ս պիտի հետապնդեր. իհարկե առաջին հերթին Խորհրդային Հայաստանը, որ ըստ Խորհրդային Սահմանադրության՝ Միության հավասարազոր իրավունքները ունի և իրավականորեն քաղաքական միավոր է և հայկական իշխանություն: Խորհրդային Հայաստանն է, որ Խորհրդային Միության համամտությամբ, պիտի ղեկեր Խորհրդային Հայաստանի սահմաններու ընդլայնումի հարցը:

Արդ, Խորհրդային Հայաստանը, իր արտաքին նախարարների միջոցով, Թուրքիո, Դաշնակիցներու և կամ Խորհրդային Միության կառավարությանց դիմում կատարա՞ծ է Հայաստանի սահմաններու ընդարձակման համար. հայտնի է, որ ո՛չ, և կամ փսփսուքներով սահմանավորված:

6.- Խորհրդային Հայաստանը, իբր հավասարազոր անդամ Ուրախինո, Բելոռուսիո, կմասնակցի՞ Ազգերու ժողովին՝ վերագրավելու համար հայկական հողերը, ինչպես Ուրախինան, Բելոռուսիան վերագրավեցին իրենց հողերը: Այդպիսի բան չկա:

Ինչպե՞ս բացատրել Հայաստանի կառավարության բացակայությունը և լուրջությունը բոլոր ժողովներուն մեջ, երբ անպատասխանատու անձեր կաղմկեն՝ Խորհրդային Հայաստանի սահմանները ընդարձակելու բաղձանքներով:

Եթե կույր չենք, դժվար չէ տեսնել Խորհրդային Հայաստանի լուրջության պատճառները: Խորհրդային Միությունը վճիռ չունի Միացյալ Հայաստանի ստեղծման մասին և իրահանգ չունի Խորհրդային Հայաստանին տված՝ նման գործի նախաձեռնարկ ըլլալու: Այդ գործը առայժմ գոնե վաղահաս է և կամ կգտնե վնասակար՝ ընդհանուր պետական շահերու տեսակետեն, ինչպես 1920- 45 թվերուն, և կամ անհնարին կնկատե անոր իրագործումը:

7.- Եթե Խորհրդային Միությունը վճիռ չունի Միացյալ Հայաստան ստեղծելու մասին, եթե Խորհրդային Հայաստանը ոչ մեկ քայլ չէ առած իր սահմաններու ընդարձակման համար և ջուրը բերան ա-

ուած լուրջություն կպահեի, ապա ովքեր՝ ու են, որ կաղմկեն Երևանեն մինչև Անան-Ֆրանցիսկո, Փարիզ և Պոտսդամ: Ի վերջո՝ կաղմկեն մամուլով և հուշագրերով ամենուրեք. միլիոնավոր մարդիկ կսպասեն և արդեն յոժված կհամարեն հայկական հարցը:

Այս խարկանքի սկիզբը դրվեցավ խորհրդավոր պայմաններու մեջ չքացած, հանգուցյալ կաթողիկոսի տեղ տոր կաթողիկոսի մը ընտրության օրեն: Եկեղեցական թե ազգային համագումար մը սարքվեցավ, ձեռնպահությամբ Դաշնակցության, մասնակցությամբ բոլոր աջ ու ձախ հոսանքներու և հայ հոգևորականության:

Արտասահմանի պատգամավորները ընտրվեցան անզվիացիներու: քթի տակ և այն հանգամանքը, որ անզվական սավառնակներով և վիզաներով ժամանակին հասան Էջմիածնի համագումարին, նշան էր, որ անոնք համամիտ էին այդ համագումարին:

Այն հանգամանքը, որ անզվական եպիսկոպոսն ալ ներկա եղավ այդ համագումարին, որջունեց համագումարը և արդար գտավ անոր որոշումը Հայաստանի սահմաններու ընդարձակման մասին, ոչ թե նշան է անպաշտոն Անզվիո բարյացակամության, սրտացվության դեպի հայկական դատը, այլ անպաշտոն կերպով տրված որդում մը հայության, որպեսզի փարի խորհրդային Միության, ձեռք քաշե իրմե, միջազգային դատեն և դարձեն իր դատը ռուս և թուրք վեճ, այն միտումներով, որ վերը բացատրեցինք:

Միաժամանակ, այն հանգամանքը, որ համագումարը գումարվեցավ Էջմիածին, ուր օձը իր պորտով, ծիտը իր թևով չէր կրնար երթալ, նշան է, որ համագումարը եղած է խորհրդային Միության թույլտվությամբ:

Այն հանգամանքը, որ համագումարին կմասնակցին անպաշտոն կերպով պետական մեկ-երկու մարդիկ, նշան է, որ ո՛չ խորհրդային Հայաստանի և ո՛չ ալ խորհրդային Միության իշխանությանց համար համագումարի որոշումները և բաղձանքները պարտադիր չեն:

Ուրեմն՝ համագումարին ինչպես անզվացի եպիսկոպոսը ներկա

է աչքի ծարիր քաշելու համար, նույնպես ներկա է խորհրդային Միությունը և խորհրդային Հայաստանի ներկայացուցիչը՝ շագանակները կրակեն համագումարի ձեռներով հանել տալու համար:

8. - Եկեղեցական համագումարը առավելապես քաղաքական բնույթ ունեցած է: Եթե կաթողիկոս ընտրելը եկեղեցական գործ է, քայց դիրք ճշտելը՝ հանդեպ պապականության և դաշնակիցներու, գերադասելով անոնցմե Ռուսիան, և կամ հողային պահանջներ արձարծելը հօգուտ խորհրդային Հայաստանի՝ եկեղեցական գործ չէ: Արդ, հարց առաջ կուգա.- Ինչո՞ւ խորհրդային Հայաստանի կառավարությունը, որ ունի իր խորհուրդը, իր պաշտոնական հիմնարկությունները, չի ձևակերպեր գոնե իր երկրի սահմաններու ընդարձակման խնդիրը: Կարո՞ղ է պատահիլ, որ ան անտարբեր ըլլա նման հարցերու մեջ. իհարկե ոչ: Կարո՞ղ է պատահիլ, որ ան իրավագուրկ է նման հարցերու արձարծման մեջ և ատոր համար հավաքած է համագումարը. իհարկե ո՛չ, քանի որ ան խորհրդային Միության համահավասար անդամն է՝ Ուքրաինիո, Բելոռուսիո և մնացած «անկախ» հանրապետությանց հետ, և եթե Ուքրաինան և մյուսները կրցան հողային պահանջները ձևակերպել, Հայաստանն ալ կրնար իր պահանջները ձևակերպել:

Կարո՞ղ է պատահիլ, որ խորհրդային Հայաստանի իշխանությունը զուրկ ըլլա հայրենասիրութենե և իր երկրի սահմաններու ընդարձակման շահագրգռութենե. իհարկե ո՛չ, քանի որ նույն իշխանությունը ներգաղթի համար իրավունք առած է Մոսկվայեն և զանգատ հայտնած է, թե տարագիր հայության հազիվ մեկ փոքր մասին տեղ ունի իր երկրին մեջ:

Արդ՝ վերոհիշյալներեն դժվար չէ կռահել, որ խորհրդային Հայաստանի իշխանությանց լուրջ պատճառներ կան, որոնք կհարկադրեն արտաքին գործոց նախարարության Հայաստանի մեջ տնկված ծառերու քանակը որոշել, թեպետ այդ գործն է երկրագործության նախարարի: Արտաքին նախարարը կրնար զեկուցել միջազգային ժողովներու, հայկական դատի, Հայաստ-

տանեն բռնագրավված հողամասերու մասին: Ինչո՞ւ այդ ողորմելի դրությունը դժվար չէ տեսնելը: Պատճառը Մոսկվայի արգելքն է Հայաստանի Խորհրդային կառավարության հայկական հարցը հարուցանելու իր բովանդակ ծավալով:

Այդ արգելքը կրթի Մոսկվայի հիմնական երկու մտահոգություններեն: Առաջինը՝ այն, որ Մոսկվան խիստ շահագրգիռ է, որ «զուլս գլխի» Թուրքիո հետ քանակցելով լեզու գտնեն անոր հետ՝ 1945-ին վախճանած ոռւս-թուրք եղբայրության դաշինքը վերանորոգելու համար: Հայկական հարցի *յո՛վ ծավալով* (ընդգծումը իմն է՝ Լ.Շ.) պաշտոնապես արձարծվիլը իր կամ իրեն ենթակա Խորհրդային Հայաստանի կառավարության կողմն, համազոր կղառնա անկարելի դարձնելու թուրք-ռուս բարեկամության վերականգնումը: Տարբեր քան է, երբ հայկական հարցը արձարծվի անպաշտոն համագումարներու, խմբակցություններու կողմն. անոնց պատասխանատուն չեն Խորհրդային Միության կառավարությունները: ընդհակառակը, նման դիմումներ կրնան գետք ծառայել Թուրքիո վրա ճնշում գործ դնելու, ռուսթուրք բարեկամությունը արագացնելու և առիթը տալու Ռուսիո, որ հայտարարեն.- «նայելով հայոց ժողովրդական միահամուռ քաղճանքին, ես պատրաստ եմ զսպելու անոնց, եթե...»:

Երկրորդ, Մոսկվայի հիմնական մտահոգությունը այն է, որ Հայկական Դատը չվերարձարծվի այն ձևով, ինչպես եղավ 1920-ին Սևրի մեջ: Անկախ Հայաստան մը իր և Մերձավոր Արևելքի մեջ, միջազգային երաշխավորությամբ ապահովված, Ռուսիա իր տիրական շահերուն դեմ կհամարեն: Ատոր համար ան սպաննեց Սևրը և առաջ բերավ Լոզանի դաշինքը 1923-ին: Արդ, Խորհրդային Հայաստանը, եթե պահանջե ըստ Լենին-Սթալին 1917-ի դեկրետին և կամ եթե պահանջե ըստ Սևրի դաշինքի Վիլսոնյան սահմանագծով հայկական հողերու վերադարձը Խորհրդային Հայաստանին, այդ պարագային պահանջքին հետ իրավական հիմք կառնեն և այն, որ միջազգային խոստումները եղած են անկախ Հայաստանին և ոչ թե Խորհրդային Հայաստանին, որ մասն է Ռուսիո:

Մեր հիշած բարոյություններն խոսափելու համար է, որ ո՛չ Մոսկվան, ո՛չ ալ Երևանը բերան չեն առնել Արևմտյան Հայաստանի, Սևրի դաշնագրի, Վիլսոնյան սահմաններու դատը. անոնք միայն կխոսին Կարսի, Արտահանի մասին, որ իբր ռուսական հողեր նվիրաբերված են Թուրքիո՝ Ռուսիո կողմն:

Տարբեր է, երբ ետեղեցական համագումարներ, հայկական կոմիտեներ, անհատներ, թերթեր, միություններ պահանջեն Խորհրդային Հայաստանի սահմաններու ընդարձակումը: Այդ ժողովրդական շարժումը քարոզչության նյութ կրնա ծառայել՝ Խորհրդային Միության հանդեպ համակրությունը բարձրացնելու, միջազգայնորեն Հայկական Դատը միացնելու, հակաանգլիական, հակամերիկյան պրոպագանդը ուժեղացնելու, և միաժամանակ Թուրքիո վրա ճնշում գործ դնելով տևականորեն իրարու հետ լեզու գտնելու համար: Այդ չի խանգարել իրերու ընթացքը, քանի որ ինքը՝ Մոսկվան նման հարցեր չունի արձարծած, ինչպես կվկայե Հասան Սաքան՝ Թուրքիո արտաքին նախարարը, և ոչ ալ իրեն մաս կազմող Խորհրդային Հայաստանը, որու պատասխանատուն է Մոսկվան:

Այսչափը բավական է հասկնալու համար Խորհրդային Հայաստանի կառավարության լուրջությունը և անգործությունը քաղաքական ասպարեզի մեջ:

Բայց ինչո՞ւ նույն լուրջությունը չապահեցին Ամենայն Հայոց կաթողիկոսը, Համագումարը և անոնց հետևող «աջ ու ձախ հառաջդիմականները», որոնց համար ավելի քան պարզ պիտի ըլլար Մոսկվայի վերաբերմունքը դեպի հայկական դատը:

Այդպիսիները, որ ռուսասիրական մոլուցքն տարված են, կկարծեն, թե իրենց բռնագրոսիկ սիրո և հավատքի համար պիտի վարձատրվին. կասկածելի է այդ սպասումը: Բավական չեղա՞վ միթե, որ 300.000-նոց հայ բանակը Ռուսիո ճգնաժամին կանգնեցավ Ռուսիո կողքին, 100.000 և ավելի զոներ տալով սպացոց տվավ իր հավատարմության. անոնց հերոս գորավարներու կողմքը թեև զարդարվեցավ շքանշաններով, բայց անոնց սիրտը ո՞վ գիտե, թե թախիծով լե-

ցուն չէ, քանի որ իրենց բնագավառները՝ Արցախ, Նախիջևան և այլը, դեռևս օտար լուծի տակ են: Արցախի լեռնային Գանձակի, Նախիջևանի համար մարտնչող Բազմամյանները կրցան Վելտոն խել Լեհաստանեն և տալ իր բուն տիրոջ՝ Լիտվային, բայց չկրցան իրենց ծննդավայրերը միացնել Խորհրդային Հայաստանին:

Գուցե այդպիսիները կկարծեն, որ իրենց այդ կուր հավատով կրնան փոփոխել, ազդել ռուսական քաղաքականության վրա, համոզել գայն, որ Միացյալ Հայաստան ստեղծելը արդար պահանջք է: Համոզել անոր, որ այդ կպահանջե Ռուսիո շահը: Բայց ապարդյուն փորձ է ասիկա, քանի որ Ռուսիան ինքը լավ գիտե իր կայսերական շահերը, որոնք չեն հենված ո՛չ սիրո, ո՛չ հավատարմության, ո՛չ արդարության վրա, այլ միմիայն ու միմիայն պետական հաշիվներու: Այդ հաշիվները կպահանջեն, որ Հայաստանը ըլլա անդամահատված, մերկացված միջազգային իր բնույթեն, և ան ավելի ստորադաս է, քան Թուրքիո բարյացակամությունը իր հանդեպ, թեկուզ այդ թուրքը ըլլա անարդար, թեկուզ իր սրտի մեջ ըլլա թշնամի Ռուսիո:

Գուցե կկարծվի, որ հայության միակամ դիմաշրջումով ռուսական ուղղությամբ, այնպիսի ծանրություն մը առաջ պիտի գա կշեռքի թարկ վրա, որ պիտի հարկադրե Ռուսիո առապարեզ գալ լայնացնելու համար Խորհրդային Հայաստանի սահմանները: Բայց ավա՛րջ, որ գաղղթահայության կշիռը փետուրի մը չափ է, իսկ եթե հայությունը ուժ է, այդ ուժը Խորհրդային Հայաստանի ուժն է, որ համեստորեն պապանձած է:

Գուցե կկարծվի, որ Սևրի դաշնագիրը ստորագրող պետությունները և Ամերիկան, որ հանձինս նախագահ Վիլսոնի սահմանեց Հայաստանի սահմանները, պիտի ընդառաջեն Համագումարի բաղձանքներուն և լայնացնեն Խորհրդային Հայաստանի սահմանները ըստ Վիլսոն նախագահին. բայց անոնց համար Խորհրդային Հայաստանը իբր անկախ միավոր գոյություն չունի. ան Ռուսիո մեկ մասն է, ինչպես Պոսթոնի շրջանը մասն է Ամերիկայի. ուրեմն Համագումարի, Սան-Ֆրանցիսքոյի և այլ վայրերու մեջ եղած հայոց պահանջնե-

րը ուրիշ բան չեն անոնց համար, եթե ոչ Ռուսիո սահմաններու ընդարձակումը, որու համար Սևրի դաշնագրի և Ամերիկայի նախագահի ծրագիրներու մեջ ոչ մեկ տրամադրություն չկա: Անոնք պարտավորություններ ստանձնած էին անկախ Հայաստանի վերաբերմամբ և երբ հայերը անկախություն չեն ուզեր, այլ կուզեն Ռուսիո միանալ, անոնք թե՛ իրավական և թե՛ բարոյական պարտավորություններն ազատված կրնան համարել իրենց զիրենց:

Բայց վերոհիշյալներեն բացի, ավելի մեծ հիասթափությանց վտանգներ կան՝ անխորհուրդ քաղաքական այդ ուղեգծին իբր հետեվանք:

Չի՞ կրնար պատահիլ, որ Ռուսիան բնավ միտք չունենա Արևմտյան Հայաստանի հարցը հետապնդելու, մանավանդ որ ցայդ ան չէ հետապնդած:

Չի՞ կրնար պատահիլ, որ նույնիսկ Կարս-Արտահան հարցը կարող է լուրջ հիմքեր չունենալ, քանի որ ոչ մեկ հավաստիք չկա այդ մասին:

Չի՞ կրնար պատահիլ, որ Խորհրդային Միությունը օր մը հայտարարե, թե անպատասխանատու խմբակցություններն են, որ ծրի աղերսեցը կըրնեն սահմաններու ընդարձակման մասին, որմե ինք անտեսողյակ է:

Չի՞ կրնար պատահիլ, որ Խորհրդային Հայաստանը հարկադրվի, ինչպես հարկադրվեցավ 1921-25-ին, հայտարարել, որ ինք «Ամենայն Հայոց կառավարություն չէ» և սահմանային հարցեր չունի Թուրքիո հետ:

Դուք պատահա՞՞ծ եք ռուհճիներու³⁷, որ չգայթակղվելու համար

³⁷ «Ռուհճի, Ռուսիանի (արաբ.)՝ ինչի: շնզով երեջնյվող, ինզով փրկվող: Կրոնական ազակ [...] Շայթանեզորեն միակողմանի, մտավոր խղճալի, սահմանափակ ինքզնուի տեք անհատներ են ռուհճիականները, իրենց մտքից տրամաբանությունը հայանող, գերբնական հափշտակությունների մշուշների մեջ տարուբերվող ինզկան եիվկանդին: Մարդ և կին արդուցովին մերկասում մկրտվում են գետեղուս: Ռուհճիությունը կրոնական հավաքական ինչպագարության երևույթներից մեկն է: (Ա.Մելիք, Գրպանի միջազգային հանրագիտակ: Կուր-Յուրք 1930, 359 էջ):»

երկրավոր խայծերն՝ իրենց աչքերը կհանեն և ականջները կխցեն՝ չսելու և չտեսնելու համար: Պատահա՞ծ եք ֆանատիկ ոտիճիներու, որ Աստուծո հզորությունը ավելցնելու համար պատրաստ են իրենց անձը զոհաբերելու, պատրաստ են ամեն ոճի գործելու, երբ մեկը համարձակի Աստուծո միջամտությունը կասկածի տակ դնելու:

Ներկայիս եղած իմպերիալիստական դիմաշրջումները և այդ դիմաշրջումներու համար վատնված զոհաբերությունները և ջանքերը հար և նման են ոտիճիներու զոհաբերությանց և գործերու: Ներկայիս ռուսոֆիլ հոսանքները ուրիշ բան չեն, եթե ոչ իրահատուկ ոտիճիություն, առանց տեսողության և լսողության, լեցուն հավատով և ենթադրությամբ, բայց զուրկ դատողութեն և իրականությունը հաշվի առնելու գիտակցութեն: «Հառաչդիմակա» հոսանքը հայության մեջ քաղաքական վարակիչ ոտիճիություն մըն է:

Մենք տեսանք, որ ռուսական քաղաքականությունը դարերու ընթացքին եղած է ծավալապաշտական՝ Մերծավոր Արևելքի մեջ, իսկ մասնավորապես Հայաստանի վերաբերմամբ եղած է՝ Հայաստանը ունենալ առանց հայերու և հայերն ունենալ առանց Հայաստանի, ինչ որ չի համապատասխաներ հայության շահերուն: Արդ, այն հայերը, որ կուզեն ունենալ Հայաստանը հայության համար, չպիտի կարծեն, որ իրենց ռուսասիրությամբ, ռուսատեցողությամբ, իրենց զոհաբերությամբ, մինչև Թամանյան զորագունդերու փառքը հյուանելով և Լոռի-Մելիքովներու փոխարեն Բագրամյաններ տալով պիտի կարողանան ռուսական վերաբերմունքը մազաչափ փոխել: Չպիտի կարծեն մանավանդ անոնք, որ եկեղեցիներու բններեն արդթելով հոգուտ Ռուսիո, կամ հեռագիրներ ու դիմումագրեր տեղացնելով, կկարծեն փոփոխել ռուս քաղաքականությունը:

Համոզվելու համար վերցուցեք հավասարալծակ կշիռ մը: Կշիռի ծախս թաթի վրա դրեք 25 միլիոն քառակուսի քիլոմետրեոց տարածությամբ Ռուսաստանը, անոր 200 միլիոն ազգաբնակչությունը, անոր դարերու կայսերապաշտ քաղաքականությունը, անոր սվիններու քաղաքականությունը: Աջ թաթի վրա դրեք ամբողջ Հայաստանը, որը հա-

յությունը՝ 3,50 միլիոն, ավելցուցեք վրան կաթողիկոսներու, վեհաժողովներուն դիմումները, Նույնիսկ բարդելով վրան Քենթապրիի արքեպիսկոպոսի հավաստիքները, ավելցուցեք վրան հուսաբեկումն ու ոգևորությունը, լացն ու աղերսանքը, բայց ինչ ալ որ ընեք՝ կշիռի ծախս թաթը իր ծանրությամբ անշարժ կմնա և աջ թաթը օդի մեջ կախված պիտի երերա: Ցավոք սրտի դառն իրականություն է, որ փոքր ուժով անհնար է մեծ ուժի ընթացքը փոխել, փոքր ուժն է, որ պիտի ջախջախվի մեծ ուժի ընթացքին առջև և փոքրն է, որ մեծի ընթացքին պիտի ենթարկվի: Այս օրերը չպիտի փոխվի ո՛չ աղերսանքով, ո՛չ աղոթքով և ո՛չ ալ բարեկամությամբ, թեկուզ այդ բարեկամը ըլլա ամենակարող Սթալինը և իր գործակիցները՝ Միկոյան, Բագրամյան և Թամանյան գնդերը և այլն: Կասկածի տակ չեմ դնեք անոնց բարեմտությունը, քանի որ Սթալին հայրենասեր վրացի է, իսկ մյուսները՝ արյուն են թափած, տրեխներ մաշած Վասպուրականի, Արարատ լեռներու վրա, բայց թե այդպիսիք իսկ չիյնալու համար մեր վիճակին, չիյնալու համար Չխեիձեններու ողբերգական կացության, չիյնալու համար ռուսական ծանր գլանի տակը, նստած պիտի մնան գլանի վրան, որ իր ընթացքով պիտի ճզմե արգելքները, հոգ չէ թե այդ արգելքը ըլլա Վրաստանը կամ Հայաստանը, վերոհիշյալներու սիրեցյալ հայրենիքները: Սթալինը՝ գլանիկի ղեկավարն էր, որ ճզմեց Վրաստանը՝ Հայաստանը իրենց երազներով:

Ուրե՛մն. ուրեմն այն, որ ո՛չ աղոթքը, ո՛չ պաղատանքը, ո՛չ ստորնաքարչ փառաբանությունը, ո՛չ հավատարիմ ծառայությունը, ո՛չ անհավատարիմ ըմբոստությունը և ո՛չ ալ մանավանդ ռուսական դիմաշրջումը կարող պիտի ըլլան կասեցնելու ռուսական ջախջախիչ գլանակը և թեթևցնելու այն ծանրությունը, որ մենք դրինք կշիռքի ծախս թաթին վրա: Այդ բոլոր ստորնացումները և զոհաբերությունները, որ անմտորեն կկիրառեն շատերը, կուզան արագացնելու ռուսական գլանիկի ընթացքը և կամ ավելի ծանրացնելու ռուսական դիակնացած բեռը՝ հավասարալուծ կշիռի թաթին վրա:

Պիտի կարծեք, որ ահաբեկվա՞ծ եմ, կամ հուսահա՞տ՝ ռուսական

այդ հսկա ուժին առջև, և կհանձնարարեն ամեն ինչ ճակատագրին թողնել. բնավ երբեք: Դառնանք մեր կշիռքի օրինակին:

Մենք վերցուցինք կշիռ մը, որու ձախ թաթի վրա դրինք ռուսական ամբողջ ծանրությունը, աջ թաթի վրա դրինք հայկական ամբողջ ծանրությունը և տեսանք, որ հայկականը տասնյակներ անգամ թեթև ըլլալով, քան ռուսականը, անկարող է տեղեն շարժել ռուսական բեռը: Բայց այդ բեռը կարելի է դյուրությամբ ոչ թե շարժել, այլ փետուրի նման քամիին տալ երկու պարզ միջոցով. առաջին միջոցը՝ կշիռի ձևի փոփոխությամբ (ընդգծումը իմն է՝ Լ.Շ.), որ հնար է գայն դարձնելով անհավասարալուծ կշիռ. երկրորդ միջոցը՝ Լենին-Սթալինի ցույց տված ուղիով (ընդգծումը իմն է՝ Լ.Շ.), ռուսական բեռի շոգիացման ձևով:

Առաջին ձևը իրագործելու համար հավասարալուծ կշիռը պետք է դարձնել անհավասարալուծ: Ասոր համար ամեն բան անփոփոխ թողնել և թող կշիռի ձախ ու աջ թաթերուն վրա ծանրացած մնան անհավասար ռուս և հայ ծանրությունները, բայց երկնցուցեք աջ լուծը կշիռի և երբ ան երկարի քանի մը տասնյակ անգամ, քան ձախ լուծը, այդ պարագային ծանր Ռուսիան իբր փետուր մը պիտի ճոճի օդի մեջ և թեթև Հայաստանը իբր արճիճ մը, պիտի ծանրանա գետնի վրա: Ուրեմն թեթև ուժերով հնար է ծանր ուժերը քամիին տալ, եթե բանեցնենք այն հնարքը, որուն կպատահիլեք ծանր առարկաներ չափող կշիռները դիտելով: Պարզ ֆիզիկական այս օրենքը հար և նման է քաղաքական, ընկերային օրենքներուն: Ռուսիա իր ամբողջ տարրողությամբ կծանրանա Մերձավոր Արևելքի վրա, և անոր խորտակիչ գլանը արդեն անցած է Կովկասյան շղթան և ողջ Անդրկովկասը ճզմած իր հարթիչ գլանակով. ան կշարժի դեպի առաջ հարթելու ողջ Մերձավոր Արևելքը, որ ասիական կպասես իր ճզմվելուն: Նույն վախն ունին և ուրիշները, առաջին հերթին անգլոսաքսոնները: Արդ՝ բոլոր ճզմվողներու համար միության մեկ ընդհանրական կետ կա, և ինչպես որ բոլշևիկները վտանգի դեպքին մեկ նշանաբան ունին՝ «բոլոր երկիրներու աշխատավորներու միություն», այսօր հասունցած է Մեր-

ձավոր Արևելքի մեջ «բոլոր վտանգվածներու» միության գաղափարը:

Մենք տեսանք, որ Հայաստանը Մերձավոր Արևելքի ո՛չ միայն մեկ մասն է, այլև անոր գրանիթե պատվանդանը: Ան ուզե թե չուզե պիտի ենթարկվի կամ ռուսական զլանակի ճնշումին և կամ ալ պիտի Մերձավոր Արևելքի ընդդիմացող լծակի մասը կազմե չխորտակվելու համար այդ զլանակեն:

Հայաստան, Քյուրտիստան առանձին-առանձին, կամ միասնաբար արժեք չեն, ավելի շուտ վնասակար արժեքներ են, արհամարհված, ատված, որովհետև Մերձավոր Արևելքի մեջ լծակի անկայուն, բեկման մասերը կկազմեն. բայց եթե այդ երկիրները իրենց արժանի ուշադրության ենթարկվեն, եթե այդ երկիրները գիտակցեն, որ Մերձավոր Արևելքի բախտն իրենց ձեռքն է և իրենց ու Մերձավոր Արևելքի ազատ միությամբ պետք է կազմել լծակ մը, այդ պարագային այդ լծակը պիտի երկարեր և պիտի կարողանար բարձրացնել օդի մեջ ռուսական ծանրությունը և անոր զլանի անկվելը պիտի թավալեն օդի մեջ անվնասորեն: Այդ պարագային է, որ առանց խնդրանքի մենք կդառնանք խնդիր ընդունողներ և Օսմանյան ու Յարակնի կայսրությանց անկումը տեսնելեն վերջ, պիտի տեսնենք և Խորհրդային և Բրիտանական կայսրությանց կասեցումը Մերձավոր Արևելքի սահմաններու վրա:

Աստեղ ո՛չ երազ են և ո՛չ ալ ցնորք, այլ եղած և ըլլալիք հարցեր են, որ կիրառման աշխարհագրական պայմաններն, որ անփոփոխելի են և եթե Մերձավոր Արևելքը դեռ այսօր նվազ հասունցած է ըմբռնելու այդ պայմանները, ան չի կրնար փոխել հրամայական այդ պայմանները. ան կրնա միայն հետաձգել, բայց այդ հետաձգումն սուժուղ միայն ինքը՝ Մերձավոր Արևելքը պիտի ըլլա և անոր առանցքը՝ Հայաստանը: Լալու և դժգոհելու կարիքը չկա, քանի որ ներկա կացության պատճառը մեր անհասության մեջ է, զոր պետք է հասունացնել:

Կա և երկրորդ միջոց մը ռուսական վտանգը չեզոքացնելու և անոր խորտակիչ գլանակը անվնաս դարձնելու. այդ մեթոդի անունը կոչենք «Լենինյան»:

Խումբ մը հավատացյալ մարքսիստներ, ցարական հսկա ուժին ենթակա, անկարող չափվելու անոր և ժողովրդական հետամնացության ու բազմությանց հետ, նշանաբան ընտրեցին «Միություն շահագործողներու, ազատություն ճնշվածներու, քարոզ շահագործողներու, թալան թալանչիներուն, փրկել Ռուսիան»։ այս նշանաբանը քայքայեց և շոգիացուց ոռոս ցարական ավանդությունները, անոր ուժը և կարողությունը։ Այսօր Ռուսիո մեջ ազգերը Բայթիկեն սկսած մինչև Մերձավոր Եվրոպա, մինչև Ուկրաինա, մինչև Կովկաս, Թուրքեստան և Ուրալ՝ ծարավի են ազատության. այսօր անհատները, անկախ ազգութենեն, ծարավի են խղճի, մտքի, խոսքի, իրավունքի ազատության. Լենինի Ռուսիան նույնքան հիվանդ է, որքան ցարականը։ Հավատի եղեք, քանի Չեկան կա, կա և այդ վտանգավոր ծարավը և հեռու չէ այն օրը, երբ այդ ծարավիները նոր Լենիններու կանչով պիտի ելլեն և ըսեն՝ Տիներորոշում ազգերու, դեմոկրատիզմ, ազատություն խղճի և մտքի, ազատություն աշխատանքի, վերջ դիկտատուրայի և շահագործումի. ընկերվարություն՝ առանց պարտադրանքի և այլն»։ Այդ օրվա համար աշխատանքը սրբազան և մահացու է ռուսական զանակին, քանի որ այդ զանակը կազմված է ազատության ծարավի բազմությանց մասերով, քանի որ Ռուսիո ճնշիչ ծանրությունը կազմված է անոնցմե։

Արդ, մերժելով ռուսափրական, ռուսական դիմաշքումները և գտնելով անիմաստ ու կորստաբեր, պետք է որդեգրել Մերձավոր Արեւելքի վերակազմության սկզբունքը, լիակատար, հավասար, ազատությունները ինչպես անհատի, նույնպես ժողովուրդներու, և անոնց դաշնակցությունը իրարու հետ, բոլոր տեսակի իմպերիալիզմներու դեմ։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴԻՄԱՇԵՐՋՈՒՄ

Այսօր Թուրքիո փոքր ազգերուն մեջ անգլիական ուղղություն չկա։ Չկա երկու պատճառով. նախ՝ որ Անգլիո համար փոքրամասնությունները հետաքրքրական չեն. ան կգերադասե մեծամասնությունը և կազմակերպված ուժը իրեն հետ ունենալ։ Երկրորդ՝ որ Թուրքիո կազմակերպված ուժը՝ Հայքը և կառավարությունը կկարծե, թե իրեն հետ են, իսկ մյուս կողմ՝ Թուրքիո փոքրամասնությունները համոզում կայացուցած են, որ Անգլիա Թուրքիո ամբողջականության կողմնակից է, ապա ուրեմն շահ չունին որոնելու այդ ուժը։

Չնայելով այդ իրականության՝ այսօր իսկ ամեն մեկ շարժում, ըլլա ընկերային, ըլլա կրոնական, ըլլա քաղաքական, որ կկատարվի Թուրքիո մեջ փոքրամասնությանց կողմե, կորակվի անգլիական ինտրիգ, թեկուզ ան ո՛չ մեկ առնչություն ունենա անոր հետ և կամ հակառակը ըլլա։ «Առանց Անգլիո տերև չի շարժիր» հասկացողությունը ընդհանրացած է, թեև այդ հասկացողությունը անհիմն է ընդհանրապես և արդյունք՝ ավելի պրոպագանդի, քան իրականության։

Այս թյուր հասկացողությունը ավելի զարգացավ բոլշևիկ տիրապետության պրոպագանդին շնորհիվ։ Բոլշևիկի քաղաքական ըմբռնողությունը պարզ և վճռական է, և քարոզությունն ալ՝ անոր հայեցին։

«Ով անվերապահորեն հտրիուդներուն հեպ է, բոլշևիկը անոր հեպ է։ Ով Սովիեթներուն դեմ է, ան թշնամի է թե՛ Սովիեթներուն և թե՛ բոլշևիկներուն։ Ով Սովիեթներուն հեպ չէ՝ ան Սովիեթներու դեմ է։ Անգլիան առաջին թշնամին է Սովիեթներուն և բոլշևիզմին, ուրեմն ով Սովիեթներու հեպ չէ, ան Անգլիո հեպ է։ Այս հասկացողությունը բաց դուռ չի թողներ ո՛չ մեկ անկախ մտածողության և աշխարհը կբաժնե երկու բանակի. - կամ ինձի հետ, կամ ինձ դեմ։ Այսպես օրինակ, իբր նմուշ բերենք Դաշնակցությունը, որը պատերազմի ամենաճգնաժամային վայրկյանին հայտնեց ամենքին և Սովիեթներուն.-

«Առանց հրաժարելու իր տեսակետներեն, Դաշնակցությունը պատերազմի ընթացքին Սովիեթներու հեպ է»։ Այդ նկատվեցավ

թշնամություն Սովիթներու կողմէն, քանի որ վերապահություն կար. «ատանց հրաժարելու իր տեսակետներն»: Սովիթներու հետ ըլլալու պայմանն է «Դաշնակցության լուծումը»:

Ո՛ր տեսակետներն են, որոնցմէ չի կրնար հրաժարիլ Դաշնակցությունը և որոնք անհանդուրժելի կրարձնեն Դաշնակցությունը Սովիթներուն համար:

1.- Դաշնակցությունը ընկերավար է և դեմոկրատիկ կարգի կողմնակից, ինչ որ անհարիր է բոլշևիզմին: Որով՝ Դաշնակցությունը հետադիմական է, ֆաշիստ է և այլն:

2.- Դաշնակցությունը հայկական հողերու ամբողջացման կծգտի: Որով՝ ան շովինիստ է և Խորհրդային Միության ընդհանուր քաղաքականությունը խանգարող մեկ վնասակար տարր:

3.- Դաշնակցությունը կծգտի անհատի և իր հայրենիքի անկախության: Որով՝ քանի որ այդ ձգտումը կարճ ժամանակամիջոցով վավերացված էր Սևրի մեջ, ուր անգլիացիք տիրող էին, ուրեմն՝ Դաշնակցությունը անգլիական գործակալություն է:

Նույն այս երևույթը կհարմարի նույնպես Տերսեմի կամ Արարատի ըմբոստ քյուրտերուն, Իրանի մեջ՝ անկախության կողմնակիցներուն, Արաբիո մեջ՝ Արաբական միության կողմնակիցներուն, Պահեստիին մեջ՝ սիոնականության հետևորդներուն, իհարկէ յուրաքանչյուրին տարբեր պատճառաբանություններով, բայց եզրակացությանց մեջ նույննալով, այսինքն նրանք բոլորն ալ անգլիական գործակալներ են:

Այս նախաբանը անհրաժեշտ էր՝ հասկնալու համար, որ թեև Թուրքիո և Մերձավոր Արևելքի մեջ շատ կիողովի «անգլիական մատի ամենակարողությունը» և անգլիական դիմաշրջումի տարածումը, բայց այդ վերագրումը մեծ մասով արհեստական է, ծնունդ գլխավորապես ռուս և բոլշևիկ քարոզչության: Անկէ կօգտվի և անգլիական Ինթելիճանս Մերվիսը, իր շուրջ եղած խորհրդավոր քարոզչությունը չմերժելով և իր ամենակարողության հմայքը հզորացնելով և տարածելով:

Թե այդ հմայքը որքա՞ն իրականություն է, կարելի է չափել Պահեստիին մեջ սիոնականներու ռումբերով, Եգիպտոսի մե՛ Ալի Մահեբի վարչության ընթացքով դիրքով պատերազմի ճգնաժամին, Իրաքի մեջ՝ Գեյլանիի շարժումներով և կամ Իրանի ու Թուրքիո մեջ եղած հակաանգլիական ընթացքով, որոնք ցարդ կշարունակվին: Մերձավոր Արևելքի մեջ գուցէ կա ֆրանկոֆիլություն, գերմանոֆիլություն, ռուսոֆիլություն, բայց ոչ մեկ տեղ չկա անգլոֆիլություն: Այդ զգացմունքը ո՛չ Անգլիան ինքը կրորեն և ո՛չ ալ ընդունակություն ունի շահելու: Ան ալելի նման է անսնուն մեկ ընկերության, վաճառականական գրասենյակի, ուր բացի հաշիվեն, փոխանակութենեն, բոլոր մնացածները ավելորդաբանություններ են: Անոր ցուցատախտակին վրա գրված է՝ «Շահիլ և շահեցնել», և այս է միայն իր և հաճախորդներու կապը: Անժխտելի պետք է համարել, որ Մերձավոր Արևելքի բոլոր պետություններու, բոլոր ժողովուրդներու վրա անմրցակից է Անգլիո ազդեցությունը. անոնք՝ համարյա ամենքը՝ առելով հանդերձ կպատկառին Անգլիայեն: Դժգոհելով, ապստամբելով հանդերձ, կխոնարհին: Պատճառը ոչ այնքան իր սվիններու բազմությունն է, ոչ ալ ոստիկանական շղթաները, այլ այն, որ Անգլիա չարիքներու նկազագույնը կհամարվի. եթէ շահ ունի՝ կշահեցնէ, քնավ չէ քեր, իսկ երբ շահ չունի՝ ամեն ինչ կլքէ:

Մասնավորելով մեր խոսքը Թուրքիո և անոր արևելյան նահանգներու (Լազիստան, Հայաստան, Քյուրտիստան) մասին՝ կտեսնենք, թե Անգլիո հիմնական շահը մեկ է. մնացած բոլորը երկրորդական են: Անգլիո շահը կպահանջե, որ այդ երկիրներու ներուցներու և ստրագեժիք կետերու վրա իր մրցակից Ռուսիան չհաստատվի, որպեսզի կայսրության ճամփաները չվտանգվին և ասիական իր տիրապետությունը չխորտակվի:

Վերոհիշյալ իր հիմնական շահը ապահովելու համար երկու միջոց կա անոր առաջ:

Ա) Երբ Թուրքիան Ռուսիո հետ չէ և իր վեհապետության, իր երկրի ամբողջականության համար կպայքարի, ուժ տալ անոր և ա-

պահովել այդ պատվարը Ռուսիո դեմ: Այս Դիզոյայելի ավանդական քաղաքականությունն է, որ ցարդ կշարունակվի:

Բ) երբ Թուրքիան այնքան թույլ է ներքուստ, որ այդ պատվարը դատարկ տարածություն դառնալու և վտանգի տակ իյնալու ենթակա է, կամ երբ Թուրքիան իր մրցակիցներու (Ռուսիո, Գերմանիո) կողմ ըլլալու հակամետ է, այդ պարագային ո՛չ թե անձամբ գրավել Թուրքիան, և անմիջականորեն պատնեջ դառնալ Ռուսիո դեմ, այլ այդ դատարկությունը լեցնել երրորդ ուժերով, ինչպէս օրինակ՝ հուլիներով 1918-1923-ին, իտալացիներով 1917-1922-ին, ֆրանսացիներով 1917-1922-ին, հայերով 1918- 1922-ին, քրուտներով 1918-1922-ին և այլն:

Այս քաղաքականությունը նույն- պես ավանդական է Գլադստոնեն սկսած մինչև Լորդ Ջորջը և կշարունակվի մինչև այսօր, զուգահեռ առաջինին:

Կա՞ 2 ահ փոքր ազգերու համար Անգլիո այս երկճյուղ քաղաքականութենն: Վերլուծենք առաջին պարագան, երբ Թուրքիան Անգլիո վրա կոթնած և վերջինս Թուրքիո թիկունքն է կանգնած: Այս պարագային՝ պարզ է, որ Թուրքիո ուժը ավելի գերադաս ըլլալով, քան անոր փոքրամասնությանց ուժը, Անգլիան պիտի չսիրաշահի փոքր ազգերը. ան պիտի զոհե զանոնք և Թուրքիան պիտի ուժեղացնէ: Անգլիո շահը Թուրքիայեն ավելի մեծ է, քան լազեն, քրուտեն, հայեն: Եվ եթէ այդ թույլ ազգերը փորձեն իրենց անգլիական դիմաշրջումով փոխել Անգլիո ուղղությունը, չպիտի հաջողին երբեք:

Եթէ անոնք փորձեն ի հեճուկա Անգլիո որդեգրել ռուսական դիմաշրջումը, այդ պարագային ավելի պիտի վատթարացնեն իրենց կացությունը. պիտի չկարողանան իրենց գոյությունն իսկ ապահովել՝ ձերբազատված Թուրքիո ճնշումեն, որու արարքները պիտի արդարացվին Անգլիո կողմն:

Արդ՝ այդ փոքրամասնությանց համար ո՛չ մեկ հույս չկա անգլիական դիմաշրջումեն. անոնք հարկադրաբար պիտի զինվին համբերությամբ և միայն ու միայն իրենց սեփական ուժերու վրա հենվելով. անոնք ներքին բարենորոգմանց սահմաններու մեջ, հեղափո-

խությամբ, կրնան իրենց իրավունքներու տիրացման համար ձեռնարկներ ընել:

Բայց ավելի հետաքրքրական կացություն կստեղծվի փոքր ազգերու համար երկրորդ պարագային, երբ Թուրքիան ներքուստ այնքան թուլացած ըլլա, որ Անգլիան անհարմար համարե զայն պատնեջ դարձնել իր և Ռուսիո միջև. և կամ Թուրքիան ռուսներու վրա հենված ուզե իր փրկությունը գտնել:

Այդ պարագային բնական է, որ Թուրքիան պիտի վայելե Անգլիո հակակրթությունը և փոքր ազգերը պիտի ունենան անոր համակրությունը:

Բայց ի՞նչ արժեք այդ համակրութենն, երբ փոքր ազգերը միաժամանակ պիտի վաստկին անոր համազոր՝ Ռուսիո հակակրթությունը: Այդ համակրության և հակակրթության գումարը կհավասարի զերոյի: Արժե՞ ուրեմն ունենալ անգլիական դիմաշրջում: Այդ կարելի է ճշտել հետևյալ հարցումներուն պատասխանելով:

Կարո՞ղ են փոքր ազգերը իրենց անգլիական դիմաշրջումով պատճառ դառնալ, որ անգլիական ուժերը գան և ազատագրեն իրենց և հաստատվին իրենց երկիրներուն մեջ՝ ի պաշտպանություն իրենց ազատագրության դատին: Արդեն վերը ըսինք, որ ոչ- որով- հետև Անգլիո մեջ չկա ո՛չ մեկ հոսանք, որ ցանկա ընդհանուր սահման ունենալ Ռուսիո հետ և անոր միակ շահն է ընթանալ ըստ իր ավանդական ուղղության, որպէսզի իր և Ռուսիո միջև անջրպետ մը ստեղծվի՝ իր և միջազգային երաշխավորությամբ: Որով՝ անգլոֆիլությամբ անհնար է փոխել անոր այդ ուղղությունը:

Վնասակա՞ր է Անգլիո այդ ձևի պաշտպանողական, «անջրպետ» ստեղծելու քաղաքականությունը փոքր ազգերու համար: Վնասակար է, երբ ան Թուրքիան կգերադասե, քայց փրկարար, երբ հուսահատ անկե, կուզ անջրպետը ստեղծել քնի տարրերով, փոքրամասնություններով, ինչպէս եղավ նախորդ պատերազմներուն՝ արաբական երկիրներու, Հայաստանի, Քրուտիստանի, Լագիստանի վերաբերմամբ:

Եթե անգլիական ծագումն է անցրպես ուժեր ստեղծել իր և Ռուսիո միջև անմիջական հարևանությունն խտապիելու համար, որո՞նք են այն դրությունները, որ պիտի հարկադրեն Անգլիո նոր ուժերն անջրպետ պետություններ ստեղծելու: Այս հարցումին անգամ մը ևս պատասխանենք.

- Երբ Թուրքիան Ռուսիո հետ ըլլա և անոր առաջապահը դառնա:

- Երբ Թուրքիան այնքան թույլ ըլլա ներքուստ, որ պատենշ դառնալու անընդունակ ըլլա:

- Երբ Թուրքիո ընդդիմադիր տարրերը և փոքրամասնությունները այնքան հասունություն և ուժ ներկայացնեն, որ ընդունակ ըլլան փոխարինելու Թուրքիան և իբր անկախ միավոր՝ պատենշ կանգնելու:

- Երբ միջազգայնորեն երաշխավորվի այդ պատենշի հարատեւությունը: Այս հիմունքներով էր, որ կազմալուծվեցավ Թուրքիան 1918-ին, որու ավերակներու վրա նոր ուժեր ստեղծվեցան իբր անջրպետ:

Պայման է անգլոֆիլ ըլլալը և կամ անգլիական դիմաշրջում ունենալը, որ Անգլիան արժանի համարե իր կայսրության պատենշ դարձնելու այս կամ այն ուժը, հարգելով անոր անկախ գոյությունը:

Ինչպես վերը մատնանշեցինք՝ ոչ, քանի որ անոր համար հետաքրքիր էր սեղը, որմն պատենշ կարելի չէ կանգնեցնել. անոր համար հետաքրքիր էր միայն մեկ բան.- որքա՞ն այդ պատենշի թեկնածուն դիմացկուն է պատենշ դառնալու համար, որքա՞ն ան կսիրե իր սեփական անկախությունը և իր երկրի անձեռնմխելիությունը, մանավանդ Ռուսիո կողմն, թեկուզ այդ նախանձախնդրությունը իր դեմ ուղղված ըլլա և ինքն ալ մուտք չունենա այդ պատենշին մեջ:

Անով պետք է պարզել կարգ մը երևութական հակասություններ, որ Անգլիո քաղաքականության մեջ կկատարվին: Մերձավոր Արևելքի մեջ, ինչպես օրինակ՝ իր կողքին կովոր հրեությունը նվազ կամ նույնքան կզնահատվի, որքան իր դեմ կովոր արաբությունը, որ կձգտի իր բացարձակ անկախության. նույնը Իրաքի մեջ, նույնը

Իրանի մեջ, Սուրիո մեջ և ամենուրեք Մերձավոր Արևելքի մեջ, ուր գործի են միայն բոլոր անոնք, որ կձգտին բացարձակ անկախության և օտար ուժերու հեռացման՝ մեջն ըլլալով նաև անգլիականը: Այդպես է, որովհետև այդ իսկ Անգլիո շահն է, որովհետև Մերձավոր Արևելքը Անգլիո տիրապետության նպատակը չէ, այլ ան կուզե միջնորմի վերածված տեսնել այդ աշխարհամասը:

Եթե այդ այդպես է, ի՞նչ վերաբերմունք կարող է ունենալ Անգլիան հայկական այն պահանջին հանդեպ, որուն նպատակն է Խորհրդային Հայաստանի սահմաններու ընդարձակումը: - Պարզ է, որ ինչքան ալ ցանկա մարդկայնորեն ըմբռնել այս ցանկությունը, բայց ան դավաճանած կըլլա իր պետական և կայսերական շահերուն, եթե ընդառաջե: Ան ընթացք չի կրնար տալ նման պահանջներու, քանի որ իր բուն շահն է պատվար կանգնեցնել իր և Ռուսիո միջև, իսկ Խորհրդային Հայաստանի սահմաններու ընդարձակումը համազոր է պատվարի քանդվելուն, ինչ որ վտանգ է իրեն համար: Տարբեր էր, եթե Հայաստանի անկախության և միացյալ Հայաստանի հարցը առաջադրվեր, որ սկզբունքով ան ընդունած և վավերացուցած էր ժամանակին. այդ կնպաստեր Ռուսիո հարևանութենն խտապիելու. անկախ և միացյալ Հայաստանը, իբրև մեկ օղակ Մերձավոր Արևելքի՝ ամբիլ հնարավորություններ ունի իրազորվելու, քան թե Խորհրդային Հայաստանի սահմաններու ընդարձակումը, համեստ սահմաններով, թեկուզ միայն Կարս-Արտահանով:

Վերոհիշյալ դրության պատճառով է, որ քանիցս բուլշևիկներու կողմն «թաղված» Դաշնակցության դեմ ներկայիս նոր խաչակրություն է ստեղծված: Բոլոր այն հայերը և դաշնակցական այն տարրերը, որ հաստատ կմնան անկախության գաղափարին վրա, անոնք ամենքն ալ կնկատվին անգլիական գործակալներ, թեկուզ անոնք ոչ մեկ առնչություն ունենան անգլիացիներուն հետ: Բոլոր անոնք, որ թեև չեն ձգտիր անկախության, բայց կձգտին Մերձավոր Արևելքի ժողովուրդներու անկախության, նորեն կնկատվին անգլիական գործակալներ: Եվ իրավունք ունին բուլշևիկները, որովհետև ազգերու անկախությունը

և Մերձավոր Արևելքի ժողովուրդներու համակեցությունն ու զորությունը, միայն կնպաստեն Անգլիո շահերուն, իսկ սովիեթական շահը կփափագի անոնց քայքայումը և կամ իր կայսրության հետ միացումը:

Պատահա՞ծ եք հին ժամանակներե մնացած դրախտանման ամրոցներու, որոնք շրջապատված են խոր անդունդներով, անանցանելի գետերով, մեկ կողմեն ծովով, մյուս կողմե իրարու խառնված քարաժայռերով, կամ մահաբեր անապատներով և կամ մթին ծմակներով: Ոչ մեկ ճանապարհ, ոչ մեկ քաղաքակրթություն. շրջապատը՝ վայրի որսերով լեցուն և զայլերու ոհմակներով. տեղ-տեղ միայն քաղաքակրթության հետքեր «պեթոն առնով» շինած, ուր ցանցեր են լարված զազաններուն որսալու և սաստելու համար: Նման ամրոցներ անմատչելի են կամ դյուրամատչելի չեն. և այդ է արդեն բուն նպատակը ամրոցի: Ընդարձակ վայրենությունը շրջապատի կծառայե լոկ այդ ամրոցի անմատչելիության:

Պատկերացուցեք այդ ամրոցը իբր անգլիական կայսերական ճամփաները: Տեղ-տեղ պատահած քաղաքակրթական փոքրիկ կետերու վրա, ուր թնդանոթներու բերանները կտեսնեք, տնկեցեք անգլիական դրոշակներ՝ ցուցատախտակներով. - Լոնտոն, Ճիպրապար, Մալթա, Կիպրոս, Սուեզ, Ատեն-Հնդկաստան: Իսկ մնացած բոլոր տարածությունները՝ համարեցեք այդ կետերու ցանկապատը. - Աֆրիկեն, Նախիկն Օսմանյան կայսրությունը, Իրանը, Աղվանիստանը: Այս վերջինները կծառայեն իբր ապահովության միջոց առաջիններուն համար:

Եթե վերի օրինակը նկատի առնեք, կտեսնեք, որ ողջ Մերձավոր Արևելքը Անգլիո համար միայն մեկ հիմնական նպատակի կծառայե՝ միջերկրականյան իր ճամփաները ապահովել, որոնք կտանին դեպի ասիական, ասիական իր կալվածները: Մնացածները անկարևոր են անոր համար:

Անով կորոշվի արդեն մեկ կողմե Անգլիո բռնած դիրքը և վերաբերմունքը Մերձավոր Արևելքի հանդեպ, իսկ մյուս կողմե՝ Մերձավոր Արևելքի բռնելիք դիրքը Անգլիո հանդեպ: - Անոնք, որ անգլիական

դիմաշրջում ունին և կուզեն, որ Անգլիան տիրապետե Մերձավոր Արևելքի, իբր սեփականություն, այդպիսիք չարաչար պիտի իուսաբեկվին, որովհետև Անգլիո հիմնական նպատակներու մեջ չի մտնել Մերձավոր Արևելքի տիրապետությունը, բացի որոշ զինվորական կետեր: Անոր միակ նպատակն է գրավել, որպեսզի ուրիշներ չգրավեն:

- Անոնք, որ անգլիական դիմաշրջում ունին և կուզեն անգլիական մշակույթը, լեզուն, կրթությունը մտցնել Մերձավոր Արևելքին մեջ, այդպիսիներ ևս չարաչար կսխալին: Անգլիան բնավ շահագրգռված չէ անով և հազվադեպ է, որ ան զոհաբերե և քանք թափե այդ ուղղությամբ. ասոր համար է, որ իր մակնի տակ իսկ գտնված Մերձավոր Արևելքի երկիրներու մեջ անգլիական լեզուն, մշակույթը, դպրոցը ավելի ստորադաս են, քան ֆրանսականը, գերմանականը, իտալականը, ամերիկյանը և նույնիսկ հունականը. անգլիական մշակույթը քրմական է, անմատչելի զանգվածին, մատչելի՝ քանի մը տասնյակ ղեկավարներու:

- Անոնք, որ անգլիական դիմաշրջում ունին և կսպասեն, որ այդ միջոցով պիտի կարողանան Մերձավոր Արևելքի ճարտարաբանությունը բարձրացնել, ճամփաները զարգացնել, տնտեսությունը ճոխացնել, ժողովուրդը ճորտութենե փրկել, այդպիսիք կնոռնան, որ Մերձավոր Արևելքը լոկ ցանկապատ մըն է Անգլիո համար, և քանի վայրի մնա, քանի քսոսի և հետամնացության մեջ մնա, այնքան ավելի անմատչելի կըլլա և նվազ հրապուրիչ խայժ՝ իր մրցակիցներուն համար. անոր համար է, որ անգլիական բոլոր ձեռնարկները նվազ արժեք կներկայացնեն, քան նույնիսկ փոքրիկ Պելժիքան:

- Անոնք, որ անգլիական դիմաշրջում ունին և կսպասեն անկե, որ Անգլիո վարչական կարգը, դեմոկրատիզմը, ազատությունը, արդարությունը, որոնցմով օժտված է Անգլիան, պիտի կիրառվի նաև կիսակիրթ Մերձավոր Արևելքի մեջ, այդպիսիք ալ չարաչար կսխալին: Այդ առաքինությունները տարածման նյութ չեն. Անգլիան Մերձավոր Արևելքի ներքին գործերուն անմասն է. այդ անոր ներքին

գործն է, ուր թեոկրատիկ, բռնակալ, միապետական, ավատական, հանրապետական, ֆաշական իշխանությունները խտն ի խտն ի-րար կիսաջորդեն, ուր մարդը նվազ արժեք է, քան թե գրաստը, կա-մայականությունը, քան օրենքը. և այդ բոլորը չի հակասեր, ընդհա-կառակը կնպաստե Անգլիո հիմնական շահին, այսինքն՝ Մերձավոր Արևելքի քառս մնալուն, որովհետև այդպիսով ավելի դժվարանցանե-լի կդառնա, քան թե կարգի մտնելով:

- Անոնք, որ անգլիական դիմաշրջում ունին և կիուսան, թե անով ընկերային հեղաշրջում պիտի առաջացնեն և մարդը մարդուն հա-վասար պիտի դարձնեն, նկատի ունենալով մանավանդ, որ Անգլիո մեջ ընկերվարականներն են առաջին զօր վրա, պետք չէ մոռնան, որ ընկերվարությունն այլ արտածման նյութ չէ ընկերավար Անգլիո հա-մար. այդ կագործիչ ուժը կրնա արթնցնել քնացած բազմություննե-րը, կրնա հսկա ուժ մը կազմել՝ վտանգելով կայսերական ուղիները, որով՝ Անգլիո փափագն է, որ այդ տարածումը ըլլա բոլորի համար, քացի Մերձավոր Արևելքեն, որպեսզի ան մնա ցանկապատ իր ճամ-փաներու:

Բայց անոնք, որ անգլիական դիմաշրջում ունին և կջանան իրենց միջոցով, իրենց համար կամ իրենց պատկանող ժողովուրդին համար անկախություն ձեռք բերել և այդպիսիք ունին բավարար ուժ և կրնան Մերձավոր Արևելքի մեջ շոշափելի խոչընդոտ ներկայացնել Անգլիո մրցակից ուժերու դիմաց պատենշ դառնալու, այդպիսիք են միայն, որ կվայելեն քացարձակ օժանդակությունը և ուշադրությունը Անգլիո: Այդպիսիք քանի ուժեղ են և նախանձախնդիր իրենց անկա-խության, քանի օտարամերժ են, այնքան հարգի են, իսկ երբ թուլա-նան և իյնան, Անգլիա չէ անոնք ոտքի հանողը, այլ փոխարինողը թարմ նոր ուժով մը. երբ անոնք սայթաքին և հակին իր մրցակիցնե-րուն կողմը, անոնք կտապալին իրր դավանան իրենց հայրենիքին. երբ անոնք այնքան հզորանան, որ իրենց ուժերով իսկ սպառնայիք ըլլան իր ճամփաներուն, անոնք կսաստլին և հավասարակշռության դիրքին կբերվին:

Ահա այս կետերու մեջ կարելի է ամփոփել անգլիական դիմա-շրջումը դեպի Մերձավոր Արևելք. և ասիկա նկատի առնելով, այդ սահմաններու մեջ այ, փոխադարձաբար, Մերձավոր Արևելքի դի-մաշրջումը պիտի որոշվեր դեպի Անգլիան:

Այս փոխադարձ դիմաշրջումներու պատճառով Մերձավոր Արե-վելքի մեջ ստեղծված են բազմաթիվ մեծ և փոքր պետություններ, ո-րոնց վրա թեև Անգլիո աչքը կա, բայց ինքը բացակա է. և սխալ է ը-սել, թե իր աչքը ըլլալով, անոնք անգլիական հողեր կամ կզորնիներ են: Այդ հողամասերն են՝ հարավեն հյուսիս՝ Եմեն, Օման-Հիմազ-Սեուտիա, Եգիպտոս, Իրաք, Անդրհորդանան, Լիբանան, Սուրիա: Ատոնց շարքին մեջ պետք է ղեկ Ալվանիստան, Իրան և Հունաս-տան ու պետք չէ մոռնալ նաև Թուրքիան, քանի վերջինս հակված կմնա Անգլիո կողմը: Այս Միջին Ասիո շրջան, որ ապահովության գո-տին է Անգլիո համար, իր կատարելագործության դեռուս չէ հասած: Անոր ամրացման համար տակավին պետք է Սուտանի, Հաբսմուտի, Քուվեյթի, Պաղեստինի, Սանճաքի, Կիլիկիո, Տարտանեյի, Քյուրտիս-տանի, Հայաստանի և Իրանի մասերու հարցը շարկապել, որպեսզի Մերձավոր Արևելքը իր ապահովության գոտին դառնա անվտանգ կերպով:

Ասկե՛ պարզ է ըլլալու հայերու, քյուրտերու և շարք մը ժողո-վուրդներու բռնելիք դիրքը դեպի անգլիական դիմաշրջումը: Այն ժո-ղովուրդներու, որոնք կխարխափեն և դեռուս մանկական հասակի մեջ գտնվելով, դիմաշրջումներու միջոցով կորոնեն մարդասիրություն, ողորմություն, արդարություն և այլն:

Բարոյական այս առաքինությունները գոյություն չունին ինչպես չարաշահ անտուրի, նույնպես և քաղաքականության մեջ: Փոխա-նակ այս կամ այն դիմաշրջումներու հետամուտ ըլլալու, պետք է առանց պաշտ և այլի և զգացական պատճառաբանությանց, իրենք իրենց պատասխանեն հետևյալ հարցումներուն.

Ա) Իրենց հայրենիքները Մերձավոր Արևելքի մեջ օղակնե՞ր են, թե ոչ, և մասնավորապես Հայաստան-Քյուրտիստան ամբողջ Մեր-

Ճավոր Արևելքի գինվորական բանալին է, թե ոչ: Եթե այո, այդ պարագային այդ աշխարհագրական կարևորությունը ո՛չ մեկ ուժ չի կրնար փոփոխության ենթարկել:

Բ) Եթե այդ բանալիները ցանկան բաժնվիլ Մերձավոր Արևելքեն և ցանկան միանալ Ռուսիո, այդ քայլը ի՞նչ անդրադարձում կառաջացնե Մերձավոր Արևելքի ժողովուրդներու կողմե, և Անգլիո կողմե, որ Մերձավոր Արևելքի ամբողջականության և անկախությանը շղթայի մեջ կորոնե իր շահը: Հասկնալի է, որ այդ պարագային ողջ Մերձավոր Արևելքը թշնամի պիտի ճանչնա Հայաստանը և Քյուրտիստանը և այդ թշնամության թիկունք պիտի կանգնի Անգլիան, և եթե Ռուսիան թիկունք կանգնելու ըլլա Հայաստան-Քյուրտիստանի՝ պատերազմը անխուսափելի կդառնա, ինչ որ կորստաբեր է այդ ժողովուրդներուն:

Գ) Եթե այդ բանալիները ցանկան Անգլիո գրպանը մտնել, ի՞նչ կըլլա հետևանքը: - Նախ՝ անգլիացիներ նման փշոտ բանալիներ իրենց գրպանի մեջ չեն ուզեր ունենալ, երկրորդ՝ անգլիական բանակներ չեն շարժիր սիրո կամ այլ հաշիվներով, իսկ եթե շարժի, իրենք պատճառ կդառնան ռուս-անգլիական բախումներու, որոնե խուսափիլը շահն է բոլորի: Արդ, անգլիական դիմաշրջումեն բան դուրս չի գար. բացի գրգռություն առաջացնելե, ուրիշ դրական արժեք չունի:

Դ) Կմնա միայն նվազ վտանգավոր, պարզ և արդար ելք մը միայն.- չորոնեն ո՛չ միայն ռուսական, ո՛չ միայն անգլիական միջամտություններ, իրեն զգալ Մերձավոր Արևելքի անհրաժեշտ մեկ կովանը, հավատալ միմիայն իր կարողության և իր ձգտումներու իրագործման. հաստատուն մնալ 50 տարվա իր ձեռք բերած միջազգային դիրքերու վրա և պահանջատեր դառնալ Աևրի դաշնագրի հիմունքներով անկախ Հայաստանի և Քյուրտիստանի ստեղծման և ազգերու ինքնորոշման սկզբունքի կիրառման ինչպես բոլորի, նույնպես հայոց և քյուրտերու վերաբերմամբ: Ասկե գոհ կմնա Մերձավոր Արևելքը. հիմք չունի դժգոհելու Անգլիան, բարոյական հիմք չունի դժգոհելու և Ռուսիան. դժգոհ պիտի մնա միմիայն Թուրքիան, որու

դեմ արդեն եղած պայքարը պետք է շարունակել, մինչև որ ան գիջի՝ ի ուրախություն և հանգստություն Մերձավոր Արևելքի:

ԱՄԵՐԻԿԱՆ ԴԻՄԱՇԵՐՁՈՒՄ

Մենք տեսանք, որ Անգլիո հիմնական շահը մեկն է՝ Մերձավոր Արևելքի անձեռնմխելիությունը, իսկ մնացածները՝ մշակութային, տնտեսական, ընկերային, ներքին քաղաքական, նույնիսկ առևտրական և նյութական այլ տվյալներ երկրորդական են: Ամերիկայի շահագրգռությունը բոլորովին այլ պատճառներ ունի, որոնք եթե կուզեք՝ արհեստական են և ոչ թե կենսական. ժամանակավոր են և ոչ թե տևական:

Անոր հետաքրքրության առաջին պատճառն այն է, որ Նախորդ և ներկա համաշխարհային պատերազմներուն մասնակցեցավ ակամայից, և այդ երկու պատերազմներու նպատակի ծանրության կեդրոնը Մերձավոր Արևելքն եղավ (որ դեռ հեռու է իր լուծումը գտած ըլլալե) և որ կսպառնա պատճառ դառնալ ռուս-անգլիական բախումի, որուն հանդեպ Ամերիկա անտարբեր չի կրնար մնալ:

Երկրորդ պատճառը՝ ավելի անգլիական ցանկությանց ընդառաջելն է. ինչպես Նախորդ պատերազմին՝ Հայաստանի, Քյուրտիստանի մանտան առնելու տրամադրված էր, բայց չհաջողեցավ՝ Նախագահ Վիլսոնին քանի մը մատերու նվազ քվե ստանալուն հետևանքով, այսօր այ 1918-ի նման Ամերիկան արաբական, իրանյան և թըրքական երկիրներուն մեջ խիստ մեծ շահագրգռություն կցուցադրե, այն աստիճանի, որ Թուրքիո և Մերձավոր Արևելքի անվթար մնալը և անոր «կազմակերպումը և զարգացումը» նպատակ կդառնա իրեն, ըստ Նախագահ Թրումանի հայտարարության: Պարզ է իմաստը այս շահագրգռության: Եթե մեկ կողմե Անգլիան Ռուսիո հանդեպ իրեն մինակ չզգալու համար առաջ կքշե Ամերիկան, որպեսզի Մերձավոր Արևելքը իբր պատնեջ կայուն մնա Ռուսիո հանդեպ, մյուս կողմե՝ Ամերիկան շահագրգռված է այդ պատնեջով, որովհետև եթե ան փլչի՝ անզլո-ռուս բախումը անխուսափելի կդառնա, և այդ պարագա-

յին Ամերիկա չպիտի կարողանա դիտողի դերին մեջ մնալ:

Երրորդ պատճառը Ամերիկայի հետաքրքրության՝ տնտեսական, առևտրական, հանքային և մանավանդ նավթի շահագրգռությունն է:

Եթե Անգլիո համար այդ շահագրգռությունը երկրորդ գծի վրա կուգա իր անբավ հարստությանց կողքին, իբր հում նյութի շտեմարան, ընդհակառակը՝ Ամերիկայի համար իր անբավ սպառումներուն հանդեպ Մերձավոր Արևելքի բնական հարստությունները առաջին հետաքրքրական կդառնան: Անգլիան, որ ամենուրեք խիստ ժխտ է և Վենեցուելա-Մեքսիքա և այլուր կպայքարի Ամերիկայի դեմ քանի մը տակառ նավթի համար, Մերձավոր Արևելքի մեջ խիստ առատաձեռն է անոր հանդեպ. իր հսկողության տակ եղած շրջաններու նավթի և այլ նյութերու մշակված թե անմշակ հարստություններն բաժին կհանե Ամերիկայի՝ Սեուտական Արաբիայեն սկսած մինչև Իրաք, Իրան, Սուրիա և Թուրքիա, միայն թե ան համը առնե և հաստատուն մնա Մերձավոր Արևելքի մեջ, ինչ որ իր իսկ ապահովությունը կպահանջե: Կարծես թե այդ ապահովությունը ձեռք բերելու համար է, որ ան պատրաստակամ կերևա իր քաղաքական, տնտեսական և այլ իրավունքները փոխանցելու Ամերիկային Մերձավոր Արևելքի մեջ, Պաղեստինի *մանկայեն* սկսած, մինչև ֆրանսացիներն խլված Սուրիո նավթային *զոները*:

1908-են առաջ իսկ Ամերիկան տնտեսական շահագրգռություններն դրոյված՝ կձգտեր Մերձավոր Արևելքի մեջ իր հարմար տեղը գրավել. բայց Չեստերներու ծրագիրները, արտաքին և ներքին պատճառներով, իրենց սկզբնավորության մեջ իսկ ձախողած են. այս անգամ որքան պիտի իրականանան Թրոմանի հայտարարությունները, ոչ ոք չի կրնար երաշխավորել. այդ կախված է նախ Ամերիկայի փոփոխական *Քոնկրետն* և ապա միայն մյուսներն:

«Սուանց ջուրը տեսնելու բորիկնալու» ցանկությամբ, պետք է նշմարել, որ Ամերիկայի այս հետաքրքրությունը Մերձավոր Արևելքի ճակատագրով՝ կարող է նոր հեղաշրջումներու և նոր դասավորմանց պատճառ դառնալ: Առաջին հերթին՝ Ռուսիո աշխարհածավալ քա-

ղաքական արշավը կսահմանավորվի այս սկսկ ուժին առջև:

Երկրորդ՝ Բրիտանական կայսրությունն ալ իր ճամփաները վտանգեց ազատ տեսնելով, ավելի բնականոն հարաբերություններ պիտի ունենա Ռուսիո հետ:

Երրորդ հերթին՝ ինքը Ամերիկան շահագրգռված ըլլալով Մերձավոր Արևելքով, ո՛չ միայն իբր պահակ խաղաղության՝ Ռուսիո և Անգլիո միջև, այլև կենսապես նյութական հաշիվներով առաջադրված, չի կրնար ո՛չ Անգլիո և ո՛չ Ռուսիո նման անտարբեր մնալ Մերձավոր Արևելքի ներքին կյանքով: Ան պիտի «վերակազմե Մերձավոր Արևելքը» հիմքեն, ոտքեն մինչև գլուխը, որովհետև անոր նյութական շահագրգռությունը պիտի թելադրե, որ ամենն առաջ հաղորդակցությունը կատարելագործվի և մշակվեյր նյութերը արժեք ստանան: Հաղորդակցությունը կատարելագործելու համար անհրաժեշտ է, որ ներկա քարացած պետական սահմանները թափանցիկ դառնան և պետական միավորները միանան՝ ճանապարհներու, մաքսի, հաղորդակցության, արտածման, ներածման, *ֆինանսի* և այլ դաշնակցութեամբ: Այդ դաշնակցությունը հնարավոր կդառնա, երբ ամեն մեկ ազգ, ամեն մեկ դավանանք իր ազատությունը և խաղաղությունը ունենա և ընդհանուր շահին շահակից ըլլալու գիտակցությունը: Նյութի և շահագործման զարգացումը կպահանջե խաղաղություն, իսկ եթե այդ չկա՝ շահագործումը կդառնա թալան: Այս հեռանկարները երջանկության փարոսներ կրնան ըլլալ Մերձավոր Արևելքի բոլոր ազգերու համար, ուր բոլոր ժողովուրդները անխտիր պիտի կրնան գտնել իրենց շահի և ազատության բաժինը, եթե «ուրբաթը շաքաթեն» առաջ չգա: Ժամանակին Հայաստան, Քյուրտիստան ամերիկյան մանտայի ետևեն վազեցին, նույնիսկ Թուրքիան իր վարչապետ Ռաուֆ պեյով և Մուսթաֆա Քեմալով կուգեր դեպի այդ փարոսը ուղղել իր ժողովուրդներու նավակները: Ամերիկան նախագահ Վիլսոնով Հայաստանի սահմանները կզծեր, բայց ան մեռավ և մեռնելն իսկ առաջ տեսավ, որ իր ծրագիրները քամիին տրվեցան Քոնկրետին կողմեն:

Այս հիշեցումները անհրաժեշտ են՝ միտքին մեջ ունենալու համար, որ հաճախ քամիին բերածը եթե քամին կտանի, բայց և այնպես հակառակն այ կրնա պատահիլ: քամիին տարածը նույն քամին ետ կբերե: Այսօր Մերձավոր Արևելքի մեջ «քամիին տարածը քամին ետ բերելու ընթացքին մեջ է», ինչ որ մեկ կարևոր տվյալ է, որ պետք չէ անգիտանալ:

Մերձավոր Արևելքի ժողովուրդներուն համար, իբր քաղաքական ազդակ, ամերիկյան դիմաշրջում ցարդ գոյություն չէ ունեցած, ի բաց առյալ 1918-23 թվերուն, երբ առաջին անգամ ըլլալով Հայաստանը գերադասեց ամերիկյան *մանրան*, զոր ընդունվեցավ թլոր տերությանց կողմե: Երկրորդ հերթին Թուրքիան եղավ, որ 1919-21 թվերուն, Ռուսի պեյի միջոցով, աշխատեցավ Ամերիկյան քաղաքականապես շահագրգռել իր հովանավորությամբ, բայց այդ փորձն այ ձախողեցավ Մոնտոյի վարդապետության հետևանքով: Ատկե վերջ գործնականորեն ո՛չ մեկ ժողովուրդ չէ փորձած ամերիկյան քաղաքական դիմաշրջում ունենալ:

Չնայելով, որ այդ «հեռավոր ուժի» հանդեպ Մերձավոր Արևելքի մեջ նվազ քաղաքական հետաքրքրություն կա, բայց այդ «հեռավոր» երկիրը մեծ շահագրգռություն ցույց կուտա դեպի Մերձավոր Արևելքը: Կա ուժեղ հոսանք մը, որ անկախ Մերձավոր Արևելքի դրական կամ բացասական վերաբերմունքեն, ինք իր կողմե որդեգրած է հատուկ դիմաշրջում մը դեպի Մերձավոր Արևելքը:

Ամերիկայի շահագրգռությունը հիմնովին տարբեր է թե՛ ռուսականեն, թե՛ անգլիականեն և թե՛ անոնցմե առաջ եղած գերմանականն կամ ֆրանսականն: Անոր վարքագծի տարբերություններն են.-

1) Նախկին Գերմանիո նման չի ձգտիր *պանիսլամիզմը*, *պանթուրանիզմը* գործիք դարձնելով և Մերձավոր Արևելքը զինվորական ասպարեզի վերածելով հարձակողական միտումներ ունենալ՝ մեկ կողմե հարվածելու Անգլիան, մյուս կողմե՝ Ռուսիան: Գերմանիան, իբր այդպիսին, մեջտեղեն ելած է:

2) Նախկին Ֆրանսայի նման մտահոգություն չունի Նստելու Սու-

րիա և Լիբանան և անկե հսկելու Հնդկաչինի, Մատակաքարի և այլ ճամփաներու, ո՛չ ալ Մերձավոր Արևելքը նկատելու զաղուօք և մրցակցության կետ՝ այլ շահագրգռողներու դեմ: Այսօր այս դրությունն ալ չկա՝ ֆրանսացիներու հեռացումով, Մերձավոր Արևելքին մեջ:

3) Նախկին և ներկա Ռուսիո նման չունի մտահոգություն, որ Մերձավոր Արևելքով կրնա պաշարման ենթարկվիլ հարավեն, չունի նաև Ռուսիո այն նպատակը, որ Մերձավոր Արևելքը հարձակողական զորեղ կովանի կձգտի վերածել և անոր տիրապետելով՝ մեջտեղեն վերցնել Անգլիո հզորությունը և ապահովել իր մենատիրությունը: Այս դրությունը այժմեական է:

4) Նախկին և ներկա Անգլիո նման չունի մտահոգություն նախանձախնդիր կերպով հսկելու Մերձավոր Արևելքի վրա, որպեսզի երևիցե ան կովան չդառնա իր մրցակիցներուն, մասնավորապես Ռուսիո համար, և չվտանգվին իր կայսերական ուղիները:

Չերձ այդ մտահոգություններեն՝ Ամերիկյան միմիայն մտահոգություն մը և շահ մը ունի. - *Մերձավոր Արևելքի երեսի վրա ձգված բուլլոր տնտեսական կարելիությունները օգտագործել:*

Այս նպատակը ուրիշներու համար երկրորդական է և կզոհաբերվիլ հիմնական այլ նպատակներու, մինչդեռ Ամերիկայի համար այդ է միակն և էականը, որուն կզոհաբերվին քաղաքական ու զինվորական տեսակետները: Այս նոր երևույթը պիտի բերեր Մերձավոր Արևելքի մեջ նորություններ, որոնք նվազագույն չարիքով հետևյալ առավելագույն օգուտները կրնան մտցնել Մերձավոր Արևելքի կյանքի մեջ:

Ընդարձակ աշխարհներու տնտեսական կարելիությունները օգտագործելու համար նախ անհրաժեշտ է քնակիչներու զարգացման մակարդակը բարձրացնել, ունենալ մասնագետներ և ղեկավարներ: Դպրոցը առաջին զենքն է անոր հասնելու համար, և Ամերիկյան է, որ հսկա զուամրներ ծախսելով, այսօր հասած է աստիճանի մը, ուր Մերձավոր Արևելքի մտավորականության մեծամասնությունը ամերիկյան դաստիարակություն ունի և անցած է արդեն ֆրանսական

դաստիարակությունը, ինչ որ ցարդ անմրցելի էր: Տասնյակ հազարավոր տեղացիներ, յուրաքանչյուր տարի դուրս ելելով ամերիկյան համալսարաններն, «Ֆորդի» օթոներու նման կծածկեն իրենց բժիշկներով, ուսուցիչներով, մասնագետներով և բան մը կավելցեն ամերիկյան հնայքին և ծրագիրներուն վրա:

Ֆրանսան և կաթոլիկ եկեղեցին էին, որ հիմք դրին այն սկզբունքին, որ աշխարհներ գրավելու և հիմնապես հաստատվելու համար նախ պետք է նվաճել այդ աշխարհներու հողին: Ամերիկյան աշակերտեց անոնց և աշակերտը արդեն անցած է իր վարպետները. Բողոքական միսիոնարությունը իր անբավ դուլարներով նվաճումներ ըրած է և կարելի չէ ըսել, որ իր հողեր, բարեգործական և այլ ձեռնարկներով նվազ արդյունքներ ձեռք բերած է քաղաքական և տնտեսական ասպարեզներու մեջ: Ոսկին առանց դրամապանակի աղմկալի է և խիստ նախանձ գրգռող, դրամապանակը անհրաժեշտ է անոր քանակը և որակը ծածկելու համար. միսիոնարությունները դրամապանակներու դերը կկատարեն:

Հաղորդակցությունն է ամենեն էական պայմանը՝ երկրի մը նյութական կարողություններն օգտվելու համար: Ասկե սկսավ Ամերիկյան և ցանաց Չեսթըրներու միջոցով հետապնդել մտած ճամփաներուն հարություն տալու մենաշնորհները: Ամբողջ Մերձավոր Արևելքը կցանկային ճանապարհներու ցանցերով պատել, բայց այդ ծրագիրները օրը ցնդեցան գերմանո-ֆրանկո-ռուս-անգլիական ընդդիմությանց պատճառով: Այժմ, որ գերմանո-ֆրանսական ընդդիմություն չկա, երբ Անգլիան կամա թե ակամա կուզե տեսնել Մերձավոր Արևելքի մեջ Ամերիկայի ներկայությունը, արդյոք Նշաններ չկան, որ Մերձավոր Արևելքի հաղորդակցությունը պիտի բարգավաճի Ամերիկայի շնորհիվ, որմեն հետո միայն տնտեսական թափանցումը հնարավոր կդառնա:

Ամերիկայի բուն որոնածը նավթն է և մյուս հանքային հարստությունները, որոնց Մերձավոր Արևելքի մեջ անմշակ ցուված են: Անոնց մեկ չնչին մասը միայն կմշակվի իրար մրցակից ուժերուն կողմե: Այդ

մրցակիցներու շարքին մեջ մտած է նաև Ամերիկյան և արդեն անոնց հավասար իրավունքներ ձեռք բերած: Այդ զինվորական ոգելից խմիչքը, որմեն առաջները, ժառույթամբ, ունկ իսկ չէ- ին տար Ամերիկային և Պարսկաստանեն իրեն ծարավի փախցուցին, այսօր Անգլիան իր ձեռքի տակ եղած պահեստներուն (Սեուտիոյի մեջ ըլլա, թե՛ Սուրիո) դուռները բացած է անոր առաջ: Ամերիկայի համար տնտեսական նոր և լայն ասպարեզներ կբացվին 4-5 միլիոն քառակուսի քիլոմետրոց Մերձավոր Արևելքի կույս աշխարհներու վրա: Ամերիկայի ներկա նախագահը կուզե, ըստ իր հայտարարությանց, Մերձավոր Արևելքի ճամփաները բանալ, անոր տնտեսական կարողությունները օգտագործելի դարձնել, անոր ժողովրդի տնտեսական կարողությունները բարձրացնել, անոր մեջ ստեղծել կարգ և ուժ, բայց այդ բոլորի իրագործման համար պետք է գալ և ներկա ըլլալ Մերձավոր Արևելքի մեջ, պետք է գալ և մտնել երկու մրցակից և թշնամի ռուս և անգլիացի կայսրությանց միջև, պետք է գալ և հիմքեն վերակազմել Մերձավոր Արևելքը, որպեսզի հոն խաղաղություն հաստատվի, քանի որ առանց խաղաղության անհնար է այդ բոլոր ծրագիրները կյանքի կոչել: Պիտի համարձակի՞ Ամերիկյան այդ քայլը առել և մտնել սայի և մուրճի միջև. եթե այո, այդ պարագային կարժե ամերիկյան դիմաշրջումը ունենալ, եթե ոչ՝ այդ անօգուտ ժամակաճանաչություն է:

Գալով Հայաստանի, Բյուրխիստանի և անոնց հարակից շրջաններուն, անոնց է, որ ամենեն առաջ նպատակակետ պիտի դառնան Ամերիկայի համար, եթե ան նպատակ դարձնեն Մերձավոր Արևելքը տնտեսական օգտագործման առարկա ընել, որովհետև, ինչպես պարզած են, Հայաստանն է Մերձավոր Արևելքի ճանապարհներու հանգույցը, Մերձավոր Արևելքի վրա իշխող ամբողջ և Ամերիկայի որոնած նավթի և այլ հանքերու շտեմարանը և կամ շտեմարաններու ակունքներու վրա նայողը:

Հայաստանի սահմանակից Բյուրխիստանը, որ չորս երկիրներու մեջ բաժնված է (Թուրքիա, Իրաք, Իրան, Սուրիա), կտարածվի մշակվող և մշակվելիք նավթի հորերու վրա, Մերձավոր Արևելքի

զլխավոր ճամփաներու երկայնքով և լայնքով: Արդ, եթե Ամերիկան իրոք տնտեսական շահագրգռություններ ունենա, անոր լրջությունը կարելի է չափել, թե ան որքա՞ն նախանձախնդրությամբ կմոտենա հայկական, քրտական ազատագրական պայքարին: Եթե ճիշտ է, որ ճարտարարվեստի, առևտուրի, հանքերու մշակույթյան համար անհրաժեշտ են բնականոն կացություններ, ապա ուրեմն Հայաստան, Քյուրտիստան այսօրվա վիճակով վառողի տակառներ են, որոնց վրա անհնարին է մանավանդ նավթի մշակույթյունը առաջ բերել:

Ահա այս ըլլալով ամերիկյան դիմաշրջումի արժեքը՝ պետք է եզրակացնել, որ եթե անհրաժեշտ է փոքր ազգերու համար ունենալ դիմաշրջում, միակ հանձնարարելի է Ամերիկան, բայց ըստ իս՝ այդ ալ անհրաժեշտ չէ, որովհետև եթե Ամերիկյան ժողովը որոշե հետամուտ ըլլալ՝ Մերձավոր Արևելքի հարստությունները օգտագործելու, այդ պարագային ինքը՝ Ամերիկան կունենա հայկական և քրտական Մերձավոր Արևելքի դիմաշրջում: Կմնա, որ անոնք հասկնան անոր արժեքը, չարիքներեն նվազագույնը համարեն և իրենց շահերու ապահովությունը ձեռք բերելու գնով ընդառաջեն հայ ձգտումներուն, (189-167):

Ռուբեն (Մինաս Տեր Մինասյան)

Հայաստան. Միջցամաքային ուղիներու վրա:

Պեյրուք, 1948, 185 էջ:

ՏԱՐՏԱՆԵԼԻ ԱՌԱՍՊԵԼԸ* ԿԱՄ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ PR-Ի ԹՈՒՐՔԱԿԱՆ «ՍԵՎ ԽՈՒՌՉԸ»

«Ռուսիա, նայած թե ինչ է Թուրքիո դիրքը Նեղուցների հարցում Ռուսիո հանդեպ, կարող է լինել «կամ Թուրքիո առաջին բարեկամը և կամ նրա առաջին թշնամին»: [...] առավելաբար Նեղուցների հետքերով Ռուսիա կամ բարեկամ և կամ թշնամի էր դառնում Եվրոպական պետությանց. բարեկամանում էր նրանց՝ որոնք Նեղուցների հարցում իրեն հետ էին, և թշնամի դառնում նրանց՝ որոնք իրեն դեմ էին: ... երբ [Եվրոպական պետությունները] ուզում էին Ռուսիան իրենց հետ ունենալ՝ դառնում էին զիջող Նեղուցների հարցում. իսկ երբ այս բարեկամության կարիքը սուր կերպով չէին զգում՝ համայնքովում և խեղդում էին Ռուսաստանը Նեղուցների ջրերում (էջ 125)»:

Վ. Նավասարդյան
Նեղուցները (Վուսիոր և
Դարդանեյ). թրքական
ջրուղիները և հայ դատը:
Գահիրե, 1947.

Վավերագրում ներկայացված է Առաջին աշխարհամարտի թուրք ռազմաքաղաքական գործիչ Վեհիբ փաշայի հուշերն ու գնահատականները համաշխարհային քաղաքական խաղի հանգույցներից «թրքական ջրուղիների» շուրջ անցած իրադարձությունների վերաբերյալ: Հեղինակի դատողությունների խորքից դուրս է ցցվում բնության և հասարակության մեջ անվիտեպ գործող օրինաչափությունը՝ հավասարակշռության հաստատման մշտնջենական ձգտումը՝ կողմերից մեկին բերելով մահ, մյուսին պարզանելով երջանկություն, թեկուզև ժամանակավորապես:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ հավասարակշ-

ույթյուն (բալանս), նեղուցներ, Բոսֆոր, Դարդանել, Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Ռուսաստան, Թուրքիա:

Առաջին աշխարհամարտի հարյուր ամյակի առնչությամբ, նրա ենթատեքստում՝ Թուրքիայի կողմից Արմենոցիոյի չփոխհատուցված ոճիրի առնչությամբ, կարևոր են, բնականաբար, պատմական անցյալում կատարված (տեղի ունեցած) շատ իրադարձություններ. երբեմն պատմական ճշմարտությունը վեր հանելու, երբեմն խեղաթյուրումների շրջան ամրացնելու նպատակով: Այդ իրադարձությունների թվին են պատկանում «թրքական ջրողիների» շուրջ ծավալված գործողությունները, նրանց տիրանալու խոշոր (շահագրգիռ) տերությունների խորքային դրդապատճառները, թուրքերի հաղթանակի, Աստանտի տերությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի աղետալի պարտության մոտիվացիայի և պատճառների ուսումնասիրությունը: Այս առնչությամբ շատ է գրվել անցյալում, սակայն, ինչպես կարելի է ենթադրել, ավելի շատ գրվելու է առաջիկա ամիսներին, հատկապես մինչև 2015 թվականի ապրիլի 23–ը, մինչև Հայոց Մեծ եղեռնի հարյուրամյակի օրը՝ 2015 թվականի ապրիլի 24–ը: «Հաղթանակի» փաստը, թրքական ավանդույթով, խեղաթյուրվելու և շահարկվելու է աստիճանորեն, թերևս ձեռքի հետ հիմնավորելով նաև Արմենոցիոյի (Հայաստանություն) օրյեկտիվ անխուսափելիությունը: Եվ՝ այն, և՛ այն: Ուստի նկատի ունենալով հարցադրման հույժ կարևորությունը՝ խորհող ընթերցողի ուշադրության ներ հանձնում ժամանակաշրջանի թուրք ուզամբարդաբական գործիչներից Վեհիբ փաշայի խոստովանություն–մենախոսությունը՝ շարադրված և փոխանցված պատմագիտությանը անզուգական Ռուբենի ձեռամբ՝ որպես վավերագրի իր տեսակի մեջ եզակի մի օրինակ, շատ ավելի հավաստի, քան ստվարածավալ որևէ հետազոտություն: Եվ այսպես: Ռոտոսթոթ՝ փոքրիկ, գեղեցիկ քաղաք մը, սրբատաշ քարերով շինված, համեստ և նեղ փողոցներով, որ կը հիշեցնեն անցյալը, քայց կորած է ներկայի հոգերու մեջ: Քաղաքին զարդը գեղեցիկ ծովն է, որ իբրև հայելի ինկած է Սև և Արշիպեղագոս ծովերու միջև: Այդ ծովը Մարմարան է:

Անոր մեկ ծայրը Վոսփորն է, իր Պոլսով, իսկ մյուս ծայրը՝ Տարտանելը՝ իր անցքով: Ծովի կեդրոնին վրա բարձրացած են համանուն Մարմարա կղզիները, որոնք կնային ջուրերու մեջն Վոսփորի և Տարտանելի նեղուցներուն և իրենց դեմ եվրոպական ափին բարձրացող Թեքիր Տաղ լեռներուն, որոնց ստորոտը կզունվի Ռոտոսթոթ քաղաքը: Եթե Մարմարա կղզիները ծովի կեդրոնին վրա են, Ռոտոսթոն ալ ծովափի կեդրոնին վրա է: Այդ կետն կսկսի Թեքիր Տաղ շրջան, որ կմտնե Արշիպեղագոս ծովուն մեջ և կդոյացնե Կեյիպոլի նեղ թերակղզին, որ արևելյան ափով Տարտանելի ջրանցքը կդոյացնե, իսկ արևմտյան ափով Քսերոս ծոցը կկազմե Արշիպեղագոսին մեջ: Այդպեսով, Ռոտոսթոն՝ համաշխարհային նշանակություն ունեցող Տարտանելի գլխուն կանգնած պահակ մըն է, իր Թեքիր Տաղ լեռներով: Մյուս կողմն ան միջին օդակն է Վոսփոր– Տարտանել նեղուցներուն, որոնց ճամբու կեսին կզտնվի: Դյորին ճամբաներով կերթա դեպի Չորլու և Չաթալճա՝ մտնելու համար Պոլիս և հսկելու համար Վոսփորի անցքերուն և փակելու համար Եվրոպայի և Ասիո դուռները կամ բանալու համար զանոնք իր ուզածին պես: Հոս ավելորդ չէ հիշել Վեհիպ փաշայի յուրահատուկ տեսակետները՝ Տարտանելի 1914 թվի կռիվներու մասին: Վեհիպ փաշայի մեծ եղբայրը՝ Էսատ փաշան առաջին մեծ պատերազմի առնե Պոլս և Տարտանելի վերին զորամասի պետն էր, իսկ ինքը Կեյիպոլի–Քսերոս տարածության հրամանատարը: Ուրեմն, անոնց ձեռքին տակ էր որ տեղի ունեցավ թրքական հերոսամարտը, ուր հերոսացավ Մուսթաֆա Քեմալ փաշան և ուր պարտության մատնվեցավ ողջ Եվրոպան: Երբ 1927–ին Վեհիպ փաշան ինժի հյուր էր եկած երկու շաբաթով, հարցուցի. - Ի՞նչն էր հիմնական պատճառը ձեր հաղթության Տարտանելի մեջ և ի՞նչ էր պարտության պատճառը Եվրոպայի: Ձեր պատրաստությո՞ւնը, զենքի առավելությո՞ւնը, ձեր քաջությո՞ւնը, ձեր թվական առավելությո՞ւնը: Ան պատասխանեց. - Կամ հարցումդ պետք չէ պատասխանել, կամ պետք է պատասխանել ճիշտը, քանի որ քեզի դժվար է կլլեցնելը: Ըսեմ ճշմարտությունը, որ դյուր պիտի չգա ոչ ոքի. «Մեր պատ-

րաստութիւնը և զեքի առավելութիւնը: Ոչ, իհարկե: Այդ առասպել է: Տարտանեյի ամրությունները իհն ես և հարմարցված մեկ դար առաջ եղած գրահանավերուն: Անոնք կփոշխանային նոր գրահանավերու ռումբերեն: Յուցանշան լինելով, ավելի վնաս կուտային քան օգուտ: Մենք նոր գրահավորներուն հարմարցված ամրություններ չունեինք և չունինք: Կեյիպոլի կոիվը խրամային կոիվ դարձավ մեզի համար: «Մենք զինաթափ էինք անոնց գրահավորներուն դեմ, քանի որ մեր թնդանոթները անոնց թնդանոթներուն կես ճամբան իսկ չէին հասնիր. մեր գնդակները կհասնեին անոնց երբ գրահավորները արհամարհելով մեզ, կամովին մոտենային մեզի, կամովին մոտենային մեր թնդանոթներուն: Բայց մեր գնդակները կարողություն չունեին անոնց գրահները խորտակելու: Մենք ունեցանք հեռարձակ և սպանելիզ զենքեր գերմաններեն այն ատեն միայն, երբ Դաշնակից ուժերը որոշեցին թողնել Տարտանեյը և հեռանալ: Հավատա՛ ինձի, մեր զինական գերակայությունը չէր պատճառը մեր հաջողության: «Թժվական առավելութիւնը: Ոչ, իհարկե: Այդ ալ առասպել է: Քեզի ըսի, որ Կեյիպոլի կոիվը դարձավ խրամային կոիվ: Կեյիպոլի տարածությունը այնքան փոքր է, որ կարելի էր խրամները լեցնել առ առավելն 40-50 հազար զորք. ավելի զորքին ոչ տեղ կա աշխատելու և ոչ ալ հնարավորություն պարենավորելու: Նույնքան և գուցե քիչ մըն ալ պակաս թշնամին կրնար օգտակար կերպով զորք տրեպվորել: Երկու կողմերն ալ թվական առավելությամբ չէին կրնար մեկզմեն ջախջախել: Միայն երկու կողմը կանգնած համարյա հավասար թիվով ուժերն էին, որ կրնային իրար թզկտել, բայց անկարող էին իրար քնաջնջել: Թիվը թեև անարժեք էր Կեյիպոլի մեջ, բայց անհրաժեշտ էր շուրջ 40.000 զինվոր միշտ լրիվ ունենալ երկու կողմին համար և ամեն օր սպանվածներու և վիրավորներու տեղը նոր ուժ բերել: Ատով պետք է բացատրել, որ յուրաքանչյուր կողմ կես միլիոն զոհեր ունեցավ Տարտանեյի կռիվներու ընթացքին, եթէ չըսեմ մեկ ու կես միլիոն բոլորին համար: «Այս սարսափելի սպանդի մեջ ամենասարսափելին անզվիացիներու և «անզակ»-ներու ֆուսպոլ խաղալն էր

ամեն մեկ կռիվ ընդմիջումին, ինչ որ մեր վրա ճշիչ տպավորություն կթողեր: «Երրորդ հարցումիդ դժվար է ճիշտ պատասխանել.— ծիծաղելով ըսավ Վեհիա:— Եթե ճիշտը իմացվի, բոլորն ալ հերետիկոս, դավաճան ըսելով պիտի կախեն մեզ: Կհարցնես, թե Տարտանեյի 147 կռիվներուն մեջ խեղճը, հերոսությունը, քաջությունը որո՞ն կողմն էր: Եթե քեզի ըսեմ, որ Տարտանեյի մեջ մեր կողմը ո՛չ խեղճի, ո՛չ հերոսության և ոչ ալ քաջության անհրաժեշտությունը կար, պիտի չհավատաս: Այդ բոլորը անհրաժեշտ էին, սակայն մեր հակառակորդ կողմին. անոնք ալ այդ չունեին»: Ձմեռ էր այս խոսակցության ատեն: Սալամանդր վառարանը հանգիստ կկառեր: Ես ներողություն ըսելով՝ ելա քիչ մը քարածուխ ավելցնելու համար: Վեհիպը հարցուց.— Այդ Սալամանդր վառարանը լա՞ր վառարան է: — Հիանալի վառարան է: — Դուն անոր շինելը կամ անոր մեքանիզմի սկզբունքը գիտե՞ս: — Շինելը, իհարկե, չեմ գիտեր և վառվելու սկզբունքով ալ չեմ հետաքրքրված, բայց փորձով գիտեմ, որ շատ լավ կկառի: — Բայց դյուրի՞ն է զայն կառավարելը.— հարցուց: — Կառավարելու բան ալ չկա: Պիտի նայիս, որ մեջի քարածուխը չվերջանա և նորը լեցնելու ես, երբ վերջանալու վտանգը կա: — Մեկ հարցում ալ. ամեն տեսակի քարածուխ կվառի՞՞ այդ Սալամանդրի մեջ: — Ամեն տեսակն ալ կվառի,— պատասխանեցի: — Մեկ հարցում ալ, և այլևս ես հարց չունիմ: Այդ քարածուխները, որ կլեցնես, պատահե՞ր է, որ ապստամբին, ուզեն դուրս փախչիլ հնոցեն և դժկամակին իրենց վառվելեն: Երբ զարմացած անոր երեսին կնայեի, ան կծիծաղեր վրաս: — Դուն կարծեցիր թե այդ վառարանը ես առաջին անգամ տեսած եմ: Քեզմե ավելի լավ գիտեմ անոր կազմությունը: Ես գործածած եմ զայն: Իմ հարցումներով ես կուզեի հասկննել քեզի Տարտանեյի մասին քու հարցերու պատասխանը: Բայց դուն չհասկցար: Իբրև պատիժ՝ բաժակս լից, ես բացատրեմ: Իմեց մեկ ումպով մեկ բաժակ կոնյակ և սկսավ բացատրել. «Կեյիպոլի թերակղզին նկատե նեղ սրվակ մը: Ան կողովի մեր ձեռքը մնացած Մարմարայի ջուրերով և Մուրատ Չայի լայնքով՝ Տարտանեյի անցրով, որ լեցված էր սկաններով: Իսկ

մյուս կողմնե՝ կողողվի Արշապեղագոսի և Քսերոսի ծոցի ջուրերով, որոնք լեցված էին ֆրանսական, անգլիական և այլ գրահանավերով: Այդ սրվակի նեղ վիզը և բերանը, որ ցամաքի հետ կկապե գայն, Թեքիր Տաղի լեռներն են, որոնք հագիվ թե քանի մը քիլոմետր տրամագիծ ունին՝ լայնալավ Քսերոսի ծոցին շուրջ և միանալով ցամաքամասին. անոնք հարմար են ճակատամարտի համար և կովելու ասպարեզ կբանան իրենց շրջապատին մեջ: Ճիշտ այդ կետին վրա են նստած էի. մեկ կողմեն, ամեն վայրկյան կապասեի, որ թշնամին ցամաքահանում պիտի ընե և պիտի ջանա խել Կեյիպոյի բերանը, իսկ մյուս կողմեն՝ այդ բերանեն ես ներս կլեցնեի սրվակին մեջ (Կեյիպոյի) լինի ցամաքով, լինի Մարմարա ծովով, օրական 10–30.000 զորք, հոն վառվելու համար: Այդ սրվակին մեջ լեցվող ետ չէր կրնար դառնալ. ան պիտի վառվեր, և անոր միայն մոխիրը ետ կուգար, իբրև դիակ և վիրավոր: Կեյիպոյի հնոցին մեջ ինկոլներեն միակ երջանիկները անոնք էին, որ շատ ծանր վերքեր կստանային և անպետք կդառնային նորեն այդ հնոցին մեջ ձգվելու համար: Քիչ մը ծանր շունչ առնել և ձխախտող վառելետեք, ան վերսկսավ իր պատմությունը՝ խեղդելով իր հուզամները. «Դուռ շատ հիացած կերպա Կեյիպոյի կովոլներու և հերոսներու վրա 148 և մասնավանդ Քեմայի վրա: Նախանծ չէ ըսածս, քանի որ անոնք իմ ձեռքի տակն էին և անոնց վերագրվածները վերջ ի վերջո ինձի կուգան: Բայց առանց զգացմունքի եթե դատենք, սրվակ մը որուն մեջ ինկողը, լինի լավ թե վատ, լի վախկոտ թե քաջ, լինի խելոք թե անխելք, դատապարտված է հավասար կրակով վառվելու անխտրականորեն, ոչ մի առաքինություն չի ցուցադրեր: Երբ կանխորեն որոշված է թե ուր պիտի նստիս, ուր պիտի կովիս, ինչ պիտի կովիս և, հավառակորդ սպաննելետեք, ինքդ ալ պիտի սպաննվիս, այդ կդառնա մեքենական աշխատանք, ուր ո՛չ հերոսություն, ո՛չ խելք, ո՛չ քաջություն անիրաժեշտ է: Այդ բոլորը անիրաժեշտ էին գրահավորներու մեջ նստածներուն համար. իսկ մեր կողմը, որ բռնած էր Կեյիպոյի բերանը և կապասեր Քսերոսի ծոցի ցամաքահանման, պատեհություն չունեցավ

ցուց տալու որևէ առաքինություն, մինչ առաքինություն պակսեցավ թշնամիին: Ահա քեզի Կեյիպոյին»: Երբ ես տարակուսանքով կնայեի անոր, «իհարկե, անհավատալի և սարսափելի կերևան քեզի ըսածներս», ըսավ ժպտելով, և քաշեց իր սիկարեթը: — Համոզիչ չէին ըսածներդ, կներես, որովհետև կարծես թե այդքան գրահանավեր, որ խորտակեցիք, իրենք իրենց խորտակվեցան: Կարծես վեց միլիոն զորքեր անտեղի կերպով բերած եք և զոհաբերած՝ առանց նպատակի: Կարծես թե Անգլիա, Ֆրանսա չեն ուզած հաղթել և իբրև ոճրագործներ իրենց բանակի գլխուն արյունալի խաղ մըն են խաղացեր: Անոնց հաղթողը դուք չե՞ք եղեր, անարժեք եղեր են ձեր տված կես միլիոն զոհերը: Տարտանելի մեջ կատարվածը անհաշիվ ոճի՞ր մըն է եղեր երկու կողմերուն համար ալ: Վեհիպը տաքացած ըսավ. — Առաջին ըսածդ ճիշտ է, իսկ երկրորդը՝ սխալ: Ես արդեն ըսի, որ Դաշնակիցները հիմար գտնվեցան կամ, եթե հիմար չէին, գիտակցական ոճրագործներ եղան իրենց հարազատ զորքին: Տարտանելը փակ դուռ մըն էր: Մտնելու համար նեղուցները՝ կամ պետք էր այդ դուռը կտրել և մտնել, և կամ պետք էր այդ դռան բանալին գտնել և բանալ ու մտնել: Ուրիշ միջոց չկար: Առանց բանալի՞ դուռները ցարդեղով հնարավոր էր մտնել նեղուցները, որովհետև մենք հետարձակ թնդանթներ չունեինք: Թշնամին հեռու ներեն կրնար մեզ լրտօթյան մատնել և մտնել նեղուցները՝ հոգնություն հանձնառնելով մաքրելու ականները: Թշնամին այդ գիտեր և այդպես ալ փորձեց ու, հաջողության ամեն գրավական ունենալե հետո, իր ձեռք բերած հաջողությունը իր ձեռքով ձախողեցուց: Նախ՝ կերողնացած նավային կրակով լռեցուց մեր ամրությունները, երկրորդ՝ մեր բախտեն նավային ուժերուն զլուխը դրավ ֆրանսական գրահանավերը, իսկ անոնց ետևեն՝ անգլիացիները: Երրորդ՝ ֆրանսական գրահանավերը առաջ քշելով՝ մտցուց Տարտանելի մեջ հաջողությամբ: Սակայն, պատահեցավ մեզի համար անսպասելի: Հաջողության մեջ անոնք թողին և իրենց գրահանավերով հեռացան նեղուցներեն: Գիտնե՞ս ինչու: Ֆրանսական ղեկավարությունը իբրև ավելի սնափառ, առաջինը կու-

գեր լինել Տարտանեյին տիրողը և Պոլիս մտնողը, իսկ անգլիական ղեկավարությունը ատոր կվերաբերեր հետին հաշիվներով: Երբ ֆրանսական քանի մը զրահանավեր վնասվեցան և անհույս դարձան,- այդքան վնաս անխուսափելի էր,- անգլիացիք իսկույն եզրակացություն հանեցին, թե անհնար է նավատորմիդով տիրապետել Տարտանեյին, թեպետ ան արդեն տիրապետված կրնար լինել փոքրիկ ճիգով մը: 149 «Հրաման տվին քաշվելու, հակառակ ֆրանսացիներու տրտունջին, թե մեզ առաջ ձգեցիք և մշակված ծրագիրը կլքեք: Անգլիացիք չուզեցին զրահանավերով մտնել Տարտանեյ և Պոլիս: Անոնց հաշիվն էր, թե որո՞ւ համար տիրենք Տարտանեյին, քանի որ Պոլիսը և Նեղուցները խոստացված են Ռուսիո: Որով իրենց զոհաբերությունը պիտի ծառայեր Ռուսիո տիրապետության»: «Ավելին ըսեմ: Գերմանացիք ևս կուզեին, որ անգլիացիք տիրեն Տարտանեյին և գան Պոլիս, թեպետ մեր զինակիցներն էին: Ինչքան հեռարձակ թնդանոթ կուզեինք Տարտանեյի համար, անոնք կձգձգեին, թեքնիք և այլ պատճառներով: Բայց երբ պարզ եղավ, թե անգլիացիք այլևս պիտի չգան, թեղանոթները առատորեն եկան: Գիտե՞ս ինչու: Գերմանները կհուսալին անգլիացիներու մոտեցով Պոլիս, ճեղք մը քանակ ոռներու և անգլիացիներու միջև: «Այս բոլորն մեկ բան պարզ էր. Տարտանեյը բռնությամբ մտնելու անհնարությունը տարածվեցավ, ինչ որ առասպել և սուտ էր առաջին շրջանին, իսկ իրական եղավ, երբ անոր վրա ծովով հարձակող չկար: Պարզ էր մեզի համար, որ, գոնե ծովով, անգլիացիք չեն ցանկար մտնել Տարտանեյ: Իսկ ցամաքով Տարտանեյին տիրելու ճանապարհը Կելիպոլիի թերակղզին չէր, այլ այդ թերակղզիի գլուխը, ուր ես նստած էի, հսկելով Քսերոսի ծովախորշին Թեբիո Տաղի փեշերեն: Այդ տեղեն է որ կարելի էր ցամաքով երթալ և տիրապետել Կելիպոլիի թերակղզիին, ուր մեր ուժերն էին կեդրոնացած, քանի որ իշխելու բանալին հոն թաքնված էր: Բայց ի գուր կսպասեի մեզի համար ճակատագրական այդ կետի վրա: Մեզ հանգիստ կթողնեին: Եթե հիմար չլինեին, կամ ավելի ճիշտը՝ եթե լրջորեն ցանկային Տարտանեյին տիրել, փոխանակ յուրա-

քանչյուր օր զոհաբերելու 20-30 հազար մարդ Կելիպոլիի թերակղզիին մեջ, այդ զորքերը կհատկացնեին Սերոսի ծոցն զարնելու թերակղզիի վիզին և զազաթին: Այդ պարագային մեր ուժերը հոն ուղարկելը, մեր պարենավորումը անհնար պիտի ըլլար, և Կելիպոլին ինքն իրեն պիտի իյնար և Նեղուցները պիտի բացվեին: Բայց ըսի, որ անգլիացիներու բուն նպատակը Նեղուցները տիրապետելը չէր, այլ Նեղուցներու մեջ մեզ զբաղեցնելը և մեզ մաշեցնելը: Այդ նկատեցինք: Ես համոզված էի ատոր մեջ: Ատոր համար է որ մեր ուժերը թեթևուցիկք Տարտանեյի շրջանեն, և ես ուզեցի հեռանալ նոր ճակատ մը, ուր պարտվիլ և հաղթել հնարավոր էր: Եվ ես եկա Կովկասյան ճակատ՝ ձեզի և ոռսերուն հաղթելու համար»: Կելիպ փառայի այս դատողությունները քանացի հնար եղածին չափ հարազատորեն հոս բերել՝ ցույց տալու համար Ռոտտոթոյի կարևոր նշանակությունը Պոլսո և Նեղուցներու համար: Ռուբէն (Տեր-Մինասյան), Հայ յեղափոխականի մը յիշատակները, հտ. 2, Կարսէն՝ Պոլիս (1909), Թեհրան, 1982, էջ 253-260:

* Դարդանելի գործողության վերաբերյալ լրացուցիչ խորհուրդ է տրվում կարդալ՝

1. Корбетт Ю., Операции английского флота в мировую войну. Пер. с англ. Изд. 3-е, т. 2, М., 1997, 470с.

2. Нарочницкая Н., "Восточный вопрос" и мировая политика. <http://nash-sovremennik.ru/p.php?y=2004&n=10&id=3/07/07/2014/>.

3. Շամյեան Ա., Տարտանեյի պատերազմը. Կ. Պոլիս, 1930, 400 էջ:

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԻ ԱՉԳԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԸ ՎԱՐԱՆԴՅԱՆ-ԻՐԱՎԱՊԱՇԵՏԸ

19-րդ դարի 60-ական թվականներից մինչև Առաջին աշխարհամարտ իրականացած հայոց մտավոր-քաղաքական վերածննդի գործում իր ուրույն տեղն ունի Միքայել Վարանդյանը (Հովհաննիսյան, 1872-1934), որը գիտեսական որոնումների ու քաղաքական գործունեության ոլորտ մտավ 19-րդ դարի վերջին տարիներին և պայքարի հրապարակում մնաց շուրջ չորս տասնամյակ: Փիլիսոփայություն ու հասարակական գիտություններ ուսումնասիրեց Եվրոպայում՝ Գերմանիա, Շվեյցարիա, և ստացած բազմակողմանի գիտելիքները ծառայեցրեց ազգային հեղափոխության ռազմավարության ու գործելակերպի տեսական հիմնավորմանը: Այդ տեսանկյունից, թերևս, նա իրեն հավասարը չունեցավ: Նա իր կայուն ու նշանակալից տեղը գրավեց հայ գիտաքաղաքական ու սոցիալ-փիլիսոփայական մտքի պատմության մեջ:

Վարանդյանի մոտըը (գիտա) քաղաքական հետազոտությունների ոլորտ աննկատ չմնաց Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի հայազգի գործիչների համար ևս: Հայտնի են նրան տրված Ս.Սպանդարյանի, Ս.Շահումյանի թունուտ գնահատականները: Վարանդյանի ստեղծագործական ժառանգությունը, քնականաբար, «վերլուծվե» և «արժևորվե» է խորհրդահայ փիլիսոփայության կողմից (Հ. Գաբրիելյան³⁸, Վ.Սևյան³⁹, Բ. Անանիկյան⁴⁰ և ուրիշներ):

Սակայն, ժամանակը ինքը սրբագրում է կողմնակալ գնահատականները: Եվ այսօր, պատահական չէ, որ Վարանդյան-տեսաբանը,

Վարանդյան-քաղաքական գործիչը «անհանգստացնում է» հայ գիտաքաղաքական միտքը, ուղղորդում հետազոտողների որոնումները: Բանգի Վարանդյանն իր փոթորկոտ ու բեղուն ստեղծագործական կյանքի ընթացքում փորձել է ըմբռնել մարդկության առաջընթացի ներքին տրամաբանությունը, նրա համատեքստում՝ հայ ժողովրդի անվտանգ գոյության ու Հայաստանի պատմական զարգացման հեռանկարը:

Հետամուտ առաջադրված խնդրին ստեղծել է մինչև օրս չգերազանցված մեծարժեք գործեր, որոնց մեջ առանձնանում է «*Հայկական շարժման նախապայտություն*» (Ժնև, հ.1,1912, հ.2, 1913) ուսումնասիրությունը, որտեղ դոկտոր Խ.Թութունջյանի գնահատմամբ «հանգամանորեն հիմնավորված է ժամանակակից հայության ազգպետություն դառնալու ձգտումը և անխուսափելի բնույթը հայ հեղափոխական ազատամարտին...»⁴¹: Նրա օրգանական շարունակությունը կազմող և նրան համակողմանիորեն լրացնող հոդվածաշարներ՝ «*Ուշացած մարդարներ*, *Լեռն և հայկական շարժումը*»⁴² և «*Հիսուն տարի առաջ (1877-1927)*»⁴³:

Վարանդյանը վառ արտահայտված երկրաքաղաքակրթական ենթատեքստ ունեցող իր գործերում վեր է հանում աշխարհագրական բարդ միջավայրում հայ ժողովրդի դարավոր պայքարի ու մաքստումների ընթացքը: Այն դեպքում, երբ, թվում է, անեացման դատապարտված ժողովուրդը, անհամար զրկանքների ու տեսական խարխափումների ուղեկցությամբ կարողացավ, այդուհանդերձ, «ճողպարել «...» անօրինակ նահատակության անդունդներից, ծածանելով մշտապես «...» ոչ միայն իր գոյության, այլև համեստ, թանկարժեք

³⁸Գաբրիելյան Հ., Ժամանակալից տիրուրանայ յուրժուական ռեանցիոն փիլիսոփայությունը, Երևան,1960: Լոսյեի՝ Հայ պատմափիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Երևան,1966 և այլն:

³⁹Սևյան Վ., Հայ յուրժուական փիլիսոփայության քննական վերլուծություն, 20-րդ դարի սկիզբ, Երևան,1971:

⁴⁰ Անանիկյան Բ., Դաշնակցության զաղափարական-քաղաքական կրակը, Երևան,1974:

⁴¹ Թութունջյան Խ., Միքայել Վարանդյան (Է.Յ. Դաշնակցության տեսաբան-զարտիարախոսը), «Հայրենիք»,1936, թիվ 5, էջ 109:

⁴²«Հայրենիք», 1925, թիվ 12, էջ 59-71, թիվ 1, էջ 104-130, 1926, թիվ 3, էջ 97-107, թիվ 4, էջ 84-98:

⁴³«Հայրենիք», 1927, թիվ 11, էջ 84-94, 1928, թիվ 9, էջ 80-90, թիվ 10, էջ 81-90:

բաղաբալկրթության դրոշը... «Եվ» գնում է թանելու քաղաքակրթության սանդղոցի պատվավոր աստիճանների վրա, գնում է բազմելու լուսավոր ժողովուրդների արեռնագամ...»⁴¹:

Դժոխային պայմաններում նա ստիպված է եղել ընտրություն կատարել, Պրեսանսեի արտահայտությամբ. «Երկու ահավոր տարերքների» ոռոսական ծովի և թուրքական դևի միջև, «երբեմն համբուրել իրեն հարվածող, զգետնող ձեռքը, որովհետև այդ ձեռքը փոքրագույն չարիքն էր, որովհետև նրանից ավելի զարհուրելին կար»: Եվ դա արևմտյան տերությունների դիվանագիտական մշտնջենական խարդավանքների ուղեկցությամբ:

Եվ, սակայն, ընդգծում է Վարանդյանը, նա միշտ էլ ձգտել է իր հայրենիքի «երեք հատվածների մեջ» «ուժ տալ ամենուրեք քաղաքական վերածնության, նվաճել ամենուրեք պետականություն, իշխանության մի մասնիկը, ստեղծել ամենուրեք այն անհրաժեշտ պայմանները, այն քաղաքական-ընկերային մթնոլորտը, ուր նա կարողանա ազատորեն զարգանալ, բարգավաճել՝ միացած, ձեռք-ձեռքի տված, դրացի, բախտակից ժողովուրդների հետ»:

Վարանդյանի քննախույզ հայացքի առաջ հայկական շարժման նախապատմությունն է (մինչև 1890-ական թվականներ), այդ շարժման հեղափոխական ընթացքը՝ Արևելյան հարցի համառոտացում, խոշոր տերությունների, գլխավորապես Անգլիայի, Ռուսաստանի մրցակցությունը Հայաստանի ու Հայկական հարցի շուրջ: Ընդսմին նա տալիս է նաև հայության ամբողջական քննադատի մեկնաբանությունը, նրա «մշտադավար սերվիլիզմի» (ձառայանտության) ու կրավորականության անողորք քննադատությունը: Եվ միաժամանակ նույն ժողովրդի աննազոյր նվիրումը քաղաքակրթական ու մշակութային առաջադիմությանը, անկեղծ ակնածանքը հանդեպ արևմուտյան արժեքները: Ու նրա դեմ հանդիման՝ թուրքական իրականությունը, թուրքն «իր քնազոններով ու ավանդական քաղաքականությամբ»:

Վարանդյանը ցավով նկատում է, որ արևմտահայությունը, տալով «հերոսության բազմաթիվ ու հոյակապ տիպարներ», այդուհանդերձ, չկարողացավ երկնել երկիրը կամ նրա որևէ խոշոր հատվածը ընդգրկող ազատագրական շարժում, ինչի հետևանքով Չեյթոնը, Սատունը և նրանց համարժեք ապստամբական օջախները մնացին հերոսացման և ըմբոսացման տոսկական «վախիներ»: Մեծապես ազդվելով Ֆրանսիական մեծ հեղափոխության ազատարար գաղափարներից, արևմտահայությունն ընտրեց դիմադրության ու պայքարի խաղաղ եղանակներ: Նա գնաց պայքարի սահմանադրական ուղիով, տուրք տալով, զուգահեռաբար, դիվանագիտական ֆեռտիշին՝: Ավելին, Հայկական շարժումը եղավ «ժողովրդային՝ ոչ ազգային»: Այն չընդգրկեց ժամանակի հայ հասարակության բոլոր դասակարգերին, բոլոր հատվածներին, ընկերային խմբերին ու շերտերին: Նա չեղավ ամբողջական: «Ազգային չեղավ հայ ազատագրական շարժումը, այն իմաստով, ինչ իմաստով ըմբռնվել և մղվել է այն ուրիշ, ավելի առաջադեմ երկրներում, Իտալիայում, Հունգարիայում, Լեհաստանում, Իդալանդիայում և նույնիսկ Հունաստանում-հավաքական ու համերաշխ ճիգերով, ազգի բոլոր դասակարգերի միահանուտ գործակցությամբ»⁴²:

Թուրք կառավարությունն իր հերթին «չնորհեղով» Ազգային սահմանադրություն (1863թ.) հետապնդում էր սեփական նպատակներ. անուղղակի քաջալերելով նրա կրավորական տրամադրություն-

⁴¹ Զարիքը հայկական դիվանագիտության այս կամ այն ձևի ու վիճակի մեջ չէր ընդգծում է Մ. Վարանդյանը, այլ այդ դիվանագիտության էության մեջ: Եվ «Էբե ճիշտ է, որ մեծ պետությունները այս կամ այն արևելյան կենթող հարթելու առևն կղեկավարվելին յուրացանցուրը իր ատիտ, ապա մյուս կողմեն ճիշտ է և այն, որ հանդեպ ըմբոս ժողովուրդի մը, որ կապտոնա պարբերաբար ու տնողաբար փոթորկել քաղաքական կացությունը և խուլվել դիվանագիտական հանգստը, հանդեպ այդպիսի ժողովուրդի մը նույն պետությունները ստիպված են իրավախոհել, միջոցներ փնտրել գոնացում տալու անոր «պահանջներում» («Հայրենիք», 1928, թիվ 10, էջ 84, 87): Զարիքը հայկական խելիքը բացառապես դիվանագիտական միջոցներով լուծելու փորձի մեջ էր. «Երկարե՛ շերիկը» անտեսելու մեջ (ոն է նույն տեղը, էջ 10): Տե՛ս նաև Վարանդյան Մ. «Հայկական շարժման նախապատմություն», հ. 2, էջ 151:

⁴² Վարանդյան Մ., Հայկական շարժման նախապատմություն, Ժնև, 1913 հ. 2, էջ 91:

⁴¹ Վարանդյան Մ., «Հայկական շարժման նախապատմություն», Ժնև, 1912, հ. 1, էջ 4-5:

ները՝ օգտագործելով Սահմանադրությունը որպես մոլորեցնող (դիվերսիոն) գործիք, շարժումը պահել նրա շրջանակներում: Նա, այդպիսով, պատրաստեց նպաստավոր հողը ապագա զանգվածային ջարդերի: Նույն կրավորականությունն իր աղետաբեր դերն ունեցավ Մեծ եղեռնի տարիներին:

Հայ տարրը, ընդգծում է Վարանդյանը, «չունեցավ տարրական կանխատեսություն»՝ ըմբռնելու, որ վաղ թե ուշ «անապանան անհրաժեշտության» դրվելու է հայ քաղաքական հարցը ևս, ինչպես թուրքահպատակ մյուս եվրոպական ժողովուրդներինը, որին օսմանյան կառավարությունը պատասխանելու է իր ավանդական մեթոդներով...

Դեռևս 1870-ական թվականների վերջերին «Փունջ»-ը (Կ. Պոլիս) ցույց էր տալիս հայոց «հիմնական ու մահացու վերքը», «մարտական պետքերի լիակատար զանցառումը, ֆիզիկական ինքնապաշտպանության լիակատար անտեսումը»: Արևմտահայությունը արհամարհեց, գրում է Վարանդյանը, չըմբռնեց «պատմափիլիսոփայության անագորույն նշանաբանը»: «Կովով միայն պիտի նվաճես իրավունքը», «Ուժն է միայն, որ կառաջնորդե դեպի իրավունքի իրականացումը»: Ուստի, երբ պատմական իրադարձությունների անկասելի ընթացքը արժարժեց նաև Հայկական հարցը, մասնավորապես Բեռլինի վեհաժողովում (1878թ.), արևմտահայությունը Հայաստանում «մեռյալ տարր» էր (Իգնատև): Նա չունեցավ «երկաթե շերտի»:

Վարանդյանի բնութագրմամբ, հայոց ճակատագրի վարիչները չկուսեցին, որ սոսկ եվրոպական չափանիշներով «հիվանդ մարդը», ամենուրեք քայքայում ու ապականություն արտադրող օսմանյան հրեշը, եվրոպական ժողովուրդների անզիջող մտրակի հարվածների տակ անդառնալիորեն մղվելու է եվրոպայից դեպի Ասիա անցնելով Հայոց լեռնաշխարհով, տարածվելու է դեպի Արևելք, այնտեղ, որտեղից դարեր առաջ սկսել է արշավել: Լիեչդեռ Ջեյմս Բրայսը կանխատեսել էր, որ «Աբդուլ Համիդը հղացել էր հայության բնաջնջումի ծրագիրը Բեռլինի վեհաժողովեն անմիջապես հետոն»՝ և «դժվար

չէր նախատեսել հակահայ արշավանքը...»⁶⁶ (Բրայս):

....Ցավով, զգացմունքներով ու գաղավարախոսական դոգմաներով առաջնորդվող հայությունը, նրա ազատագրության վարիչ մարմինները անտեսելով քաղաքական աշխարհագրության հրամայականները, շարունակում էին ռոմանտիկ հրճվանք ապրել, նույնիսկ իրենց կարողությունների սահմաններում նպաստել բալկանյան ժողովուրդների հակաթուրք պայքարին, դրանով իսկ նպաստելով թուրքերի տեղաշարժին դեպի Արևելք:

Պատեն-անպատեն կրկնվում էր հայոց համար մահաբեր «հիվանդ մարդու» կանխարդյոք՝ սին հույսեր կապելով սահմանադրական ու քարենորոգվող Թուրքիայի հետ⁶⁷:

Բեռլինի վեհաժողովը, ըստ էության, դեպի Արևելք, դեպի Հայաստան թուրքական մեծ ու կտրուկ շրջադարձի (volte-face) սահմանագիծն էր: Այդպես «լարվեց» դանդաղ գործողության մահաբեր ռումբը, այդտեղ է հայոց հետագա բոլոր ջարդերի ու Մեծ եղեռնի

⁶⁶ Բանաստեղծի Գամառ-Քաթիկյան ևս կանխատեսել էր թուրքական շրջադարձը: Նա գրում էր. Մյավոնի ձեռքեն բազիված շղթան Քեզ պիտի կկտայե, խղճն ո՛վ շայտասուն: ⁶⁷ «Հայրենիք», 1928, թիվ 10, էջ 90, 1927, թիվ 1, էջ 91, «Դրօշակ», 1899, թիվ 4, էջ 51-53:

⁶⁸ Ի դեպ, Բուրեքեր (Միքայել Տեր-Միքայելյան) Բալկանյան պատերազմի ընթացքում (1912թ.) գտնում էր, որ զուտ ղիպմանակալական ճանապարհով նահապետի չէ լուծել Հայկական հարցը, և ստեղծվել է նպաստավոր վիճակ Արևմտյան Հայաստանում պատասխանության կազմակերպելու համար: «Դեռք է... օգտվել թուրքերու պարտությունեն և Պարսններուն մեջ ու Պոլսո շուրջ չափազանց գրագլած բլլալեն և առջի հանել թրջանայտատանը» (տե՛ս Դարբինյան Ռ. Կյանքիս գրքեն, Քնդութ, 1972, հատ. Ա, էջ 421): Ռուբենի առաջարկը Պոլսի Ազգային խորհուրդը մերժեց: Եվ իզուր: Թեև իզուր էր ղիպմանակալ ռազմավարական հաշվեկշիռը Թուրքիայի շուրջ: Մակայն պատմությունը «Թե»-ներ չունի:

Այնպիսի, նազմավարական իրադրության ճշգրիտ րեկվանտ տեսանկյունից շշմեցնող է Բալկանյան պատերազմում թուրքերի դեմ կովող Անդրանիկի շոկատի վերաբեր գինորդի կանխազգացումը: Ես, պատմում է տարաբախտ հայորդին, ստույգ էի Ֆիլիպպոլի հուպիտալում շուրջ 10 օր: Մեզ է սցեկում Բուլղարիայի թագուհին, արցաբնում է ամեն ինչի մասին: Ես նրան ստան եմ. «Ձեզ համար արդեն լավ է: Դեռք թուրքերին ջշում էր Ասիա, իսկ նրանցից մեզ համար կրկնակի վաս է լինելու»: Թարսուկին պտուսախանում է: «Սպասող, ձեզ համար էլ լավ է լինելու» (Трошова Л. Перед историческим рубежом. Балканы и балканская война (1913г.), изд. 1926 - Տ.Ն. «Новое время», 22 января 2009թ.): (Հիլրուվի, երկու տարի ինտո հայության համար, իրոք, լավ եղավ):

մեկնակետն ու թուն պատճառը: Եվ հայ հեղափոխության անխուսափելի ծնունդը: Ֆրանսիայի դեսպան Կամբան իրավացիորեն նկատում էր. «Իր անգթությամբ Բարձր դուռը սրբագործեց հայկական շարժումը...»:

Թուրքական այդ շրջադարձն էլ ձեռք իր «դիվային հանճար»-ին՝ Աբրուլ Համիդին: Վերջինս, նկատում է Վարանդյանը, խնդաց «պատմության գահավիժող հորձանքի մեջ» անհատի դերը ժխտող «ճախլիկ ու անկայուն թեորիայի վրա», «ինչպես որ նա խնդաց հարյուր հազար հայկական դիակների վրա»:⁴⁷ Ընդամին, Համիդի հավատամքն էր. «Թուրքիան մեկ պայմանով միայն կարող է ապրել, այն՝ որ բոլոր բոլոր սովանցիները կանգնած մնան հավատարմությամբ «...» սուրբ օրենքի հինավուրց ու ամուր պատվանդանի վրա. այլապես «...» պիտի հոշոտվենք քրիստոնյա պետությունների ձեռքով, որոնք բոլորն էլ ձգտում են կործանել մեզ»⁴⁸: Եվ հրապարակ նետվեց Հայաստանի անէացման քաղաքականությունը: (Այն իր գազաթեանկետին հասավ երիտթուրքերի և Քեմալի կառավարման տարիներին):

Օսմանյան քաղաքական միտքը, նրա քաղաքական դեկավարությունը՝ Համիդը, երիտասարդ թուրքերը և նրանց հաջորդները, գտնում են և իրագործում համապատասխան քաղաքականություն: Հաշտեցնում և համադրում են երկու ներիակ ուղղություն՝ մի ձեռքով «տալիս են» բարենորոգումներ (Պոլսում և կայսրության այլ կենտրոններում) հայերին, սիրիացիներին, արաբներին, մյուս ձեռքով (հատկապես գավառներում, *թուն Հայրենիքում*) հետ առնում այն, ամայացնում երկիրը:

1877-1878 թվականներից սկսած կայսրության ողջ տարածքում սկսվում է մինչ այդ նախադեպը չունեցող «արյան ու ավերածի աշխարհաստան քաղաքականություն»:

Գործի է դրվում նաև *քրդական* մահակը: Թուրք կառավա-

րության կողմից վարպետորեն օգտագործվում են հայ-քրդական հակասությունները, նույնպիսի (քուլփոր) ցեղի տնտեսական շահագրգռություններն ու նախաքաղաքակրթական բնագրերը: Համիդը օգտվում էր այն նկատառումից, որ հայոց հարցը «իր իրավական ծագման մեջ» հայ-քրդական հարաբերությունների հարց էր, որը գոյություն է ունեցել դարերից ի վեր, իրապես (de-facto), թեկուզև իրավապես (de-jure) հրապարակ է հանվել 19-րդ դարի 70-ական թվականներին միայն⁴⁹: Չէ՞ որ մինչ այդ ոչ մի այլ տարր պատմական Հայաստանի սահմաններում այն աստիճան չի վնասել հայության ֆիզիկական ու մշակութային գոյությանը, ինչպես քուրդը:

Արևմտյան Հայաստանի վիճակը էլ ավելի էր ծանրանում Ռուսաստանի գաղութարարական ռազմավարության հետևանքով, որը Վարանդյանի բնութագրմամբ «գուտ քաղաքական-նվաճողական բնույթ ուներ»⁵⁰:

«Մի կողմից Ռուսաստանի միջամտության մշտնջենավոր երկյուղը, մյուս կողմից պանթուրանական ծրագիրը (կովկասյան մահմեդականների հետ շաղկապվելու երազը), դրոշել են օսմանյան վարիչներին՝ գործադրելու Թուրքահայաստանում ավելի խոշոր ծավալով այն ավանդական թուրքական մեթոդը, որ գործադրված էր ժամանակին Հունաստանում և Բալկանյան այլ երկրներում»⁵¹, գրում է Մ.Վարանդյանը:

Ռուսաստանի միջամտության այս վտանգը առիթ էր տալիս թուրքերին «պարպել Հայաստանը հայերից» և, միաժամանակ, շահարկելով եվրոպական պետությունների, ազդեցիկ քաղաքական ուժերի և նույնիսկ ժամանակաշրջանի ամենաարմատական քաղաքական հոսանքների՝ հանրապետականների ու կոմունիստների՝ Լիբլենիստ, Հայնդման, Լոնգե և այլն, «անհաշտ և թունավոր ատելությունը» հանդեպ ցարիզմը, նրանց մեջ սերմանել, ամրապնդել Թուրքիայի ամբողջականության «դրոզմը», «զոհաբերել նրան

⁴⁷ Վարանդյան Մ., «Հայկական շարժման նախապատմություն», հ. 2, էջ 239:

⁴⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 246:

⁴⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 96:

⁵⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 204:

⁵¹ «Հայրենիք», 1926, թիվ 4, էջ 85:

մորթտովող ու մարտնչող թուրքահպատակ ժողովուրդներին»:

Եվ ի վերջո, հաղթում էր «Մեծ Բրիտանիո հղացած զոգմը».
«Օսմանյան կայսրության ամբողջությունը անհրաժեշտ է միջազգային
խաղաղության համար, պետք է ամեն գնով պահպանել այն՝ Ռուսիո
հարձակողական ընթացքի հանդեպ»:

Ռուսաստանն իր հերթին դեպի Առաջավոր Ասիա ծավալման իր
քաղաքականության մեջ, Պետրոս Մեծից սկսած, Թուրքիայի պարա-
գայում հենվում էր գլխավորապես սլավոնների ու հույների, իսկ
Պարսկաստանի դեպքում՝ հայերի վրա: «Երկու ճամբաներով էլ-
գրում է Մ. Վարանդյանը,– հյուսիսային «Կոլոսը» դիմում էր իր
գոլոգոլրած նպատակետին: Մի կողմից՝ դեպի Ստամբուլ, մյուս
կողմից՝ դեպի Թեհրան, որի գրավումով ռուսական դրոշը մտտեծում
էր Հնդկաստանի սահմաններին...»⁵²: Ընդամեն, այս քաղաքականու-
թյան շրջանակներում՝ Կովկասյան ուղղության *փոխհարուցող* նշանա-
կության շեշտադրումով: [Այսպես, ռուսական բանակի հոչակավոր
զորավար Մ.Լորիս-Մելիքովի կենսագիրները անդրադառնալով նրա
դերակատարությանը 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմում,
ի միջիայլոց նկատում են. «Ռազմական գործողությունների կովկաս-
յան թատերաբեմը պետք է, որ հակառակորդի ուժերը հեռացնելը
Բալկաններին»⁵³]:

Ուրեմն, պատահական չէ, որ Ռուսաստանն իր արևելյան քաղա-
քականության մեջ առաջնորդվեց Հայոց հարցի լուծման «*հավիրե-
նական ձգձգումների ու վսիճանական վիժումի*» (ընդգծումն իմն է.
Լ.Շ.) անխախտ ռազմավարությամբ: Այն թխում էր ռուսական գաղութարարության
էությունից: Ռուսաստանի համար, ընդգծում է Վարանդյանը, «հետաքրքրականը
ապագա *գրավումի ու կցումի*
ծրագիրն էր...»⁵⁴:

Հայությանը Ռուսաստանը տեղ էր տալիս այնքանով, որքանով

նա անհրաժեշտ էր կայսրության զարգացմանը, տնտեսական,
առևտրական ու մշակութային բարգավաճմանը, ինչպես նաև նվաճ-
ողական իր քաղաքականության իրականացման նպատակներին:

Սակայն, նույնիսկ այս պարագայում Վարանդյանին չի դավաճա-
նում իրատեսությունը: Նա հավանություն չի տալիս Նեքսես Վարժա-
պետյանի հակառուս, թեկուզև առարկայական հիմքերով թեյադրված
տրամադրություններին, իսկ ողջակի վերապահումներով՝ քննադա-
տատում է նրա կողմից շրջանառության մեջ դրված 1878թ. շրջաբե-
րականը: Թեկուզև, որպես հետևանք Ռուսաստանի քաղաքականու-
թյան, այդ տրամադրությունը որոշակի հող ուներ նաև «թուրքահայ
ղեկավարող տարրելու աչքերին», քանզի նրանց աչքում «այդ
քրիստոնյա աշխարհակալող ուժը, ճիշտ է, կխնայե հայ ազգին
«մարմինը», կպահպանե անոր ֆիզիքական գոյությունը, բայց
կպապանե... «հոգին»⁵⁵:

Ուշագրավ է ռուսական աշխարհակալության «համապատասխան
տակտիկի» վարանդյանական ընկալումը. այն, որ «ռուսական
վտանգը» մի կետում վայրկենաբար «չքանալով», լույս էր ընկնում մի
այլ կետում, «ավելի ուժեղ ու սպառնական»: Մեկնելով իր աշխարհա-
կալական նկրտումներից, որի հիմքում ընկած էր «տիրապետության
տենչը», Ռուսաստանը «նախ իր «հովանավորության» տակ է առնում
որևէ երկիր, ապա հարուցանում է նրա մեջ երկպառակտումներ,
վերջապես, միացնում է իր թագավորության, որպեսզի «վախճան
դրվի» այն խտովություններին ու անկարգություններին, որ նա «ինքն է
ստեղծել կամ հանդուրժել»⁵⁶:

Եվ եթե Օսմանյան կայսրության հանդեպ «խորքին մեջ» նույնն է
եղել Ռուսաստանի (և ոչ միայն նրա) ռազմավարությունը՝ անընդհատ
«համեղ պատառներ» պոկել նրա նեխող ու անդամահատվող
մարմնից, տարբեր է եղել իրագործման եղանակը՝ կախված
պատմական տարրեր վիճակներից և միջազգային ուժերի դասավո-

⁵² Տ՛ես նույն տեղը, էջ 188:

⁵³ Итенберг Б.С., Твардовская М.Т., Граф М.Т., Лорис-Меликов и его современники. М. 2004. էջ 31:

⁵⁴ «Հայրենիք», 1928, թիվ 9, էջ 87:

⁵⁵ Նույն տեղում:

⁵⁶ Վարանդյան Մ., Հայկական շարժման նախապատմություն. հ. 2, էջ 208-209, 194-195:

րությունից, մասնավորապես Անգլիայի հետ ունեցած մրցակցության ներուժից: Այդ առումով Ալեքսանդր Երկրորդի սպանությունից և վարչապետությունից Լորիս-Մելիքովի հեռացումից հետո, երբ հայոց առաջադիմության համար ստեղծվել էին համեմատաբար բարենպաստ ներքին պայմաններ և Հայաստանի զգալի տարածքներ միացվել էին կայսրությանը, երբ նպաստավորվում էր հայկական առաջադիմությունը, և երբ Ռուսաստանի իրական շահն էլ պահանջում էր «բարձրացնել ռուսական դրոշին փարած մի ազգ...», այս անգամ էլ Ռուսաստանն է ապրում ներքին քաղաքական հետադիմություն, արտաքին քաղաքական (հերթական) կտրուկ մի շրջադարձ (volte-face):

Եվ Անգլիայի «մտրակի» հարվածների տակ հեռանալով Մերձավոր Արևելքից՝ Ռուսաստանն այժմ ինքն է որդեգրում Օսմանյան կայսրության «ամբողջության դոգմը»: ճիշտ է, ժամանակավորապես: Այս շրջանում էր, որ հանդես եկավ մի նոր գիշատիչ՝ Կայզերական Գերմանիան, որը աստիճանաբար ամրապնդեց իր դիրքերը Բոսֆորի ափերին, «չեզոքացրեց բոլոր մրցակից ուժերը» և որոշեց «փրկել կայսրության ամբողջությունը»⁵⁷:

Սակայն գալիքում իր վերադարձն ապահովելու և Թուրքիայից նոր պատռուներ, թեկուզև հենց Թուրքահայաստանը, պոկելու ակնկալիքով Ռուսաստանին «ձեռնտու էր,- նշում է Վարանդյանը,- պահպանել թուրքահայ գավառներում մշտնջենավոր քառս, մի հարատև անիշխանական վիճակ, որ կարող էր առիթ լինել շահավետ միջամտությունների»⁵⁸: Ռուս դիվանագիտությունը դարձավ Համիդի «ջերմ բարեկամը», իսկ Հայաստանը և Հայկական հարցը շուտով զգացին լորանովականության մահաբեր շունչը:

Ու դա մի ժողովրդի հանդեպ, որը Առաջավոր Ասիայում եղել է միշտ, գրեթե երկու դար, մի տեսակ առաջապահ ռուսական առևտրի, մշակույթի, քաղաքական ազդեցության...:

⁵⁷ Տ՛ես նույն տեղը, էջ 217, 223:

⁵⁸ Տ՛ես նույն տեղը, էջ 222:

Վարանդյանն «ունայն աղբրսանք» էր համարում օսմանյան դժոխքից դեպի Ռուսաստան ուղղված հայոց օգնության հորդորները, քանզի միայն «նա ինքը գիտե իր գալու ժամանակը», քանզի նա «երբեք չի ազարել մի ժողովուրդ նրա սիրուն աչքերի համար» (ընդգծումներն իմն են.- Լ. Շ.):

Եվ հայոց համար Ռուսաստանի աղետավոր այս volte-face-ը այն շրջանում, երբ Արևմտյան Հայաստանում մոլեգնում էր Համիդի յաթաղանը, երբ 1895-ին հայկական բարենորոգումների հարցը առաջին անգամ դրված էր անգլո-ֆրանս-ռուսական դիվանագիտության սեղանին: Երբ, Անգլիան, որը Բեռլինի Վեհաժողովում, Դիզրայելի (լորդ Բիկոնսֆիլդ) վարչապետության օրով աղետալի դեր էր խաղացել Հայկական Հարցում և թուրքերի օրինակով «թորահպատակ հայկական նահանգները սկսել էր անվանել «Քրոչտան», թերևս գերմանական «Drank nach Osten»-ի հարաճուն ճշման տակ, թեքվել էր Հայկական Հարցի լուծման ուղին և կամենում էր 1895-1896 թվականներին, իրականացնելով Արևմտահայաստանում բարենորոգումներ՝ ստեղծել «Անատոլիայի մեջ հայկական Լիբանան»: Այս անգամ էլ Ռուսաստանն էր, որ դրեց «իր վճռական վետոն, քաշելով իր ետևից դաշնակից Ֆրանսիան»:

Այնուհետև 1915-ին, երբ դրված էր արևմտահայության լինել-չլինելու հարցը, հայ կամավորական զորամիավորումների խրախուսելու փոխարեն, նա «իր ստեղծվածային նահանգներով» հնարավորություն տվեց թուրքերին «դատարկելու Հայաստանը»⁵⁹***: Եվ վերջապես, Հայաստանի Առաջին Հանրապետության շրջանում, երբ հայ ժողովուրդը գերմարդկային ճիզերով և անհամար զոհողություններով փորձում էր ստեղծել Միացյալ Հայաստանը, արդեն գործակցելով քաղաքակրթության ոխերին թշնամու հետ, ռուսական

***Հիշատակելով Ռուսաստանի այս կարճատև քաղաքականությունը, Ե. Վ. Տառլեն գրում է - 1915-1917 թվականներին հայերի չնչնացումը սպառնալիցորեն վերաբերում էր ոչ այնքան Անգլիային, որքան Ռուսաստանին, որը ապագայում Թուրքիայի հյուսիսում կորցնում է մի որոշ հենակետ (ընդգծումը իմն է.- Լ.Շ.) (Тарпе Е. В., Политика: История территориальных захватов, XV-XX века: Сочинения, М. 2001, с. 646):

բուլղնիզմը խորտակեց «Հայ նորածին անկախությունը»:

Ենթադրելի է, որ պատմության ընթացքը այլ կլիներ, և Ռուսաստանի ճակատագիրն ու հայոց արյունոտ իրականությունը այլ ուղղություն կստանային, եթե «Ռուսաստանի գլուխ կանգներ Սահմանադիր ժողովից ընտրվելիք օրինավոր սոցիալիստ ու դեմոկրատ կառավարությունը»: Երբ Արևմտահայաստանը, թեև ավերված ու կիսաշղատարկ, մինչև Երզնկա գրավված էր ռուս զորքի և հայ կամավորական զնդերի կողմից, Կերենսկու ժամանակավոր կառավարության կողմից «հռչակված էր ինքնավար» և գտնվում էր հայ փոսկառավարչապետ Հ. Համիրիի հսկողության տակ, իսկ Կովկասյան Հայաստանը դեռ «լեցուն էր հայերով»^{60***}: Սակայն այլ ընթացք ստացավ իրադարձությունների հետագա զարգացումը:

Հարվածի հիմնական ուղղությունը դիտելով քրիստոնեական արևմտյան քաղաքակրթության դեմ պայքարը, ուստի և «սոցիալիստական հեղափոխության ռեզերվն ու հենակետը Արևելքում, մահմեդական աշխարհում» փնտրող բուլղնիզմը սկսեց համագործակցել դարավոր ախոյանի՝ թուրքաց աշխարհի հետ: Եվ լույս աշխարհ բերեց լեյնյան «Ռուսաստանի և Արևելքի բոլոր աշխատավոր մահմեդականներին» (20.11.1917թ.) ուղղված ռազմավարական փաստաթուղթը, որտեղ ասվում էր. «Մենք հայտարարում ենք, որ Թուրքիայի բաժանման և նրանից Հայաստանը խլելու մասին եղած դաշնագիրը պատուված է ու ոչնչացված»: (Սիա այսպես, կարճ ու հստակ):

Ուստիև «մեծ ռազմավարության» համատեքստում ՌԽՖՍՀ ժողովմոտորի «Թուրքահայաստանի մասին» (29.12.1917 թ.) հրամանագրի խոստումները ամբողջական հարցը միակողմանի ու անանցյալ շտրիխով սահմանափակելու, բացառապես հայոց, հատկապես նրա քաղաքականապես տհաս և քաղքենի հատվածի համար նախատեսված մտացածին պատրանքները շահարկելու փորձ են, թերևս ցերեասապանության ենթարկված մի ժողովրդի մեջ անհիմն մի

տեսակետ սնուցելու նկատառում: Իսկ մեր օրերում անուվազն զավեշտական է: Հետևապես, աննշան վերապահումներով, բուլղնիկյան հռչակավոր հռչակագիրը «Թուրքահայաստանի մասին» դիվանագիտական խարդավանք է, Թուրքիային Ռուսաստանի հետ գործարքների մղելու և երկրաքաղաքական իրադրության արմատական փոփոխության նենգ ու հզոր միջոց, ինչը իրականացվեց աստիճանաբար և վարպետորեն:

Իրավացի է Կարանդյանը: Այո, «Քրեստ-Լիտովսկի օրերից ի վեր բուլղնիկյան Կոմիստերնը *սխտբնաբար զոհաբերել է Հայկական Դատը*, նա ձգտել է դեպի Արևելք, ոտքի հանելու մահմեդական աշխարհը բրիտանական կապիտալիզմի դեմ և քայլել է իր ճամբուն ընկած հայ ժողովրդի խոշտանգված մարմնի վրայից, քայլել է պաղ անտարբերությամբ, անզթորեն կոխկրտելով»⁶¹:

Եվ եթե Քրեստ-Լիտովսկեք եղավ բուլղնիկյան volte-face-ի մեկնակետը, ապա Կարմիր բանակի ջախջախիչ պարտությունը Եվրոպայի դարպասների առաջ, Վարշավայի պատերի տակ 1920-ի աշնանը նրա վերջին արարը: Կերջնականապես խորտակվեց կարմիր ճնորքը՝ «վառել Եվրոպան», շրջապագերծել «համաշխարհային հեղափոխությունը»:

Մահմեդական Արևելքի հետ ռազմավարական դաշինքն այսուհետև, շուրջ յոթ տասնամյակ, մինչև Խ.Միության լուծարում, դարձավ Կարմիր Ռուսաստանի արտաքին քաղաքականության անկյունաքարը: «Թուրքիան Արևելքի մեջ,- գրում է Բոլոյանը,- անհրաժեշտ էր Ռուսաստանին՝ ընդդեմ Արևմտյան աշխարհակալության»⁶²:

...Նույն թվականի սեպտեմբերին, զուգահեռաբար, Բաքվում գումարվեց Արևելքի ժողովուրդների (առաջին և վերջին) համագումարը, էսվերի և, դժբախտաբար, ծագումով հայ 152 բուլղնիկների մասնակցությամբ, որտեղ Հայաստանի Հանրապետությունը հռչակվեց հետադեմ և համաշխարհային աշխարհակալության գործակալ: Այսուհետև «ի՛նչ Մոլթե և ի՛նչ Թալեյրան կարող էր

***Այդ մասին տե՛ս Մատենի Կ., Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ, 1914-1918թթ., Բուստե, 1927:

⁶⁰ Տե՛ս «Հայրենիք», 1926, թիվ 3, էջ 106:

⁶¹ Бордан Б., Армения, международная дипломатия и СССР, М., 1929, ч. II, с. 285:

փրկել մեր երկիրը երկզյանի վամպիրի ճիրաններից,– բացականչում է Վարանդյանը՝ դիմելով Լեոյին և ընկ.,– ռուս-թուրքական դաշնակցության փորձ անդունդից... Իսկ նա փորված էր դեռ Տրապիզոնի համաձայնությամբ»⁶³:

Եվ այսպես, եթե հայ ժողովուրդը եղավ «ամենամեծ զոհն» անգլոտա «անիծակոտ հակամարտության», եթե «հայ հեղափոխական շարժումը գալարվեց նրա պողպատյա օղակների մեջ և դեռ նոր փթթված՝ ուժասպառվեց»⁶⁴, ապա «տկար, դողախար Օսմանյան կայսրությունը կարողացավ դարձրել երկարել իր *հոգեվարը*, հակառակ եվրոպական ամենեն մեծ ու հզոր պետությանց ընչաքաղցության, ահավոր թշնամությանց, կրկնակի հարձակումներին և հաղթանակներին:

Ինչու՞: Տկարներին պահպանող այդ ուժը մի փոքր տարագ էր՝ ուժերի հավասարակշռություն»⁶⁵:

Հ.Գ. – Այդուհանդերձ, անհրաժեշտ է ընդունել, որ ժամանակի հայ գիտաքաղաքական միտքն ու հայոց ազգային ընտրանին, ինչպես ցույց է տալիս Հայաստանի ազատագրության դժվարին ու ողբերգական ընթացքը «ուժի հավասարակշռության եվրոպական համակարգի» մութ ծայքերում, մինչև Լեծ եղեռն չկարողացավ գնահատել Օսմանյան կայսրության իրական տեղն ու արժեքը ժամանակի ռազմավարական աշխարհի կարուցվածքի մեջ և նրա համար:

Տուրք տալով մշակութային-քաղաքակրթական չափորոշիչներին և գաղափարախոսական դոգմաներին, նա չըմբռնեց, որ «Համանվագի» տեսանկյունից Օսմանյան կայսրությունը «եվրոպական խոշոր տերություն» էր, որ «անձեռնմխելիություն այն բանի, ինչը մնում է Օսմանյան կայսրությունից, դա սկզբունքներից մեկն է, որոնց վրա հիմնվում է ուժերի հավասարակշռությունն ու խաղաղությունն եվրոպայում... (Իտալիայի վարչապետ Ջիովիտտի, 1911 թ. ապրիլ)»⁶⁶:

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵԼԵԿԷԶՆԵՐԸ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1912-1918, ՄԱՐՏԻ 3)

Նախապատմություն

Իթթիհատ-Դաշնակցության հարաբերությունների խզումից հետո (1912թ., մայիսի 5) Հայկական հարցը նոր, թվում է հուսադրող, սակայն և շատ վտանգավոր փուլ թևակոխեց: Գեոստրատեգիական զարգացումների հարկադրանքով, նույն ժամանակաշրջանում, հայկական հարցում ակնհայտ ակտիվություն սկսեց դրսևորել Ռուսական կայսրությունը: Համաշխարհային պատմության մեջ նոր շրջափուլ է ձևավորվում. միջկայսրական հակասությունները աննախընթաց արագությամբ սրվում էին: Միջազգային քաղաքականության օրակարգ էր վերադառնում, հերթական անգամ, Օսմանյան կայսրության անդամահատման հարցը: Դրա իրականացման համար գործիքակազմ էր պահանջվում:

«Եվրոպական համանվագի» ճիրաններում գալարվող հայկական հարցը, հիմքում ունենալով Բեռլինի դաշնագրի (1878թ. հուլիսի 13) 61-րդ հոդվածը թեքվում էր ռուսական կողմնորոշման «հուսառու մայրուղի»:

1912 թ. հոկտեմբերի 2-ին Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի միջոցով, ռուս դիվանագիտության խրախուսանքով Հայոց Գևորգ Ե կաթողիկոսը դիմեց Ցարական կառավարությանը, խնդրելով միջամտել ու աջակցել Արևմտյան Հայաստանի բարենորոգումների հիմնախնդրի վերստին արժարժմանը: Զուգահեռաբար Գևորգ Ե կաթողիկոսի կոնդակով Պողոս Նուբարին լիազորվեց պաշտպանելու Հայկական հարցը եվրոպական մեծ տերությունների դիմաց: Ռուսական կառավարությունը Հայկական բարենորոգումների նախագիծը տերությունների քննարկմանը ներկայացրեց 1913-ի հուլիսի

⁶³ «Հայրենիք», 1926, թիվ 3, էջ 104:

⁶⁴ Վարանդյան Ս., Հայկական շարժման նախապատմություն, հ. 2, էջ 190:

⁶⁵ Հուսեյն Ջախիչ (Յալչլին) (թուրք լրագրող) - Տե՛ս՝ Նավասարդյան Վ., Ներդրվելը (Վուսիոր և Դարդանեյ): Թրքական ցուրտիները և Հայ Դատը, Կահիրե, 1947, էջ 251-252:

⁶⁶ Джон Д., Истоки Первой мировой войны, Пер.с англ., Ростов на Дону, 1998, с. 324.

3-24-ը Կ.Պոլսի դեսանսժողովում: Նախագիծը կազմել էր Կ.Պոլսի ռուսական դեսպանության առաջին թարգման, Հայկական հարցի քաջ գիտակ, Անդրեյ Մանդելշտամը՝ 1895-ի մայիսյան ծրագրի և Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի կազմած նախագծի հիման վրա⁶⁷:

Համաձայն այդ նախագծի՝ պետք է ստեղծվեր միասնական Հայկական նահանգ Արևմտյան Հայաստանում, մեծ տերությունների համաձայնությամբ նշանակվեր Ընդհանուր նահանգապետ, կիրառվեր հավասարության սկզբունք նահանգական ժողովում և պաշտոնների քաջիման ժամանակ և այլն: Անգլիան և Ֆրանսիան հիմնականում համաձայնեցին ռուսական ծրագրի հետ, սակայն Եռյակ միության պետությունները, հատկապես՝ Գերմանիան, վճռակաճորեի հակադրվեցին ռուսական նախագծին: Սրանք առաջարկում էին բարենորոգումների հիմք ընդունել թուրքական ծրագիրը, որը պահպանում էր նահանգների կազմակերպման նախկին ձևը և, ըստ էության, խուսափում օտարերկրյա (Ռուսական) հսկողությունից: Ի վերջո, ճիշտ է, գերմանական խմբավորման ճնշման տակ Ռուսաստանը նահանջեց, սակայն, այդուհանդերձ, կարողացավ Թուրքիային պարտադրել համաձայնագիր 1914թ. հունվարի 26 (փետրվարի 8)-ին, որը ստորագրեցին Կ.Պոլսում Ցարի հավատարմատար Կ. Գուկկիչը և Թուրքիայի արտգործնախարար Սայիդ Հալիմ փաշան: Այստեղ արձանագրվեց նահանջ բարենորոգումների նախագծից: Նոր պայմանագրով Արևմտյան Հայաստանը, նրա յոթ նահանգները բաժանվում էր երկու հատվածի և նրանց կառավարումը հանձնվում էր օտարերկրյա Ընդհանուր տեսուչների՝ նշանակված մեծ տերությունների համաձայնությամբ: Այսպիսով, ռուս-թուրքական 1914թ. հունվարի 26 (փետրվարի 8-ի) պայմանագրով Արևմտյան Հայաստանի բարենորոգումների հարցը կոնկրետ մարմնացում էր գտնում միջպետական պայմանագրում՝ ամրագրելով Ռուսաստանի գերակայությունը Հայկական հարցում [վերադարձ 1878թ. փետրվարի 18 (մարտի 3) Սան

Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածի տրամադրություններին]:

Վերահաս Աշխարհամարտը խափանեց Բարենորոգումների ծրագիրը: Թուրքիան չեղարկեց ռուս-թուրքական պայմանագիրը, ընդհանուր տեսուչները չկարողացան անցնել իրենց պարտականությունների կատարմանը հայկական նահանգներում: Ռուսական դիվանագիտությունը, տանելով լիակատար հաղթանակ Հայկական հարցում, ոչնչով չկարողացավ և գործնականում ոչինչ չարեց վերահաս աղետը կանխելու համար:

Այդուհանդերձ, Անտանտի գլխավոր երկրները՝ Անգլիայի և Ֆրանսիայի հետ համատեղ Ռուսաստանի նախաձեռնությամբ ընդունում է 1915 թվականի մայիսի 24-ի հայտնի Հռչակագիրը, որով թուրքական եղեռնագործության ամենաթեժ օրերին՝

ա) ամրագրվում էր հայ ժողովրդի անօտարեյի իրավունքը իր Հայրենիքի հանդեպ,

բ) պատմության մեջ աննախադեպ եղեռնագործությունը դիտվում էր «մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված Թուրքիայի հանցագործություն», որը հետագայում իրենով պետք է կանխորոշեր ցեղասպանության ակտը միջազգային իրավունքի շրջանակներում: [Ի դեպ, Անտանտի գլխավոր տերությունների համատեղ հայտարարությունը հրապարակվել է միաժամանակ նրանց մայրաքաղաքներ Սանկտ պետերբուրգում, Լոնդոնում և Փարիզում, 1915 թվականի մայիսի 24-ին]:

«Գրեթե մեկ ամսից ի վեր Հայաստանի քուրդ և թուրք բնակչությունը,- ասվում է Հռչակագրում,- հայերին կոտորելու հարցում գործում է օսմանյան իշխանությունների թողովությամբ և հաճախ անջակցությամբ: Այդպիսի կոտորածներ տեղի են ունեցել և Տ. Ապրիլի կեսերին [այնուհետև, Արևմտյան Հայաստանի բնակավայրերի թվարկումը.- Լ.Շ.] և համայն Կիլիկիայում: Միաժամանակ Կոստանդնուպոլսում օսմանյան կառավարությունը դաժանորեն է վարվում անպաշտպան հայ բնակչության հետ:

Մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված Թուրքիայի

⁶⁷ Տե՛ս Сборник дипломатических документов. Реформы в Армении, 26 ноября, 1912 года, 10 мая, 1914 года. Пр. 1915.

այս նոր հանցագործություններին ի տես՝ դաշնակիցների կառավարությունները հրապարակախորհն տեղյակ են պահում Բարձր Դռանը, որ իրենց նշված հանցագործությունների համար *անհարպպես պատասխանարու կճանաչեն ստանյան կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև նրա այն գործակալներին* (ընդգծումներն իմն են.- Լ.Շ.), որոնք ներգրավված կլինեն համանման կոտորածներում»:

Եզական (ունիկալ) է խորհրդային պետության առաջին ծրագրային հրովարտակներից «Թուրքահայաստանի» մասին դեկրետը, որով, ստյով Արևմտյան Հայաստանի հարցի քաղաքական և իրավական գնահատականը, դեկրետը հռչակեց Արևմտյան Հայաստանի ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքը, ընդհուպ սեփական ակախ պետության ստեղծումը՝ դրանով իսկ հաստատելով (արևմտա) հայության հայրենաստիությունը բացարձակ իրավաստիությունը իր բնօրրանի՝ Արևմտյան Հայաստանի հանդեպ:

Սույն դեկրետը օրգանական շարունակություն էր ու զարգացումը 1914թ. հունվարի 26-ի ակտի և Անտանտի տերությունների համատեղ (1915թ. մայիսի 24-ի) Հռչակագրի, քանզի Թուրքիան ցեղասպանության ոճիրով իրեն դուրս դրեց բարոյականության և իրավունքի քաղաքակիրթ ընկալումների բանական շրջանակներից (տրամբից):

Ցեղասպանության ակտով Թուրքիան ժխտեց գերիշխանության (սուվերենիտետ) բարոյական, քաղաքական և իրավական բոլոր հիմքերը արևմտահայության Հայրենիքի հանդեպ, հաստատեց արևմտահայության հայրենաստիությունը, ինչից էլ հանդես էր գալիս խորհրդային Ռուսաստանի կառավարությունը:

Բուշնիկները դեկրետի մշակմանը «կպել» էին հիմնավորապես: Խորհրդային Ռուսաստանի ժողովմտորիի ստեղծած պետական հանձնաժողովը կազմել էր մի մանրակրկիտ զեկուցագիր, որը ոչ միայն դեկրետի էթնոպատմական պատվանդանն էր աներոր դարձնում, այլև անքննելի փաստարկներով էր օժտում հայոց հայրենաստիության իրավունքը և շարունակում պահպանել իր հրատապությունը՝

նը՝ անժամկետ: Ձեկուցագիրն առում է. «հայերը, որոնք իրենց հայրենի երկրում Հայաստանում, դեռևս XVII հարյուրամյակում կազմում էին բնակչության 98%-ը մահմեդական բնակչության 2%-ի առկայությամբ, 1914 թվականին արդեն կազմում էին Հայաստանի բնակչության 42%-ը: Մնացած 58%-ը հույներ էին, քրդեր, եզդիներ, ղզլբաշներ և թուրքեր, ընդամեն բոլոր մահմեդականները միասին կազմում էին Հայաստանի բնակչության ընդամենը 38%-ը: Սակայն, այնուամենայնիվ, պատերազմը սկսվելուց առաջ հայերը կազմում էին աննաբազմաքանակ ազգային խումբը Հայաստանում»⁶⁸:

Ընդամեն, Ռուսաստանի Խորհրդային կառավարությունը ճանաչում էր հայ ժողովրդի պատմական իրավունքը իր հայրենիքի հանդեպ, հռչակում էր արտամղված հայության Հայրենիք վերադառնալու անքննելի իրավունքը, «Թուրքահայաստանի» անկախության իրավունքը պատմական առանձնահատուկ պայմաններում. ա) Թուրքիան ցեղասպանության հետևանքով չուներ այլևս Հայաստանի հանդեպ, ինչպես ասվել է, գերիշխանության որևէ հիմք, բ) Արևմտյան Հայաստանը դուրս էր դեկրետի հռչակման պահին Թուրքիայի իրավաստությունից, թուրքական որևէ վերահսկողությունից:

«Պարմական Հայաստանի պարածքը»- գրում է ակադեմիկոս Հր. Սիմոնյանը, որը գրավված էր ռուսական գորքերի [և հայ կամավորական զեղերի.-Լ.Շ.] կողմից պարտերազմի ընթացքում, վերադարձվել էր հայ ժողովրդին: Հենց դրա մեջ է «Թուրքաց» Հայաստանի մասին դեկրետի պարմական նշանակությունը (ստորագծում իմն է.- Լ.Շ.)⁶⁹: Ժողովմտորից դեկրետը հրապարակեց նրա ընդունումից երկու օր անց, 1917 թվականի դեկտեմբերի 31-ին, իսկ Խորհրդային Ռուսաստանի պետական իշխանության ներկայացուցչական մարմինը՝ Խորհուրդների III Համառուսաստանյան համագումարը

⁶⁸ Терян В., Докладная записка о Турецкой Армении.- Страницы «Լ. Երկրի ժողովածու», հ.4, էր., 1925, էջ 318.

⁶⁹ Симонян Р.Г., Армянский вопрос и ленинский декрет «О Турецкой Армении».- Национальный вопрос и новое мышление. Ред.кол.: Абрамян Л.А. и др., Ер., 1989, էջ 278.

1918 թվականի հունվարի 15(28)-ին հաստատեց ՌԽՍՀ ժողովմսր-
հի դեկրետը Արևմտյան Հայաստանի մասին՝ բարձրագույն օրենքի
ուժով անշրջելի դարձնելով Ռուսաստանի տեսակետը Արևմտյան
Հայաստանի ավտոխտոն (քնիկ, անդրենաձին) ժողովրդի իրավա-
տիրության վերաբերյալ: Դեկրետն օժտվեց լեգիտիմության բացար-
ձակ աստիճանով:

Իրավաբաղաբական իմաստով Ռուսաստանը ուղղակի անցում
էր կատարում Արևմտյան Հայաստանի բարենորոգումների անհրա-
ժեշտության գիտակցումից (1914թ.) դեպի լիակատար անկախություն
ճանաչում (1917թ.): Միջազգային իրավունքի շրջանակներում կա-
տարված ակտը անխոցելի է և անժամկետ:

Եվ անկախ այն բանից, թե ով է ստորագրել «Թուրքահայաստա-
նի» մասին դեկրետը, 1912թ. Սեպտեմբերից իտալա-թուրքական պա-
տերազմի ընթացքում, ըստ էության, թրքասեր տեսակետ⁷⁰ որդեգ-
րած համաշխարհային հեղափոխության մոլազար առաջնորդ, բյու-
զանդական քաղաքակրթության և ռուսաստանյան պետականության
գերեզմանափոր Վոլոդյա Ուլյանով-Լենինը, թե վրացի նացիոնալ-
բոլշևիկ Թիֆլիսի հանրահայտ հայատյաց կինտո Սոսո Ջուղաշվիլի-
Ստայինը, դեկրետն ունի ՕՐԵԽ-ԲԻ անսպառ լիցք ինչպես անցյալ,
այնպես էլ ապագայի համար:

Որպես իրավաբաղաբական վավերագիր այն կատարյալ է:

«Թուրքահայաստանի» մասին դեկրետում արտացոլված դրա-
կան առկայծումները, որոնց մասին խոսեցինք, հողս ցնդեցին այն
պահից, երբ խորհրդային Ռուսաստանը երկրաբաղաբական (գեո-
պոլիտիկ) արմատական շրջադարձ կատարեց դեպի Քառակազմ
դաշինք՝ Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Բուլղարիա, Թուրքիա և
աճուրդի հիմնական առարկա դիտեց, ինչպես հետագայում պարզ-
վեց, Հայաստանի և հայ ժողովրդի կենսական շահերը: Այս միտումը
առաջիկայում դարձավ Ռուսաստանի (արդեն նոր) քաղաքականու-

⁷⁰ Տե՛ս Ս. Ա. Ա. Ա., Коммунизм и геополитика: Балканский рубеж, 1919-1938. М., 1997, էջ 27.

թյան անկյունաքարը ինչպես այրկովկասյան Կարածաշրջանում,
այնպես էլ թուրք-թաթարական աշխարհի հեծ: Հաշտության պայմա-
նագրի չորրորդ կետում, որը վերաբերում էր Հայաստանին, ասվում
է, «Ռուսաստանը կանի այն ամենը, ինչ-որ իրենից կախված է, որ-
պեսզի ապահովի իր զորքերի դուրս բերումը Արևելյան Անատոլիայի
նահանգներից («Արևմտյան Հայաստանից»-Լ.Շ.) և վերջիններիս
կանոնավոր վերադարձը Թուրքիային: Ռուսական զորքերը պետք է
անհապաղ դուրս բերվեն նաև Արդահանի, Կարսի և Բաթումի մար-
զերից: Ռուսաստանը չի միջամտի այդ մարզերի պետական-իրավա-
կան և միջազգային-իրավական նոր կազմակերպման գործին, այլ
այդ մարզերի բնակչությանը հնարավորություն կտա դրացի պե-
տությունների, մանավանդ Թուրքիայի համաձայնությամբ հաստա-
տել նոր կարգ (ստորագծումն իմն է -Լ.Շ.):»:

Բուն դաշնագրի տրամադրությունների կիրառությունը կարգա-
վորվում էր ռուս-թուրքական լրացուցիչ պայմանագրով (1918թ., մար-
տի 3, Բրեստ-Լիտովկս), որոնց միջև սահմանը վերադառնում էր
1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի շրջան: Սակայն, մի-
ջազգային իրադրության փոփոխությանը համընթաց, Համառուսա-
տանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեին նոյեմբերի 13-ի որոշ-
մամբ, նոյեմբերի 11-ին Գերմանիայի կողմից պարտությունը ճանաչե-
լուց 2 օր հետո, Բրեստ-Լիտովկսի պայմանագիրը պաշտոնապես
անվավեր ճանաչվեց: Նույն պայմանագիրը պաշտոնապես լուծար-
վեց նաև Վերսալի միջազգային պայմանագրով (հոդված 116, 1919թ.,
հունիսի 28): Համաձայն այդ հոդվածի՝ «Գերմանիան ճանաչում և
պարտավովում էր, մշտապես և անօտարելի կերպով, անկախությու-
նը այն տարածքների, որոնք մտնում էին նախկին Ռուսական կայս-
րության կազմի մեջ մինչև 1914թ. օգոստոսի 1-ը:

Ռուսաստանը, Հայաստանի մասով, մինչև 1921թ. Մոսկվայի
մարտի 16-ի դաշնագիր և այնուհետև, հարազատ մնաց Բրեստ-Լի-
տովկսի տրամադրությունների տաղին և ոգուն: Եվ այս ճանապար-
հին ստորագրեց ինչպես 1920թ. օգոստոսի 10-ի Ռուսաստան-Հա-

յատևան համաձայնությունը (որը չգործադրվեց), այնպես էլ 1920թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագիրը: Այս վերջինս եղավ միակ միջպետական փաստաթուղթը, որով կարգավորվում էին Հայաստան-Ռուսաստան փոխհարաբերությունները:

Հայաստան-Ռուսաստան քաղաքական հարաբերությունների բախտորոշ ժամանակաշրջանը

Երևանի համաձայնագիրը, որը հայտնի է որպես Դրո-Լեգրան պայմանագիր, ունի 8 կետեր, որոնցից առնվազն երեքի այժմեականությունը, ինչպես մեզ է թվում, հրատապ է նաև մեր օրերում Ռուսաստան-Հայաստան ռազմավարական գործընկերության համատեքստում: Տվյալ համաձայնագրի 1-ին կետն ասում է՝ «Հայաստանը հայտարարվում է անկախ Սոցիալիստական խորհրդային հանրապետություն», իսկ 3-րդը, ավելի կենսականը, ասում է՝ «Ռուսաստանի խորհրդային կառավարությունը ընդունում է, որ Հայաստանի Սոցիալիստական խորհրդային Հանրապետության տարածքի մեջ անվիճելի կերպով մտնում են՝ *Երևանի նահանգը իր բոլոր գավառներով, Կարսի նահանգի մի մասը*, որը զինվորական տեսակետից ապահովում է երկաթուղու տրիպպետությունը՝ Ջաջուտ կայարանից և Ղարաքա կայարանը, Գանձակ նահանգի Չանգեզուր գավառը և Ղազախ գավառի մի մասը օգոստոսի 10-ի համաձայնության սահմաններով և Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետության տակ էին գրեթե մինչև 1920թ. սեպտեմբերի 28-ը (ընդգծումներն իմն են. -Լ.Շ.)»:

Ինչպես ցույց տվեցին տարածաշրջանային և միջազգային իրադարձությունների հետագա զարգացումները՝ հայ ժողովրդի օրինական (կենսական) շահերի տորպեդահարումը Ռուսաստանի կողմից և Հայաստանի հաշվին թուրք-թաթարական ցեղասպանների (արմենոցիդ) և Վրաստանի հետ հարաբերությունների կարգավորումը, Բրեստ-Լիտվսկից սկսած, դարձավ նույն Ռուսաստանի ամրագրո-

ված և հետևողական երկրառազմավարական (զեոստրատեգիական) մաքսիմը (propositio maxima՝ բարձրագույն սկզբունք): Դրա վկայությունն է ոչ միայն համաձայնագրի առաջին կետի (անկախ պետականության) աստիճանական տարրալուծումը «եղբայրական ժողովուրդների ընտանիքում», այլ, որ կարևորն է, Հայաստանի տարածքի հետևողական կրճատումը հոգուտ նույն եղբայրական ժողովուրդների պետականությունների և Ռուսաստանի հետ նրանց բարեկամության: Այդ շարքի մեջ ամենաաղաղակողն ու արտառոցը, մասնավորապես, Երևանի նահանգի հետագա մասնատումն է, նրանից Նախիջևանի, Շարուր-Դարալագյազի գավառների (հոգուտ Ադրբեջանի) և Սուրմալուի գավառի (հոգուտ Թուրքիայի) օտարումն է, վերջինս նույնիսկ հակառակ Թուրքիայի «Ազգային Ուխտի» տարածքային ընդգրկման: Մինչդեռ, համաձայնագրի 7-րդ կետով Խ. Ռուսաստանը պարտավորվում էր Հայաստանում կենտրոնացնել «անհրաժեշտ զինվորական ուժեր» հանրապետության պաշտպանության համար:

Տասնամյակների հեռավորությունից, հենվելով պատմության վերականգնության սկզբունքի վրա, կարող ենք արձանագրել, որ Երևանյան պայմանագիրը.

ա) հետևողականորեն և նպատակադրված կերպով տվյալ պայմանագիրը, ամենակարևորը թերևս հայ-ռուսական հարաբերությունների ընդհանուր շրջային, անտեսվել է և դուրս մղվել երկու ժողովուրդների, երկու պետությունների իրավաքաղաքական հարաբերությունների շրջանակից.

բ) հասարակարգի համարժեք և սիմետրիկ փոփոխությունը երկու երկրներում էլ հիմք չէ նրանց միջև ժամանակին կնքված պայմանագրային պարտավորությունների անտեսման համար: Հայկական կողմը պարտավոր է սկսել համապատասխան իրավաքաղաքական գործընթաց ելակետին վերադառնալու հաստատակամ մտադրությամբ՝ վերականգնելով Դրո-Լեգրան պայմանագրում նշված ՀՀ տարածքային ամբողջականությունը.

գ) այլ պարագայում անլուրջ պետք է համարել ՌՖ-ՀՀ պայմա-

կազմակերպչական և համաձայնագրային պարտավորությունների ամբողջ փաթեթը:

Ուշագրավն այն է, որ հայրենի պատմաշինությունը կամ դիտավորությամբ, կամ տգիտորեն երևանի համաձայնագիրը հանիրավի անտեսել է և մոռացության մատնել, և չարախնդրությամբ, թերևս Մոսկվայի թելադրանքով, մեռելածին կրթությունը բնեռացել Ալեքսանդրապոլի 1920 թվականի դեկտեմբերի 3-ի Հայաստան-Թուրքիա պայմանագրի քննադատության վրա: Տարօրինակը Ափյուռքի կողմից հիմնախնդրի համարժեք ընկալումն է:

Անվիճելի է, որ արտաքին ուժերից Ռուսաստանն է վճռական դեր խաղացել հայ ժողովրդի նորագույն շրջանի ազգային-ազատագրական պայքարի և պետականության գործընթացում: Ընդ որում նրա քաղաքականությունը Հայկական հարցում միանշանակ և ուղղագիծ չի եղել: Ռուսաստանի համար Հայկական հարցը օժտված է եղել ենթակայության հատկանիշով: Այն գլխավորապես պայմանավորվել է՝ ա) Արևմուտք-Ռուսաստան և՛ բ) Նեղուցներ (այսօր՝ Իսթանբուլ) Ռուսաստան երկրներով: Այսպիսով, Հայկական հարցը, դառնալով ավելի ընդգրկուն Արևելյան հարցի մասը, ենթարկվել է հիշյալ երկու միտումներին՝ մեծապես տուժելով և անընդհատ փոխանցվելով մշուշոտ գալիքին: Այդ տեսանկյունից հատկանշական է հետևյալ տեմբերյան (1917թ.) Ռուսաստանի արտաքին քաղաքական կտրուկ շրջադարձը, երբ նա խորը ցնցումով հակադրվեց Արևմուտքին (Անտանտին) և կողմնորոշվեց դեպի իլլամական Արևելք՝ այնտեղ որոնելով «համաշխարհային հեղափոխության» տարածման ու կայսրության վերածննդի հնարավորությունը: Ռուսաստանի այդ շրջադարձը ոչ միայն աշխարհը բաժանեց հակադիր ու անհաշտ երկու ճամբարի, դանդաղեցրեց քաղաքակրթության առաջընթացն առհասարակ, այլև իր ողբերգական հետևանքներով մեծապես ազդեց հայոց բովանդակ կյանքի վրա: Նրա իրական զոհը դարձան ցեղասպա-

նության ծանր հետևանքները վերապրող հայ ժողովուրդն ու Հայաստանի նորանկախ հանրապետությունը: «Ռուսական հեղափոխությունը փոխեց Հայկական հարցի ողջ տեսանկյունը» (Հարություն Նիկոլյան):

Ակնթարթորեն ի չքը դարձան ժամանակավոր կառավարության հայանպաստ ու արդարացի որոշումները:

Դեպի մահմեդական Արևելք Ռուսաստանի ռազմավարական կողմնորոշումը առաջին անգամ ձևակերպվեց խորհրդային երկրա-ռազմավարական (գեոստրատեգիական) հիմնարար փաստաթղթերից մեկում՝ Լենինի ու Ստալինի ստորագրած «Ռուսաստանի և Արևելքի բոլոր աշխարհավոր մահմեդականներին» (20.11-3.12.1917թ.) դիմումում: Այնտեղ ուղղակի ասված էր. «Մենք հայտարարում ենք, որ Թուրքիայի բաժանման ու նրանից Հայաստանի խլման պայմանագիրը պարտավորված է ու ոչչացված: Հենց որ դադարեն ռազմական գործողությունները, կապահովվի հայերի՝ իրենց քաղաքական ճակատագիրը ազատորեն տնօրինելու իրավունքը» (ԽՍՀՄ արտաքին քաղաքականության փաստաթղթերը, Մ., 1957, հ.1, էջ 35 ռուս): Տրամաբանության առումով ներքին հակասականությամբ կառուցված փաստաթղթում առաջին նախադասությունը այլ բան չէր նշանակում, քան Թուրքիայի տարածքային ամբողջականության երաշխավորություն (Հայաստանի հետ քաղաքամամբ), իսկ հայերին վերապահվող մշուշոտ խոստումը Թուրքիային Ռուսաստանի գիրկը մղող հզոր խթան:

Այդ տրամադրությունների շրջանակում էլ 1921 թվականի մարտի 16-ին կնքվեց Ռուսաստանի և Թուրքիայի միջև պայմանագիրը, որը, հայկական կտրվածքով, արտառոց էր և՛ իր տեսակի մեջ (այն, փաստորեն, 1939թ. օգոստոսի 23-ի Ռիբենտրոպ-Մոլոտով գաղտնի պայմանագրի նախատիպն է՝ աշխարհի բաժանման առումով), և՛ ըստ էության: Կնքված լինելով Ռուսաստանի և Թուրքիայի միջև որպես «ազգերի եղբայրության ու ժողովուրդների ինքնորոշման սկզբունքից» բխած պայմանագիր՝ այն ոտնահարել է առաջին հերթին ազգերի ինքնորոշման իրավունքը: Ստորագրության պահին

«Հայաստանն անկախ պետություն էր (Հայաստանում գործում էր Ազգային Փրկության կոմիտեն, իսկ բոլշևիկները երկրից փախել էին Ադրբեջան) և իր ստորագրությունը չի դրել դաշնագրի տակ: Հայ պատվիրակությունը, ինչպես Բեռլինի կոնգրեսում 1878թ., չի մասնակցել բանակցություններին: Բնականաբար այդ դաշնագրով հայկական կողմի վրա որևէ պարտավորություն չի կարող դրվել: Նշանակում է... «Հայաստանի հողամասերին վերաբերող դաշնագրային պարտավորությունները չեն կարող իրավական պարտավորություններ դառնալ Հայաստանի համար: Եվ սա՛՛ անկախ այն իրողությունից, որ դաշնագիրը բախվում է ազգերի ինքնորոշման սկզբունքին»⁷¹: Դասական իմաստով այդ պայմանագիրը նույնիսկ միջազգային իրավունքի փաստաթուղթ չէ: Քանզի միջազգային իրավունքի տեսանկյունից ոչ լեգիտիմ երկու պետություններ՝ Խորհրդային Ռուսաստանն ու Քեմալական Թուրքիան, պայմանագիր կնքեցին, որով որոշեցին երրորդ պետության՝ Հայաստանի սահմանները:

Նույնը վերաբերում է Կարսի (1921թ. հոկտեմբերի 13) դաշնագրին, որն ուղղակիորեն բխում է Մոսկվայի դաշնագրի հարկադրանքից և գրեթե ամբողջապես կրկնում է իր նախորդին: Այն ինքնուրույնության հատկանիշով օժտված չէ: Կարսի դաշնագիրը «թե՛ ըստ էության, և թե՛ ձևականորեն՝ քաղաքական տեսակետից, միջազգային ըմբռնումի ինքնուրույն ակտ չէ, այլ կրկնում և հաստատում է Մոսկվայում 1921թ. մարտի 16-ին ՌԽՖՍՀ և Թուրքիայի միջև կնքված պայմանագիրը» (Քաղաքացիական Քոլոնիալ):

Սակայն, այդուհանդերձ Կարսի դաշնագրում առկա է որոշակի «անհետևողականություն»: Խոսքը վերաբերում է Լեզգրան-Դրո համաձայնությանը (1920թ. դեկտեմբերի 2) Հայաստանի անկապտելի մասը դիտված Նախիջևանին (3-րդ հոդված): «Նախիջևանի մարզը» Մոսկվայի դաշնագրով որպես «ինքնավար տարածք» դրվում է Ադրբեջանի խնամակալության տակ (нод протекторатом

Азербайджана)՝ պայմանով, որ նա իր խնամակալությունը չի զիջի «երրորդ պետության»⁷²: Այդ մասին է վկայում Նախիջևանի հարցով Մոսկվայի 1921թ. կոնֆերանսի արձանագրությունը, ինչպես նաև Մոսկվայի 1921թ. մարտի 21-ի խորհրդա-թուրքական քաղաքական հանձնաժողովի նիստի արձանագրությունը⁷³: Սակայն Կարսի դաշնագրում այս պայմանը «չքայքայ է», հավանաբար, Մոսկվայի ջանքերով և Թուրքիայի հարկադիր համաձայնությամբ: Քանզի նման «աննշան» ճշգրտումը, որը ռազմավարական նշանակություն ուներ (և ունի), թույլ տվեց Նախիջևանի խնդիրը վերածել Ռուսաստանի երկրաքաղաքական ազդեցության, ըստ էության՝ Կրեմլի ներքին հարցի՝ դրանով իսկ գայիքում բացառելով Թուրքիայի հնարավոր միջամտությունը Անդրկովկասի ներքին գործերին: «Այն, որ խորհրդային Ռուսաստանին էր վերապահված անդրկովկասյան երեք հանրապետությունների և Թուրքիայի միջև գոյություն ունեցող վիճելի հարցերի կարգավորումը,- գրում է ամերիկյան պատմաբան Թ.Է. Օ'Քոնորը,- նշանակում էր, որ Թուրքիան ընդունում է Անդրկովկասի նկատմամբ Խորհրդային վերահսկողությունը»⁷⁴:

Այո՛, Օ' Քոնորը ճիշտ է: Մոսկվան երկար ու համառ պայքարի շնորհիվ, նորից հայ ժողովրդի թիկունքում, մինչև 1921թ. մարտը լուծեց ազդեցության իր ոլորտ Անդրկովկասն ընդգրկելու խնդիրը: Այսպես, Նախիջևանին նվիրված՝ Մոսկվայի կոնֆերանսում (12 մարտ, 1921թ.) թուրքական պատվիրակությունը առաջարկում էր Նախիջևանի «իր խնամակալությունը» (կարգա՝ իր օկուպացրած Հայաստանի տարածքի մի մասը) փոխանցել Ադրբեջանին՝ պայմանով, որ վերջինս չի զիջի այդ խնամակալությունը «երրորդ երկրի»: Ռուսաստանն, իր հերթին, իբրև պատրվակ օգտագործելով Կարսում «ոչ մասնաեղական ժողովուրդների ջարդի» թուրքական օրինակը, առա-

⁷¹ Toriquian Shavarsh, *The Armenian Question and International Law*, Second Edition, Beirut, 1988, p. 59.

⁷² ԽՍՀՄ արտաքին քաղաքականության պատասխանատու, Մ., 1959, հ.3, էջ 723, ուս.:

⁷³ Տե՛ս Նախիջևանի երկրամասի նայարաքննման պատմությունից՝ 1920-1921թթ.- «Լրբեր շատարական գիտությունների» 1990, ք. 9, էջ 88, 90:

⁷⁴ Օ'Քոնորը Թ.Է., Գեորգի Միչերինը և խորհրդային արտաքին քաղաքականությունը 1918-1930, Մ., 1991, էջ 200, ուս.:

ջարկում էր «Նախիջևանի ինքնավարությունը պարզապես դնել Ադրբեջանի խնամակալության տակ»⁷⁵: Այսպիսով, եթե Մոսկվայի դաշնագրով հաղթել էր թուրք-ադրբեջանական տեսակետը, ապա Կարսի դաշնագրում Մոսկվան «սրբագրեց» թույլ տված սխալը: Դրանով իսկ սահմանախախտվեց Կարսի դաշնագրով Նախիջևանի ճակատագիրն ինքնուրույնաբար տնօրինելու թուրք-ադրբեջանական կողմի բաղձալի հնարավորությունը: Չէ որ Նախիջևանի «ինքնավար մարզը» Ադրբեջանի սոսկ պրոտեկտորատն է (խնամակալությունը), այսինքն՝ գաղութային կախվածության այն ձևը, երբ որևէ երկիր «վերահսկվում է և հովանավորվում մեկ ուրիշ ավելի զորեղ պետության կողմից»⁷⁶: Նախիջևանը Ադրբեջանի մասը չէ, այլ նրա այնպիսի «խնամակալությունը», ինչպիսին էր օրինակ, Պաղեստինը՝ Անգլիայի համար, Չեխիան և Մորավիան 1939-1945թթ. ֆաշիստական Գերմանիայի համար (որպես ֆաշիստական բռնազավթման օրինակներ): Պարզ է, որ քաղաքակրթության տեսանկյունից խնամակալությունը պատմական անախրոնիզմ է: Ավելին, այն ՄԱԿ-ի կանոնադրությամբ ամրագրված միջազգային հանրաճանաչ սկզբունքների և նորմերի, առաջին հերթին՝ ինքնորոշման իրավունքի խախտում է: Խնամակալությունը պահպանելով «ինքնուրույնության պատրանք», հակասում է 1960թ. ընդունված ՄԱԿ-ի՝ գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն տալու հռչակագրի, ինչպես նաև մի շարք միջազգային այլ փաստաթղթերի դրույթներին⁷⁷:

Հասկանալի է, որ Պաղեստինը երբեք Անգլիայի մասը չի եղել, ինչպես Չեխիան ու Մորավիան՝ ֆաշիստական Գերմանիայինը: Նույնպես և Նախիջևանը Ադրբեջանի մասը երբեք չի եղել և չէ: Ավելին, Նախիջևանը Նիկոլայ Ա կայսեր հրամանով ստեղծված (21 մարտ 1828թ.) «Հայկական մարզի» մի մասն է, Հայաստանի Առաջին

⁷⁵ Տե՛ս, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1990, ք. 9, էջ 88:

⁷⁶ Տե՛ս «Webster՝ Dictionary» Չոդված «Protectorate».

⁷⁷ Տե՛ս The International Law Dictionary by Robert L. Bledsoe and Boleslaw A. Boezek, California-England, 1987, էջ 43-44, տե՛ս նաև Շալչ 2., Միջազգային իրավունք, Մ., 1950, Կ. 1, էջ 125-126, ուսու:

Հանրապետության անբաժանելի ճանաչված տարածքը, որը սակայն՝ ա) այսօր նրանից բռնազավթված է (անեքսիայի ենթարկված), ընդ որում՝ խնամակալության բռնազավթումը միջազգային իրավունքով անթույլատելի է⁷⁸, իսկ բնիկ ժողովուրդը՝ հայությունը, բ) արտաքսված է (դեպորտացիայի ենթարկված) իր հայրենիքից: Բայց, ինչպես շեշտում էր Քր. Միքայելյանը, միևնույն հայրենիքի տարբեր մասերն իրարից բաժանող «աշխարհագրական ներկերը մշտական չեն»:

Թերևս, միջազգային իրավունքի շրջանակներում շատ անհարմարություններ «տեսնող» Ադրբեջանն ավելի է խրվում նույն իրավունքից բխող հակասությունների մեջ: Սահմանադրորեն իրեն հռչակելով ունիտար պետություն՝ նա «ստիպված» պահպանում է Նախիջևանի «ինքնավար» հանրապետության կարգավիճակը: Մի կողմից՝ հենվելով Մոսկվայի և Կարսի ոչ համարժեք դաշնագրերի հոդվածների վրա, մյուս կողմից՝ նավթի և նրա փոխադրման ուղիների (Բաքու-Ջեյհան) խնդրի քաղաքական շահարկումներով, նա փորձում է դուրս գալ միջազգային իրավունքի գործադրման շրջանակներից:

Սակայն, առկա «նյութական իրադրության» (Ն. Ադրեց) պայմանները թույլ են տալիս առաջ գնալ Հայկական հարցի լուծման ճանապարհով, նրա շրջանակներում՝ Նախիջևանի հայության հայրենի բնօրրան վերադարձի կազմակերպման ուղիով (մարդու անօտարելի իրավունքների շրջանակներում), իսկ որպես իրավաքաղաքական խնդիր՝ Կարսի դաշնագրով Նախիջևանին վերաբերող 5-րդ հոդվածի ու Նախիջևանի կարգավիճակի արձարժումով, թեկուզև ՀՀ կազմում «ինքնավար մարզի» նախատեսումով: Գիտակցել է պետք ռազմավարական երկրաքաղաքական այն տարածքը (Ղարաբաղ-Չանգեզուր-Նախիջևան), որը Հայաստանի հոշոտված մարմնի վրայով լենինյան Ռուսաստանը կապեց քեմալական Թուրքիային, այսօր վերածվում է «մահմեդական անձն անկալությունս աղեղը» (Չր. Բժե-

⁷⁸ Տե՛ս The Jack C. Plano, Roy Olton, The International Dictionary, Fourth Edition, 1988, Չոդված Protectorate.

զինակի) տարանջատող «սանիտարական պատնեշի»: Դրանով իսկ ստեղծվում են շահագրգիռ տերությունների ու ժողովուրդների տարածաշրջանային կայունության ամուր հիմքեր: Առկա են առաջ նայելու ու նրբորեն գործելու նախադրյալները, առաջին հերթին՝ միջազգային-իրավական, երկրաքաղաքական: Ժամանակաշրջանն օժտված է Այսրկովկասում և Մերձավոր Արևելքում տևական հավասարակշռության ստեղծման մեծ լիցքով:

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՌՈՒՍԻՅՈՑ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ Պ. ՉԻՉԵՐԻՆԻՆ

ՄՈՍԿՈՒ

Պարոն ժողովրդական կոմիսար,

Սովետական Ռուսիոյ քաղաքականութիւնը հանդէպ Հայաստանի արդարացնելու համար, դուք հրամայական պէտք էք զգացել Մուկուայից մինչեւ Հայաստան-Երեւան ու Ալեքսանդրապոլ անցնել եւ հայ ժողովրդի առջեւ ճառեր արտասանել: Պէտք է որ ձեր խղճի վրայ դուք շատ ծանր բեռ զգայիք, որպէսզի յանձն առնէիք այդ երկար ճամբորդութեան տաղտուկն ու նեղութիւնը՝ փշրուած, արհնչուայ և ձեր լուծի տակ կոռացած Հայաստանի առաջ արդարանալու համար:

Հակառակ ձեր հոչակած «բաց քաղաքանութեան» սկզբունքներին, դուք ձեր ճառերի մէջ ճգնել էք հին դպրոցի քաղաքագէտի վայել ճարպիկութեամբ հայկական ողբերգութեան պատասխանատուութիւնը ձեր իսկ զոհերի վրայ ձգել:

Ալեքսանդրապոլում արտասանած ձեր ճառը (*) ամբողջապէս ուղղուած էր Հ.Յ.Դաշնակցութեան դէմ: Այդ կուսակցութեան հինատուրց անդամ եմ ելիհապէս բաժանում եմ նրա հասարակական, քաղաքական եւ ազգային ծրագիրը: Եւ սակայն նրա պաշտպանութեան համար չէ, որ ես այսօր խօսք եմ առնում: Ես խօսում եմ ձեզ, որպէս հայ պետական մարդ, որպէս հայ ազգի պաշտօնական հաւատարմատար, որ քաջածանօթ է ձեր ակնարկած անցքերին: Ես ձեզ դիմում եմ ոչ որպէս Կոմունիստ կուսակցութեան մէկ գլխաւորին, այլ որպէս ռուս պետական մարդու, որոտիղ զծով յաջորդն է Լոբանով – Ռուստովսկու եւ Ստոլիպինի, որոնց քաղաքականութիւնն էք կիրարկում փոքր ազգերի վերաբերմամբ:

* Այս ճառը, որին ակնարկում է Ա. Անարոնցանը և որի առիթով գրված է նաև այս «Բաց նամակը», Չիչերինը արտասանել էր Ալեքսանդրապոլի գաւառական խորհուրդների Դ համագումարում 1925թ մարտի 12-ին: Չիչերինի այս ճառը տեսնել «Թորիդային Հայաստանի» մարտի 14-ի «Յուսաբերի» Ապրիլի 16-ի համարներում:

Եվ այսպես ՀՀ Պատուիրարկության նախագահն է, որ յանուն հայ ժողովրդի դիմում է Ռուսիոյ արտաքին գործոց նախարարին:

Դուք յայտարարում էք, որ ՀՅ.Դաշնակցութիւնը, ուզում էք ասել, հայ ազգային կառավարութիւնը Ալեքսանդրապոլի դաշնագրով «ոչ միայն զիջել է Կարսը եւ այլ շրջաններ, այլեւիրապէս թողել է Երեւանի շրջանը մի օտար պետութեան, որպէսզի կարողանայ յիշեալ պետութեան ուժերը օգտագործել իր ներքին թշնամիների դէմ»:

Շատ համարձակ է ձեր այս յայտարարութիւնը, պ. ժողովրդական կոմիսար:

Եթէ պարտուած Հայաստանը հարկադրուած եղաւ ընդունել 1920 թուի թիւրքերի պարտադրած խաղաղութեան տմարդի պայմանները, այդ միայն այն պատճառով, որ Թիւրքիան, որպէս ձեր դաշնակիցը, գործում էր մեր դէմ՝ հիմնուած ձեր գիտութրական ուժերի ու ձեր դիւանագ. ազդեցութեանը: Դուք չէք ասում ձեր ճառի մէջ, որ Ալեքսանդրապոլի դաշինքի բանակցութեանց ընթացքին ներկայ էր Սովետական Ռուսաստանը յանձին Բուրոյ Ադիանիի, որպէս ձեր ներկայացուցչի, որ գործում էր եմսօսում ձեր նաւունով: Դուք չէք ասում, որ հետագայում, նոյն տարուայ հոկտեմբեր ամսին, յիշեալ դաշնագիրը դուք ստորագրեցիք և հաստատեցիք:

Ո՛չ, պ. ժողովրդական կոմիսար, Ալեքսանդրապոլի դաշնագիրը, որ կործանեց Հայաստանն ու Հայ անկախութիւնը, ամբողջապէս ձեր գործն է: Իզուր կըվիտուեք այն վերագրել ՀՅ.Դաշնակցութեան կամ մեր ազգային կառավարութեան:

Ձեր պատասխանատուութիւնը սակայն սրանով չի վեջանում: Թում է, թե ձեզ համար Հայաստանի ու Սովետական Ռուսիոյ քաղաքական յարաբերութիւնները սկսում են 1920 թուին, Ալեքսանդրապոլի դաշնագրով: Այս դաշինքը սակայն հայկական ողբերգութեան վերջին գործողութիւնն է միայն: Չճգրիտ պատմութիւնը անցքերի անսխալ եւ ժամանակագրական դասավորութեան մէջ է, այնպէս չէ՛:

Արդ, հա՛րկ է ձեզ յիշեցնել, որ 1914ին Ռուսիան իր դաշնակիցներին հետ պատերազմի բռնուելով Թիւրքիոյ դէմ պայքարի մէջ քաշեց եւ

հայ ժողովրդին, խոստանալով Հայ Հայրենիքի ազատագրութիւնը: Անշուշտ առանց մեծ վախի չէր, որ հայ ժողովուրդը այդ արհնետ պայքարի մէջ նետուեց ռուս ազգի և դաշնակիցների կողքին: Նա ծանր երկիւղի մէջ էր, որ թիւրքական քաջածանօթ թարբարութիւնը թիւրք իշխանութեան տակ եղող իր եղբայրների վրայ կարող է անդարդառնալ: Սակայն յանուն իր հայրենիքի ազատագրութեան իդէալի, նա այդ գերագոյն վճռականութեան գնաց: Դուք գիտէք նոյնպէս, որ հայ ժողովրդի մէկ միլիոն ու կէս զաւակները զոհ գնացին, եւ Թիւրքաց Հայաստանը մոխիրի վերածուեց:

Եւ երբ այդ գնով ռուս եւ հայ բանակները Երզնկայից ու Տրապիզոնից դէն շարտելով թիւրքերին, կարողացան վերջապէս գրաւել մարտիրոսուած հայ գաւառները, երբ փախստական հայութիւնը շտապում էր վերադառնալ իր հայրենիքը, ճիշտ այդ ժամանակ, շնորհիւ ձեր բուշեփկեան պրոպագանդայի, ռուս զօրքը լքեց կովկասեան ճակատը, թողնելով հայկական փոքրիկ ուժասպառ զօրքը մեն – մենակ թիւրքերի առաջ: Ահա Սովետական Ռուսիոյ առաջին դարը Հայաստանի դէմ: Եվ այդ դախին եկաւ անջանալու Լենինի համբաւտոր դեկրետի խեղկատակութիւնը, որով ռուս զօրքը յետ քաշելով հանդերձ, Թիւրքական Հայաստանը հռչակում էր «ազատ ու անկախ»:

Եւ սհա այսպէս 1917ին այն վիթխարի պատերազմը, որ սկսել էր Ռուսաստանը Կովկասում, իր բոլոր ծանրութեամբ, շնորհիւ սովետական վարիչների, ընկնում էր հայ ժողովրդի ուսերին, եւ ռուս-թրքական պատերազմը դառնում էր հայ – թիւրքական պատերազմ:

Վիճակը ձգուած էր, հայ ժողովուրդը միմայն իր ուժերին ապափնած շարունակեց կռիւը յուսամիտ հերոսութեամբ: Կարելի էր սպասել, որ Ռուսիան, թէկուզ բուշեփկի դարձած, գէթ դիւանագիտօրէն կ'աջակցի Հայաստանին, որին լքել էր գիտութրապէս: Բայց եւ այս դէպքում դուք եւ ձեր կառավարութիւնը տմարդօրէն դաւեցիք մեզ: Այդ իսկ պատիւն դուք Բրետ-Լիտովկի դաշինքը կոնցիք, որով Թիւրքիային էիք թողնում ոչ միայն Թիւրքաց Հայաստանը, այլև Կովկասեան Հայաստանի մի խոշոր բաժինը-Կարսի, Արտահանի եւ Սուրմալիի

շրջանները: Ահա ձեզ երկրորդ դասը, պ. ժողովրդական կոմիսար: Եւ այս դաշինքի անունով էր, որ թիւրք հրամանատար Վեհիբ փաշան այնուհետեւ շարժուեց դէպի Հայաստան պահանջելով Կարս, Արտահան և Սուրմալու: Այդ, Ալեքսանդրապոլի դաշինքը, որ ձեր մեղադրական զվարտոր հիմքն է, կնքած է 1920ին, մինչև Բրեստ-Լիտովսկի դաշնագրութիւնը երկու տարի առաջ, 1918ին:

Ասացէք այժմ, մենք ենք, որ հայկական հողերը յաճնել ենք թիւրքերին, թէ՛ դուք, Սովետական Ռուսիոյ վարիչները:

Պատմութիւն ենք գրում, այնպէս չէ՛, պ. ժողովրդական կոմիսար, ճշգրիտ պատմութիւն, ուր ոչ մի երեակայութեան խաղ լինել չի կարող, քանի որ ամէնքի յիշողութեան մէջ թարմ է դեռ: Եւ երբ դուք արտասանում էիք ձեր համարձակ ճառը՝ մեղադրականը, հայ ազգային կառավարութեան դէմ՝ խորհեցի՞ք մէկ վայրկեան այս երկու թուականների մասին: Ոչ, պ. ժողովրդական կոմիսար, ոչ ոք եւ ոչինչ կարող է սոռացնել տալ աշխարհին, որ Բրեստ-Լիտովսկի խայտառակ ակտը ձեր գործն է, այսինքն բոլշեւիկների:

Եվ սակայն հակառակ ձեր դաւերի, հայազգը մի մարդու պէս ճառագաւ իր դարատոր թշնամու - թիւրքի դէմ եւ դէն շարտեց Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը եւ իր թոյլ ուժերով շարունակեց պայքարը:

Դուք չկայիք, երբ նա կոտմ էր Էրզրումի պատերի տակ, երբ իր արի զավակները ընկնում էին Կարսի խրամատների մէջ:

Դուք չկայիք, երբ նա ճակատում էր Երեւանի տակ եւ Ղարաբաղի սայի դաշտերում: Դուք ոչ միայն լքեցիք Հայաստանը այլ եւ Մոսկվայում սկսել էիք արդէն բարեկամական գրոյցներ թիւրքերի հետ, այնպիսի մարդկանց հետ, ինչպէս Էնվեր փաշան, որ դառնում էր ձեզ համար «ընկեր Էնվեր»:

Բոլոր այս գերագոյն պայքարին դուք բացակայ եղաք մինչեւ 1920թուի Օգոստոս 10-ճակատագրական թուականը, երբ շնորհիւ հայ ժողովրդի կորովինեւ իր արիութեան, շնորհիւ՝ Դաշնակիցների յաղթութեան, մարտիրոս ազգը ձեռք բերեց վերջապէս իր ազգային ազատութեան Charte-ը, Սեւրի Դաշնագիրը, որ ճանաչում էր ազատ, միացեալ

եւ անկախ Հայաստանը: Ահա այդ ժամանակ դուք վերստին յայտնուեցիք Կովկասում, քայց այս անգամ ձեր դաշնակից թիւրքերի հետ ձեռք ձեռքի տտաւ: Եվ դուք յայտնուեցիք որպէս Սեւրի Դաշնագրի, այսինքն հայ ժողովրդի ազատագրութեան թշնամի:

Ահա ձեր երրորդ դասը Հայաստանի դէմ:

Եվ այդ ժամանակից դուք, Թիւրքիայի հետ միաբան, չցաղարեցիք պայքարել Սեւրի Դաշնագրի եւ հայ ժողովրդի անկախութեան դէմ: Այս դաշնագիրը քակեցու եւ հայ ժողովրդին Ալեքսանդրապոլում թիւրքի առջեւ ծնկի բերելու համար էր, որ 1920ին, Բագուի արևելյան ժողովուրդների համաքատր կոնգրէից յետոյ, որին նախագահում էր Չինովիեւ, Քեադիմ Կարապետի փաշան ձեր ներշնչումով հեռագիր էր ստանում Բագուից Հայաստանի դէմ շարժուելու համար: Եվ թիւրքական արշավանքը յաջողցնելու համար դուք միաժամանակ ձեր պրոպագանդով բարոյալքեցիք հայ բանակը, թիւրքերին մատակարարեցիք զինտորական մասնագէտներ, ռազմամթերք ու պարէն: Ձեր զինտորական գործակալները հզորապէս աջակցեցին Կարսի անկման: Եվ մեր շարունակուող դիմադրութիւնը փշոբելու համար ձեր Կարմիր բանակը կոխեց մեր երկիրը հիսսիսից, այն ժամանակ, երբ թիւրք բանակը արշատում էր հարստիք: Ահա այս կրկնակ յարձակողականով, որ դուք սարքել էիք թիւրքերի հետ, դուք փողոտեցիք մեր հայրենիքը, պատճառ դառնալով Կարսի նահանգի հարիւր հազարատոր հայութեան կոտորածին ու փճացումին, և յաջողեցրիք Հայաստանի կործանումը յօգուտ թիւրքերի:

Ձեր արևելեան քաղաքանութեան յաջողութեան համար պէտք ունէիք թիւրք բարեկամութեան եւ այն ապահովելու համար դուք դժբախտ Հայաստանը քնմալական հորդաներին ճարակի տուիք:

Եւ այդ Հայաստանը իր ճակատագիրը կապել էր ռուս ազգի ճակատագրին եւ հայ արիւնը հոսել ու խառնվել էր ռուս արիւնին:

Ահա ձեր չորրորդ դասը Հայաստանի դէմ, պարուն ժողովրդական կոմիսար:

Այնուհետեւ դուք փորձեցիք խաբել հայ ժողովրդին «Հայաստանի

Սովետական «Անրապետութեան» կարիկատուայով: Եվ ինչպէս մի ժամանակ ցարական կառավարութիւնը Պետրոգրատից էր ուղարկում Հայաստան իր ոստիկաններին ու այլ պաշտօնէութիւնը, նոյնպէս եւ դուք Ռուսիոյ խորքերից մեր երկիրը թափեցիք ձեր գործակալներին, նոյնքան օտար հայ ժողովրդին, որքան եւ չարակամ:

Դուք բանտեր լցրիք մեր մտաւորականներով ու մեր մարտական երիտասարդներով, որոնց եւ կացնահար խողիտողէ տուիք:

Հայաստանում ձեր հաստատած ռեժիմը այն աստիճան դժընդակ էր, որ հայ ժողովուրդը, նոյնիսկ կիսաքաղց եւ արհեսաքամ անկարող եղաւ հանդուրժել եւ 1921 թուի Փետրվար 18ին ոտքի ելաւ ձեր դէմ և դուրս քշեց երկրից ձեր գործակալներին եւ ձեր բանակը: Ինչ փայլուն ապացոյց, որ մենք չենք կարող տանել ոչ ձեր ռեժիմը, ոչ ձեր դոկտրինը եւ ոչ ձեր բռնութիւնը: Բայց ձեր քաղաքականութիւնը չէր կարող հանդուրժել, որ փոքրիկ հեռուսական հայ ազգը, որին դուք շարունակէիք թիրջներին ճարակ, կարողանայ վերջապէս ապրել անկախ իր հայրենիքի մի փոքրիկ մասում, ճնշելու համար հայ ժողովրդի ապստամբութիւնը, դուք վերստին մեր արհեստիկ հեղեցիք մեր աշխարհը:

Այդ ձեր հինգերորդ դարը, պարոն ժողովրդական կոմիսար: Դուք խոհեմաբար լուրջեամբ էք ացնում այս փաստերի վրայից Ալեքսանդրապոլի ձեր ճաղի մէջ: Իմ պարտքն է սակայն այս բոլորը փոել աշխարհի առաջ յանուն արդարութեան, յանուն հայ ժողովրդի:

Այս բոլորը ես անձամբ ասել եմ Ճննովկայոմ 1922 թուին, արդար է, որ նոյնը յիշեցնեմ հայ ժողովրդին եւ կրկնեմ որապարակով – դուք ժխտում էք ձա՞ծուկ դիմանագիտութիւնը, այնպէս չէ՞, պարոն ժողովրդական կոմիսար:

Եզրակացութիւն: - Թիրջական բարբարոսութիւնը վերջացաւ իրենց պետութեան կործանումով և Հայաստանը արհեստիկ եւ կրակի միջով ձեռք բերեց Սեւրի Դաշնագիրը, որպէս գերագոյն հատուցում իր մարտիրոսութեան ու իր ազատագրական պայքարի: Միայն ձեր դաւերը հարկադրեցին հայ ազգին Ալեքսանդրապոլ գնալ:

Աշխարհը չի մոռանայ երբեք, որ թիրջներից յետոյ միմիայն դուք էք

անմիջական պատասխանատու հայ ժողովրդի կործանումին: Դուք էք, որ ի դերեւ հանեցիք հեռուսական եւ արհեստ ճիգերը հայ ժողովրդի: Պատմութեան դատաստանի առաջ դուք միշտ կը մնաք դաշնակից էսկերների, Թալէաթների, Քեմալների, որոնց հետ միաբան դուք կատարեցիք այս անորակելի գործը – սպանութիւնը հայ ժողովրդի:

Ի զուր կը փորձէք այսուհետեւ ճառերով ու դիմումներով մուրրեցնել աշխարհի հասարակաց կարծիքը եւ հայ ժողովրդի առողջ բնազդը: Ի զուր կը փորձեք այսուհետև հայութեան վստահութիւնը շահել: Նա, ով պատռել է Սեւրի Դաշնագիրը – հայ ժողովրդի ազատութեան Charte-ը յավիտենապէս թշնամի է հայ ազգին:

Վերջացնելով խօսքս, ես չեմ դիմում ձեր խղճմանքին, որովհետեւ ձեր վարդապետութիւնը ժխտում է ամէն մի անհատական մորայ եւ արդարութեան զգացում: Ես չեմ դիմում ձեզ յանուն միջազգային մորայի, որի հանդէպ ձեր քաղաքական մեթոդներով դուք միայն արհամարհանք ունէք: Չեմ յիշեցնում ձեզ ազգերի իրաւունքը իրենց բախտը տնօրինելու, քանի որ այսօր ձեր օրբքներին եւթակայ ժողովուրդները ամիկ դժբախտ եւ, քան որեւէ այլ ռեժիմի տակ: Ես կ' ասեմ միայն, որ հայ ժողովուրդը դաժանօրէն անիրաւուած ու անողորմօրէն չարչրկուած ձեր երեսից, այնուամենայնիւ չի կորցրել իր հաւատը դէպի ռուս մեծ ազգը: Նա ուզում է հաւատալ, որ վաղ թէ ուշ, իր մարտիրոսութիւնը անտարբեր չի թողի ռուս գիտակից զանգաձանները: Նա հաւատում է, որ հզօր հարեանը, որպէս առաջ եղբայր, կը մեկնի դէպի Հայաստան իր ամոքիչ բազուկը եւ, որ ռուս մեծ ազգի վերականգնումը իր անթիւ փորձութիւններից յետոյ զօրակից կը լինի եւ ազատ, անկախ և միացեալ Հայաստանի վերածնութեանը:

Ա.Ա.Խարոնյան

Փարիզ

26 Մայիս 1925

Տե՛ն Վրացյան Ս. «Կեանքի ուղիներով» հր. 2, Պեյրոպ,

Ով ցանկանում է հասկանալ Ռուսաստանի քաղաքականությունը Այսրկովկասում նաև մեր օրերում հայ-ադրբեջանական հարաբերությունների համարեքսպում, թող ուշադիր կարդա այս փաստաթուղթը:

**Ռուսաստանյան Ֆեդերացիայի Արտաքին գործերի
ժողովրդական կոմիսար Չիչերինի կարծիքը (29. VI. 1920.)
Լենինին Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի գրած
նամակ-հեռագրի (27. VI. 1920.) կապակցությամբ**

«Ոչ մեկը Ադրբեջանից ոչինչ չի խլում: Ղարաբաղը և Վիճիկ տեղանքները զբաղեցվում են ժամանակավորապես ռուսական խորհրդրային զորքերի կողմից, և դրանք մենք ժամանակավորապես չենք տա ո՛չ Հայաստանին, ո՛չ Ադրբեջանին: Դա չի կողոպտում ոչ մեկին, ոչ մյուսին: Յուրաքանչյուր այլ լուծում մեզ կղենր կեծ ճանապարհի վրա՝ քաջալերել մեկին և փնաս մյուսի: Ես այդ մասին շատ եմ խոսել III Ինտերնացիոնալի հայկական խմբի, այժմ այդտեղից եկած կոմունիստների հայկական ԱԿ-ի ներկայացուցիչների, էլիավայի, Կիրովի և մյուսների հետ: Մեր լուծումը միակ հնարավորն է: Ղարաբաղը բուն հայկական տարածք է, սակայն հայերի կոտորածներից հետո դաշտավայրերում բնակություն հաստատեցին թաթարները, իսկ լեռներում մնացին հայերը: Մենք այժմ այդ շրջանը չենք տա հայերին, որպեսզի չվիրավորենք թաթարներին: Սակայն մենք այն չենք տա թաթարներին, ինչը կլիներ խորապես սխալ քայլ, հակասող խաղաղարարների մեր անհրաժեշտ քաղաքականությանը: Սակայն Նարիմանովը ցանկանում է սիրաշահել Բաքվի թաթարների նվաճողական իսկությունները: Դա անթույլատրելի է: Սակայն Նարիմանովը առաջ է գնում, նա հակառակ է բուրժուական Վրաստանի և բուրժուական Հայաստանի հանդեպ մեր կոմպրոմիսի քաղաքականությանը: Սակայն Վրաստանի և Հայաստանի խորհրդայնացումը նրա համար է Կենտկոմի կողմից մերժվել, որովհետև գերազան-

ցում է մեր այժմյան ուժերը: Մենչևիկներն ու դաշնակները չեն հանձնվի առանց կատաղի մարտի: **Մենք ընտրել ենք նրանց աստիճանաբար քայքայման ճանապարհը, ինչն արդեն դրսևորվում է:** Իսկ Տրոցկին ինձ փնտվեց արևելյան քաղաքականությամբ հրապուրվելու համար: Կոմունիստների հայկական Կենտկոմի անդամները ասում են, որ մայիսի 1-ին Հայաստանում զանգվածների տրամադրությունը ամենախորհրդայինն էր՝ և այդ օրը ստացվեց Ղարաբաղի և Չանգեզուրի վերաբերյալ Ադրբեջանի վերջնագիրը՝ *անմիջապես ամեն ինչ փոխվեց*՝ անմիջապես դաշնակները պնդացան: Մուսուլմանական միտումների խրախուսման նարիմանովյան քաղաքականությունը, որին միանում է Օրջոնոկիձեի և Մոլիվանու հարձակողական քաղաքականությունը, տանում էր դաշնակների ուժեղացման, արյունալի բախումների, ճգնաժամերի սրացման: Այդտեղ Խալիլ փաշան մերոնց ասում էր, որ **եթե հայերը մեր ճանապարհին են, նրանց կարելի է կոտորել:** Այդ արյունալի սրացումներին հանգեցնում է մուսուլմանական տենչանքների խրախուսումը: Մեկ ելք կա՝ օբյեկտիվ երրորդի մեր դերը: **Կգա Վրաստանի և Հայաստանի խորհրդայնացման պահը, և այդ ժամանակ էլ այդ բոլորը կվերանա:**

Չիչերին՝ Լենինին (Ընդգծումները Չիչերինի):

«Գ: Այս «կարծիքից» անցել է ուղիղ 98 տարի. աշխարհի ապշած աչքերի առաջ կործանվել է բուշևիկյան բանդայի կողմից ստեղծված պետությունը, սակայն պահպանվում է նրա վատթարագույն ժառանգությունը՝ հայ-թուրքական հարաբերությունների ընդհանուր գծի մեջ: Կարծում ենք՝ ժամանակն է, որ Ռուսաստանը հրաժարվի պանթյուրքիզմի ծնունդ Ադրբեջան պետությանը հովանավորելու Ռուսաստանի ռազմավարական շահերից չբխող տեսակետից: Փոփոխվող գլոբալ իրականությունը պահանջում է նոր և մարդակերպ մոտեցում:

Ռուսի, մի ելք կա՝ *հրաժարվեք օբյեկտիվ երրորդի Ձեր սուբյեկտիվ դերից:*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

[ք. Երևան] 02.XII.1920 թ. ժամը 16⁰⁰

1920 թվականի դեկտեմբերի 2-ին, մի կողմից ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ ընկ.[Բ.]Լեգրանը ՌԿԿ ԿԿ-ի լիազորությամբ, ի դիմաց Ռուսաստանի Խորհրդային կառավարության, և մյուս կողմից ընկերներ Դրոն [Ռ.Կանայան] և Հ.Տերտերյանը՝ ի դիմաց Հայաստանի Հարապետության կառավարության՝ կնքեցին **համաձայնություն** հետևյալի մասին.

1. Հայաստանը հայտարարվում է անկախ սոցալիստական Խորհրդային Հանրապետություն:

2. Մինչև Հայաստանի խորհուրդների համագումարի հրավիրումը, կազմվում է ժամանակավոր ռազմաօդային կոմիտե, որին կանցնի բովանդակ իշխանությունը Հայաստանում:

3. Ռուսաստանի Խորհրդային կառավարությունն ընդունում է, որ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության հողերի մեջ անվիճելի կերպով մտնում են՝ *Երևանի նահանգն իր բոլոր գավառներով, Կարսի նահանգի մի մասը, որը գինվորական տեսանկյունից կապահովի երկաթուղու փրկապետությունը, Ջաջուռ կայարանից Արաքս կայարանը, Գանձակ նահանգի Չանգեզուր գավառը և Ղազախ գավառի մի մասը օգոստոսի 10-ի համաձայնության սահմաններում, և Թիֆլիս նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի փրկապետության տակ էին գտնվում մինչև 1920 թվականի սեպտեմբերի 28-ը* (ընդգծումներն իմն են-Լ.Շ.):

4. Հայկական բանակի հրամանատարական կազմը չի ենթարկվում պատասխանատվության այն գործերի համար, որ կատարել է բանակի շարքերում մինչև Հայաստանի խորհրդային իշխանության հայտարարումը:

5. Դաշնակցության և ուրիշ սոցիալիստական կուսակցությունների անդամները ոչ մի հավաճանքի չպիտի ենթարկվեն կուսակցութ

յան պատկանելու և Կոմունիստական Կուսակցության դեմ մղված կոիվներին մասնակցելու ու Խորհրդային Հայաստանի հայտարարությունից առաջ կատարված գործերի համար:

6. Ռազմաօդային կառավարության կոմիտեի մեջ մտնում են ինչպես անդամներ Կոմունիստական կուսակցության կողմից նշանակված և երկու անդամ ձախ դաշնակցականների խմբակից՝ համաձայնելով Կոմունիստական Կուսակցության հետ:

7. Ռուսաստանի Խորհրդային կառավարությունը միջոցներ է ձեռք առնում անմիջապես կենտրոնացնելու Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության պաշտպանության համար անհրաժեշտ զինվորական ուժեր:

8. Սույն համաձայնագիրը ստորագրելուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունը քաշվում է իշխանությունից: Իշխանությունը ժամանակավոր կերպով, մինչև Հեղափոխական Կոմիտեի գալը, ացնում է զորահրամանատարությանը, որի գլուխն է կանգնում Դրոն: ՌՍՖՍՀ-ի կողմից Հայաստանի զորահրամանատարության կից կոմիսար է նշանակվում ընկ.[Օ.] Սիլինը:

Պատրաստված է երկու օրինակ:

ՌՍՖՍՀ, լիազոր ներկայացուցիչ [Բ.]Լեգրան:

Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությամբ՝ Դրո և Հ. Տերտերյան:

1920 թ.դեկտեմբերի 2-ին ժամը 16-ին, նշված պայմանագրի հիման վրա, անկախ Հայաստանի Հանրապետությունը դադարեց գոյություն ունենալուց, երկրում իշխանությունը ժամանակավորապես հանձնվեց զորահրամանատարությանը Դրոյի [Ռ. Կանայան] գլխավորությամբ՝ ՌՍՖՍՀ-ից նշանակված կոմիսար [Օ.] Սիլինի մասնակցությամբ, մինչև Հայկեղկոմի Հայաստան գալը:

Իշխանությունից ՀՀ-ի կառավարության հրաժարման մասին

կազմվեց «Ակտ», որտեղ նշվեց «Նկատի ունենալով արտաքին հանգամանքների շնորհիվ երկրում ստեղծված կացությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր 1920 թվականի դեկտեմբերի 2-ի նիստում որոշեց՝ հրաժարվել իշխանությունից և հանձնել զինվորական և քաղաքացիական բովանդակ իշխանությունը զորաբանակի ընդհանուր հրամանատարին, որպես ի պաշտոնում նշանակել ազգնական նախարար Դրոյին»:

**ԴՊԿՏՈՐ ԵՐԿԱՆԴ ՖՐԱՆԳՅԱՆ,
ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ՈՐՈՆՄԱՆ
ՈՒՂԻՆԵՐՈՒՄ**

Առհասարակ պատմությունը,
առավել ևս մարդկային մտքի
զարգացման պատմությունը
միանգամայն ուսանելի և կրթիչ է:
...Ով զուրկ է!.../ պատմական հայացքից,
Նրա զաղափարները այս կամ այն չափով
մշուշային են, ինչպես և Նրա
գնահատությունը թերի, անճիշտ:

Ե. Ֆրանգյան

Այլևս վիճաբանության առարկա չի կարող նկատվել այն դրույթը, որ ազգային պետականության ստեղծումն ու առհասարակ Հայրենիքի վերածնունդը կայուն ազգային արժեքների հիմքի վրա, զուգորդված քաղաքակիրթ մարդկության, հատկապես մեր դարի երկրորդ կեսի բազմապիսի ձեռքբերումների հետ, նրանց, այո, համադրումով չի իրականանալու առանց Հայոց նորոքյա «Sturm und Drang» /«Փոթորիկ և Գրոհ»/-ի: Փաստ է Նաև, որ Հայոց Նոր ազատամարտին նախորդած շրջանում և նրա ընթացքում Հայ մտավորականությունը չհաշված հազվագյուտ քաջատությունները, չկարողացավ իր զգրոցից հանել ու սեփական ժողովրդի հոգևոր վերածննդի սեղանին դնել քիչ թե շատ արժեքավոր որևէ ստեղծագործություն, որը պատկաներ գրականությանը, արվեստին, փիլիսոփայությանը կամ հոգևոր մշակույթի այլ ոլորտին: Այդ իսկ պատճառով, մի պահ վերանայով ժամանակի և տեղի պարագայից, տեղին է վկայակոչել Սիմոն Վրացյանին. «Հայ կյանքը հարուստ չէ ճշմարիտ մտավորական ուժերով, մանավանդ գիտական-տեսական հարցերով զբաղվող անհատներով»:

Սակայն դա ամենևին էլ չի նշանակում, թե կորած է ամեն ինչ, և անհույս է գալիքը: Ամենևին: Տվյալ պարագայում այսօրվա տեսական պրպտումների դժվարին գործընթացին իր օգնությունն է բերում անցյալի հայ մտավորականությունը, ըստ էության մինչև վերջ ծառայելով հայ ժողովրդի բազմադարյան երթին, օրինակ ու մեկնակետ ծառայելով նոր սերնդին: Ազգային փիլիսոփայության բնագավառում այդ «սակավություններից մեկը» եՐՎԱՆԻ ԳՐԱՆԳՅԱՆՆ Է /1878-1928/, արհեստավարժ փիլիսոփան, փիլիսոփայական ավանդույթներով հարուստ Գերմանիայում մասնագիտացած դաշնակցական մտավորականն ու քաղաքական գործիչը, որը երկու տասնամյակից ավելի զբաղվել է փիլիսոփայական հետազոտություններով և, իրեն նվիրել հատկապես Հ.Յ. Դաշնակցության պատմափիլիսոփայության հիմնավորման շնորհակալ գործին և իրենից հետո թողել բարձրարժեք գործերով հարուստ ժառանգություն:

Եվ թեմատիկայի, և ժամանակային ընդգրկման առումով նրա ստեղծագործական գործունեությունը բաժանվում է երկու շրջանի՝ մինչդոկտորականի և հետդոկտորականի: Այն սահմանորոշվում է 1913-ին «Michailowsky als Philosoph und Soziolog» (Berlin, 1913) դոկտորական թեզի հաջող պաշտպանությամբ: Առաջին շրջանը բնորոշվում է հիմնականում ընդհանուր փիլիսոփայությանը նվիրված գործերով, իսկ երկրորդն ավելի «կոնկրետ» հետազոտություններով՝ նվիրված Հ.Յ. Դաշնակցության պատմափիլիսոփայության ու ազգային գաղափարախոսության հիմնախնդիրներին:

Անշուշտ, Ֆրանգյանի մտահորիզոնն ունեցող մտածողը պետք է ընդգրկեր և քննության նյութ դարձներ փիլիսոփայական գիտության ու ժամանակաշրջանի հարցերի լայն շրջանակ: Նա այդպես էլ վարվել է: Սակայն նրա ստեղծագործության լայնությունը, որ կարմիր թեյի նման անցնում է հետազոտությունից հետազոտություն, անընդհատ հղվվում ու հարստանում, պատմական ռեալիզմի ամբողջական համադրույթն է, նրա փիլիսոփայական հենքի՝ համադրական մոնիզմի ընդգրկումն վերլուծությունը: /«Ըստ համադրական մոնիզմի, չկա ոչ

զուտ կամային գործընթաց ինքնին, ոչ զգացումային, և ոչ էլ իմացական-մտային, այլ կա մի գործընթաց, որի մեջ ձուլված են, անլուծելի կերպով միացած են և սա, և երկրորդը, և երրորդը»/:

Այս խնդրով նա զբաղվել է ստեղծագործական կյանքի ողջ ընթացքում: Նա մեծ հաջողությամբ կարողանում է բացահայտել Հ.Յ. Դաշնակցության պատմափիլիսոփայական ընկալումը: Փորձում է մշակել «ընդհանուր, ընդգրկող տեսակետ համաշխարհային պատմության մասին՝հասկանալու համար նրա «ծագումը, ընթացքը և նրա վախճանը»՝ ձգտելով ունենալ հայեցակետ պատմության զարգացման վերաբերյալ, մշակել նրա հետազոտական մեթոդը: Նպատակը պարզ է ու գործնական. մտնել պատմական լարիքիթոսի մեջ, ըմբռնել նրա ընթացքը և ոգին, և միևնույն ժամանակ կարողանալ ողջ խորությամբ և լայնությամբ հասկանալ պատմության անցյալը ներկայի շնորհիվ և ընդհակառակը՝ երկուսն անցյալի միջոցով, ինչպես և կանխատեսել պատմական հեռանկարը, պատմության ապագա ընթացքը:

Առաջադրված հարցի լուծման համար Ֆրանգյանը հարցը դնում է ուղղակիորեն «Ո՞րն է պատմահասարակական զարգացման առաջ մոլիչ ուժը?»-«primum movens»-ը: Եվ՛ Նկատում է. մեկը պատմության գլխավոր ազդակը համարում է կրոնը, կրոնական զգացումը, երկրորդը՝ տնտեսությունը, տնտեսական շահը, երրորդը՝ ոստան, չորրորդը՝ ցեղային-ազգային բախումները, հինգերորդը՝ աշխարհագրական դիրքն ու պայմանները, վեցերորդը՝ հոգեբանությունը, հոգեկան ուժերը, յոթերորդը՝ «մեծ մարդիկ», ութերորդը՝ միտքը» և այլն, և այլն: «Սակայն մենք չենք ուզում, - նկատում է Ֆրանգյանը, - պատմությունը նեղ, միակողմանի կերպով դիտել և ըմբռնել»: Այդպիսի ուղղություններ են պատմական մատերիալիզմը և պատմական իդեալիզմը:

Բայց կա մի ուղղություն, որը «վեհորեն, բարձր է կանգնած և հեռու է միակողմանիությունից»: Նա պատմական գործընթացը դիտում է ամբողջական ընթացքի մեջ: Այդ ուղղությունն է պատմական ռեալիզմը /իրապաշտությունը/ կամ համադրական /սինթետիկ/ հայե-

ցողությունը: Նրա ելակետը և մեկնակետը հասարակական զարգացման այս կամ այն գործոնը, տարրը չէ, այլ բոլոր տարրերն իրենց ընդհանուր կապակցության, ընդհանուր զարգացման մեջ: Նա չի առանձնացնում այս կամ այն տարրը և չի տալիս նրանցից որևէ մեկին առաջնային նշանակություն: Այլ մոտեցում է պատմության լուսաբանությանը և մեկնությանը ոչ կանխակալ և նախորոշված միտումներով: Նա նկատի ունի պատմական գործընթացը նրա բաղկացուցիչ տարրերի ամբողջության մեջ: Նա շեշտում և ճանաչում է այդ բազմապիսի տարրերի «փրար պատկանելությունը և փոխազդեցությունը»: Նրանք գտնվում են հավերժական փոխգործության մեջ՝ փոխադարձաբար պայմանավորելով միմյանց: Ու հանդես են գալիս պատմական զարգացման մեջ միասին և առաջ մղիչ ուժ են:

Ավաճից, այնուհանդերձ, չպետք է հետևություն կատարել, թե պատմական ռեալիզմը չի տեսնում, որ տարբեր դարաշրջաններում, պատմական տարրեր պայմանների ազդեցությամբ այս կամ այն տարրը չի կարող որոշիչ դառնալ, գերակշիռ դեր ունենալ՝ որպես առաջ մղիչ ուժ, և երբեք հանդես չգալ միայնակ, քացարձակ գերակաշրջող դերով: Այդ իսկ պատճառով հնարավոր չէ ըմբռնել Մարքսի գլխավոր դրույթներից մեկը, թե հասարակության զարգացումը արտադրողական ուժերի իմանենտ /տերքին/ զարգացումն է: Իրողությունն այն է, որ ոչ թե տարրերից որևէ մեկն է պայմանավորում զարգացումը, այլ «բոլոր տարրերի գումարը, ամբողջությունը»: Նշանակում է, պատմական ռեալիզմի համար գոյություն չունեն տեսական, իրավական, գաղափարական երևույթներ առանձին-առանձին, այլ ընկերային-քաղաքական գործընթացներ, որոնց մեջ զուգորդվում են այդ տարրերը: Ուրեմն, պատմական հեղաշրջումների աղբյուրները ոչ թե ընկերային զարգացման որևէ տարրի մեջ են, այլ երկու կողմերի փոխազդեցության: Փոխազդեցություն իդեայի և տնտեսության, միջավայրի և անհատի, կոլեկտիվ և անհատական ձգտումների, քնագիտական-մեխանիկական և ընկերային-պատմական պատճառականությունների միջև և այլն:

Պատմական գործընթացի բազմապիսի և բազմաբնույթ տարրերը կարելի է բաժանել /դասակարգել/ երկու խմբի՝ տնտեսական և գաղափարաբանական: Առաջինի մեջ ընդգրկվում են այն բոլոր տարրերը, որոնք պատկանում են միջավայր-քնությանը՝ բնական պայմաններ, հողի հատկություն, կլիմա, աշխարհագրական դիրք, տնտեսություն և այլն: Երկրորդի մեջ բայն ամենը, ինչը կրում է մարդը՝ գիտակցության ձևեր, գաղափար, բարոյագիտություն, գիտություն, կրոն, փիլիսոփայություն, իրավունք, հոգեբանություն և այլն:

Այսպիսով, մարդը և միջավայրն են նախասկզբը: Նրանք միմյանց հետ այնպիսի հարաբերության մեջ են, ինչպիսի հարաբերության մեջ են ենթական /տուբյեկտը/ և առարկան /օբյեկտը /: Նրանք փոխադարձորեն լուսցնում են միմյանց՝ ենթակայի և առարկայի փմաստով: Այդ փոխհարաբերությունն է կազմում «փաստապես պատմահասարակական կյանքի բովանդակությունը»: Մարդը պատմության ենթակայական կողմն է, միջավայրը՝ առարկայականը: Նրանք կազմում են մեկ մեծություն: Նրանցից զուրս տեղի չի ունենում և չի կարող տեղի ունենալ պատմական գործընթաց: Եվ ինչպես որ ֆիզիկականը և հոգեկանը անխախտելիորեն միահյուսված են մարդ-անհատի մեջ, այնպես էլ հասարակական երևույթի, պատմական գործընթացի մեջ շարկապված են տնտեսական ու գաղափարական տարրերը՝ տնտեսությունը և գաղափարաբանությունը:

Մտածողության զարգացման ընթացքում նրանք՝ ի սկզբանե միացած տարրերը, բաժանվել են միմյանցից, գերազնահատվել է որևէ մեկը, և արհեստականորեն հիմնավորվել են, ըստ էության, նյութապաշտ /մատերիալիստական/ կամ գաղափարապաշտ /իդեալիստական/ պատմահայեցողությունները: Սակայն հասարակության տնտեսական և գաղափարական, մարդկանց ֆիզիկական ու հոգեկան կողմերը միմյանց հակադրված չեն, և «չի կարելի հակադրել»: Նրանք կազմում են մի ամբողջական գործընթաց, մի ներդաշնակ ամբողջություն և միասնական են իրենց հիմքում: Բաժանումը հեարավոր է in abstrakto /որպես վերացականություն/: Իսկ այդ «սկզբնա-

կան ու անբաժան դրությունը, այդ մեկ և էպես անբաժան մեծությունը կազմում է իրապաշտ պատմահայեցողության անկյունաքարը»։ Տարբերակումն առաջանում է Ֆրանգյանի խոսքերով՝ դիտելակերպից, ուսումնասիրության և «ոչ թե շարքերի» տեսանկյունից։ Օրինակ, եթե հասարակությունը քննվում է իր նյութական-տնտեսական կողմով և ուսումնասիրվում այդ տեսքով, կստացվի տնտեսություն, իսկ հասարակության վրա կնայվի ենթակայական-հոգեկան տեսակետով, ու կստացվի հոգեբանություն, բարոյականություն և այլն, կարճ՝ գաղափարաբանություն։

Հասարակական-պատմական երևույթի տնտեսական և գաղափարական «միջավայրը և եսը» կողմերը կամ տարրերը գտնվում են մշտական ֆունկցիոնալ /գործառնական/ կախման և հարաբերության մեջ։ Մեկի փոփոխությունը, նշանակում է, ուղեկցվում է մյուսի փոփոխությամբ։ Եթե փոխվում է a-ն անպայմանորեն փոխվում է նաև b-ն և ընդհակառակը՝ b-ի փոփոխությունը a-ի փոփոխության գործառույթն է և ընդհակառակը։ Ֆունկցիայի հասկացությունն ինքնին վերացնում է առաջնության հարցն առհասարակ։ «Պատմական գործընթացի տարրերից մեկը,- պնդում է Ֆրանգյանը,-պատճառ չէ, մյուսը հետևանք, մեկը գերադաս, մյուսը՝ ստորադաս, մեկը՝ ներգործական, մյուսը՝ կրավորական։ Նրանք համարժեք են և համագործ։ Փոխազդեցության մեջ նրանք ներկայացնում են միաժամանակ պատճառ և հետևանք, կրավորական և ներգործական... Այս երկ-շարք ուժերը միմյանց են պատկանում և միասնաբար ներգործում»։

Պատմական ռեալիզմի տեսակետին է Հ.Յ. Պաշևակցությունը, - գրում է Ֆրանգյանը,- նրա Հիմնադիր երրորդության Միտքը՝ Քրիստափոր Միքայելյանը։ Նա իր հիմնական ստեղծագործություններում՝ «Ամբոխային տրամաբանություն», «Պատմական չարիք», «Հայքողական հարաբերությունը», խնամքով վեր է հանում պատմական երևույթը պայմանավորող բոլոր գործոնները, վերլուծում և արժևորում է նրանցից յուրաքանչյուրի՝ երկրի մշակույթի, ազգային և պատմական առանձնահատկությունների, միջավայրի, կրոնի, տնտեսա-

կան շահերի և այլնի դերը։ Նա դիտում է գործընթացը, երևույթը իր ամբողջական ընթացքի մեջ։ Քրիստափորն իր ինչպես գործնական, այնպես էլ ստեղծագործական կյանքում ղեկավարվում էր պատմական ռեալիզմի կարևորագույն՝ ներգործության սկզբունքով։ Նա շեշտում էր, որ միշտ էլ ժողովրդի մեջ որոշ անհատներ, նրա գիտակից և իդեալներն ունեցող մասը փոքրամասնությունն է։ Կյանքի ասպարեզում նա է գործուն դեր խաղում, ուղղություն տալիս և գիտակցական պայքար մղում իդեալների իրականացման համար՝ իր ետևից տանելով տարերային մասին՝ «անդին» զանգվածին։

Քրիստափորը, փաստորեն, մերժում է մարքսյան «իրերի քնական ընթացքի» տեսակետը։ «Գործուն» անհատները չեն սպասում, որ միջավայրը միանգամայն հասունանա իրենց դավանած գաղափարների համար։ Այլպես «մեր քաղաքակրթությունը կլիներ քարե շրջանում», մեզ թողնելով մտաբերել միայն «արյան ու անհամար տանջանքների այն հսկայական հնոցները, որոնց միջից անցել են հեղափոխիչ գաղափարները»։ Պատահական չէ, որ որոշ պայմաններում մի քանի առաջընթաց մարդու հետապնդած իրերի ընթացքը դառնում է ընդհանուր կարգ, ընդհանուր սովորություն, ընդհանուր համոզումներ։ Նրանք խառնվում են իրերի տվյալ կարգի մեջ և իրենց ներգործուն մասնակցությամբ ձգում առաջ մղել պատմությունը, «ստեղծում են պատմություն»։

Ֆրանգյանն ուշադիր քննում և ընդգծում է իր դավանած աշխարհայացքի ճշմարտության ու բարոյականության սկզբունքները։ Հիշեցնում է, որ Քրիստափորին հետաքրքրում էր ոչ միայն ճշմարտությունը, այլև ոչ պակաս չափով արդարությունը։ «Պաշևակցության հիմնադիրների համար, - հիշեցնում է Ֆրանգյանը,- խիտ կարևոր է բարոյականն ու արդարությունը։ Միայն բարոյական մարդիկ, ըստ Քրիստափորի, կարող են լինել լավ հեղափոխական։ Հեղափոխական ասպարեզը շարլատանների համար չէ՝ ահա քրիստափորյան հատու վճիռը և «անառարկելի հրամայականը» /«կատեգորիկ իմպերատիվ»/։ Նաև Ֆրանգյանի աներեր համոզումը, առարկայական ու ենթակայական

«երկշարք ուժերը միմյանց են պատկանում և միասին ներգործում: Եվ այդ երկու ուժերի... դաշնադրության մեջ է տեսնում,— ընդգծում է նա,— Հ.Յ. Դաշնակցությունը գրավականը այն մեծ հաղթանակի, որ տանելու է աշխատավոր մարդկությունը թե՛ բնության կոյր ուժերի, և թե՛ հասարակության մեջ տիրող անարդարության դեմ»:

Պետք է նկատել, որ Ֆրանսեյանը պատմական ռեալիզմի համարյուրյեք մշակելիս սնվել է առաջին հերթին ազգային արմատներից: Նրա համար, կարելի է ասել, «սկզբնաղբյուր» է ծառայել հայ հասարակական միտքը, ավելի որոշակի Քր. Միջայեյանի պատմահասարակագիտական աշխարհայացքը: Նրա շատ գրվածքներում շրջակեղի իրողություն է Քրիստափորի «երկաթյա տրամաբանությունն» ու հետազոտության գիտական մեթոդը, որը նույն ինքը՝ իրապաշտ մեթոդն է: Այս և Քրիստափորին տրված բնութագրումներից որոշ ընդգծումներ. նա խորը ծանոթություն ու լայն ըմբռնում ուներ հասարակական երևույթների ու շարժումների մասին, գիտեր մեր հասարակական երևույթների և շարժումների մասին, գիտեր մեր անցյալ կյանքը, գիտեր մեր ժողովրդի հոգեբանությունը, մեր իրականության ու միջավայրի հատուկ պայմանները, նա իր կուսակցությանը հաղորդեց կենսունակություն, որը գնում է մշտապես հարսնուն կյանքի և իրականության հետ, ունկնդրում նրա անմիջական թելադրանքին ու այժմեական պահանջների ձայնին: Քր. Միջայեյանը իրապաշտ է, պատմական իրապաշտության ներկայացուցիչ է այլև: Այն մարդկանցից էր, որոնք աներկյուղ նայում են մերկ, թեկուզև երբեմն անողորմ իրականության աչքի մեջ:

Երկրորդ կենսատու աղբյուրը ռուս ենթակայական-հասարակագիտական դպրոցն է՝ Չերնիշևսկի, Լավրով, Միխայլովսկի, Կարեն, Չերնով, Լունկեվիչ և ուրիշներ, որոնք կարողացան ազատ մնալ միակողմանիությունից, մշակեցին ու առաջ մղեցին «բովանդակ պատմական գործընթացն ընդգրկող» նրա բոլոր բաղկացուցիչ-էական տարրերը համադրող մի ռեալիստական պատմահայեցողություն:

Երրորդը համաշխարհային, մասնավորապես, գերմանական փիլիսոփայական միտքն է, հատկապես՝ Մախը և Ավենարիուսը, Զի-

մելը, Լիդները /պատմական հոգեֆիզիզիզմ/, որոնք կանգնած են տարրերի փոխազդեցության տեսակետի վրա: Նրանց կարծիքով՝ ինչպես որ անհատի մեջ անքակտելի կերպով միացած են իրար, այնպես էլ հասարակական երևույթների, պատմական գործընթացի մեջ շարկապված են տնտեսական ու գաղափարաբանական տարրերը, գաղափարաբանությունն ու տնտեսությունը: Նրանց կողմից տնտեսագաղափարաբանական համընթացությունը /«պարալիզմ»/ կիրառվում է նաև հասարակագիտության մեջ:

Ֆրանսեյանն իր դավանած համարյուրյեքի շրջանակներում քննադատում է և՛ պատմական իդեալիզմը, և՛ պատմական մատերիալիզմը ու մերժում է դրանք: Առաջինի դեպքում նա նկատի ունի Կանտին, Ֆիխտեին, Ռանգեին և հատկապես գաղափարապաշտ ուղղության «ձայրահեղ և բյուրեղացած ձևի» համակարգը՝ Հեգելի պատմահայեցողությունը: Համակարգեր, որոնք պատմահասարակական զարգացման մեջ առաջնակարգ տեղ ու դեր են հատկացնում ոգուն, մտքին, ենթակայական ուժերին, գաղափարաբանությանը: Այստեղ պատմահասարակական, ինչպես նաև համաշխարհային քննադման շարժիչ ուժը բանականությունն է, գաղափարը, գիտելիքը: Երկրորդի դեպքում՝ տնտեսությունն է, արտադրողական ուժերը:

Ֆրանսեյանը չի կարողանում ընդունել մարքայան հիմնական ու միակողմանի տեսակետը, երբ նա հասարակությունը դիտում է նյութական-տնտեսական հայեցակարգով: Ժխտում է Մարքսի հիմնական եզրակացությունը՝ հասարակական կեցությունն է, որ որոշում է գիտակցությունը, որ հասարակական կեցությունն է՝ պայմանավորում «վերնաշենքը»: Եվ այն, որ Մարքսը նյութա-տնտեսական բովանդակությունը դնում է իդեալիստական՝ դիալեկտիկական ձևի մեջ, որի հետևանքով Մարքսի հասարակագիտական տեսությունը «հենց սկզբից ստանում է բնագանցական /մետաֆիզիկական/ բնույթ»: Գիտական փիլիսոփայության համար անընդունելի է, ըստ Ֆրանսեյանի, Մարքսի այն հիմնական պնդումը, թե հասարակության առաջ մղիչ ուժը դասակարգային ներհակությունն է, դասակարգային կոփո, որ

առանց հակադրության չկա առաջադիմություն: Թե ինչպես տևեցա-
կան ձևերը, այնպես էլ դասակարգերը հաջորդում են միմյանց դիա-
լեկտիկայի օրենքներով, որ ժողովուրդների պատմությունը դասակար-
գային կռվի պատմություն է: *Մինչդեռ պարմությունը նաև ազգային
կռվի պարմություն է: «Դասակարգային կռվի չափ, անգամ ավելի,-
շեշտում, ամփոփում է Ֆրանգյանը,- մարդկային պատմությունը
լցվում է ցեղերի, ազգերի կռվով: / ... Իսկ մեր օրերի մասին ավելորդ
ենք համարում խոսել, քանի որ երբեք ազգային բախումը, ազգերի
հակամարտությունը այնպես սուր և ցայտուն ձևի մեջ չէր արտահայտ-
վել, ինչպես այսօր», /Ե. Ֆրանգյան, Մեր փիլիսոփայական աշխարհա-
յացքը: Իրապաշտ փիլիսոփայություն, Փարիզ, 1929, էջ 155/:*

Ինչևէ:

Սահմանափակվեց շարադրվածով, այն հաստատման արձա-
նագրումով, որ այսօր քիչ է միայն եղած արժեքների վերհանումը:
Հայ ճշմարիտ մտավորականությունը պարտավոր է նախորդ սերնդի
ձեռքբերումներն առաջ մղել ու հասցնել նոր քարձուկների: Անիրա-
ժեշտ է դասական կատարելության հասցնել ազգային գաղափարա-
բանությունն ու այն պաշտպանել օտար խորշակների քայքայիչ ազ-
դեցությունից այնպես և այնպիսի հետևողականությամբ, ինչպես հայ
գրականն է պաշտպանում այսօր իր ՀՈՂ ՀԱՅՐԵՆԻՆ:

ԼԵՎՈՆ ՇԻՐԻՆՅԱՆ

**Փորձել ենք սույնով ներկայացնել դոկտոր Երվանդ
Ֆրանգյանի հարուստ տեսական ժառանգության համահավաք
մատենագիտությունը.**

I. Հայագիտություն և հայրենագիտություն

• *Արրպարական. Պատկերագրող ժողովածու, Թիֆլիս, 1905,
296 էջ:*

• *Քրիստափոր Միրայեյան. նրա կյանքը և աշխարհայեցողույթ-
յունը, Բագու, 1917, 56 էջ:*

• *Հայ միպոթը. Վանի իմաստասերը. Խրիմյան Հայրիկ, Թեհրան,
1919, 48 էջ:*

• *Հայ հասարակական միպոթը. Խաչատուր Աբովյան, Ստեփա-
նոս Նազարյան, Միքայել Նալբանդյան, Ռափայել Պատկան-
յան, Խրիմյան Հայրիկ, Գահիրե, 1928, 238 էջ:*

• *Հայ միպոթը. Գիրք 1-2: Գիրք 2. Խրիմյան Հայրիկ, Գահիրե,
1925, 55 էջ:*

II. Փիլիսոփայություն

• *Փիլիսոփայական նամակներ.- «Գործ» (լրագիր), 1908, հոկ-
տեմբեր 3,7,10, նոյեմբեր 4:*

• *Հրեստը Հեկկեյի մոնիստրական փիլիսոփայությունը, նրա
ծննդյան 75 ամյակի առթիվ, 1834-1909. - «Գործ» (լրագիր),
1909, մարտ 24, 25:*

• *Ընպիրիոկրիփցիզմի հիմնական դրույթների շուրջը, Էրեստ
Մախի ծննդյան 70-ամյակի առթիվ. - «Վրակ» (լրագիր), 1908,
ապրիլ 26,29,30, մայիս 2:*

• *Կյանք և փիլիսոփայություն. Վերջին փիլիսոփայական ուղ-
ղությունը (Պրագմատիզմ).- «Նոր Հոսանք» (ամսագիր), 1913, N
1, էջ 159-166:*

• *Հունական փիլիսոփայություն. Փիլիսոփայության պարմույթ-
յան ըմբռնումը.- «Նոր Հոսանք», N 2, էջ 373 - 386:*

• *Հունական փիլիսոփայություն. Աթենական փիլիսոփայույթու-
նը (Սոկրատես, Պլատոն).- «Նոր Հոսանք», N 3, էջ 580 - 594:*

• *Հունական փիլիսոփայություն. Արիստոտել, Հելենական կամ
հեպարիստոտելյան փիլիսոփայություն,Ստրոյկներ, Էպիկուրյան
դպրոց, սկեպտիկ փիլիսոփայություն.- «Նոր Հոսանք»,1913, N 4-
5, էջ 813 - 840:*

- Քննադատական փիլիսոփայություն. *Ներածություն, Լոկկ.* - «Նոր Հոսանք», 1913, N 7-8, էջ 1254-1268:
- Քննադատական փիլիսոփայություն. *Հյուսիս փիլիսոփայությունը.* - «Նոր Հոսանք», 1914, N 2, էջ 237-249:
- Քննադատական փիլիսոփայություն. *Կանտի կյանքը և անծնավորությունը.* «Նոր Հոսանք», 1914, N 4, էջ 582-593:
- Քննադատական փիլիսոփայություն. *Կանտի քննադատական պրոբլեմը և քննադատական մեթոդը.* - «Նոր Հոսանք», 1914, N 7-8, էջ 1142-1154:
- *Էրեստ Մախի փիլիսոփայությունը,* նրա մահվան առթիվ. - «Գործ» (ամսագիր), 1917, N 1, էջ 66-85:
- *Ի՞նչ է փիլիսոփայությունը.* - *Միտք:* Ձուտ գիտական և փիլիսոփայական ժողովածու: Խմբագիր և հրատ. Ե. Ֆրանգյան, Եր., 1910, էջ 7-20:
- *Պարմափիլիսոփայություն.* Գիտական - փիլիսոփայական էտյուդ.- *Միտք:* Ձուտ գիտական և փիլիսոփայական ժողովածու, էջ 21-86:
- *Ֆ. Նիցշե և նրա փիլիսոփայությունը,* նրա մահվան 10-ամյակի առթիվ, 1900-1910, Թիֆլիս, 1910, 96 էջ:
- *Պեսնիզմի փիլիսոփան.* Շոպենհաուերի մահվան 50-ամյակի առթիվ, 1860-1910, Եր., 1911, 160 էջ:
- Ն. Կ. Միխայլովսկին որպես սոցիոլոգ-փիլիսոփա, Եր., 1911, 207 էջ:
- Michailowsky als Soziologe and Philosoph, Berlin, 1913:
- *Հունական փիլիսոփայություն,* Թիֆլիս, 1913, 85 էջ:
- *Հասարակագիտական էպյուդներ,* Հ. Յ. Դաշնակցության սոցիալ-փիլիսոփայական աշխարհայեցողության հիմնավորման շուրջը, Բագու, 1917, 104 էջ:
- *Մեր փիլիսոփայական աշխարհայացքը, Իրապաշտ փիլիսոփայություն,* Հ. Յ. Դաշնակցության փիլիսոփայական աշխարհայացքի հիմնավորման փորձ, Փարիզ, 1929, 160 էջ:

- *Փիլիսոփայության պարմություն.* Հ. Ի. Հնաղարյան փիլիսոփայության պատմություն, 300 էջ (անտիպ):
- *Ֆրանգյան Ե., Գերմաներեն-հայերեն բառարան, Թիֆլիս, 1913, 400 էջ:*